

6-2.

գեղաս սարսաւ

UnSart



1935 Պետքան



891.99  
4-27




3188

891.99

U-27

cur

19 NOV 2011



29.07.2013

53927  
8813

Կազմի, Ժողովը, անվանաբերքը յեվ նեղինակի պարտ  
հեն նկ. Շ, Հ ո վ ն ա ն ն ի ս չ ո ւ ն ի  
Պատ. խմբ. Ռ. Ա ր ա լ ա ն  
Մրգարիչ Ա. Շ ա ն բ ա զ լ ա ն

Գ ե ս հ ր ա տ ի ս պ ա ր ա ն  
Գլամիլս, 101 Պատմեր 274  
Հրատ. 3276, 8 ի ր ա ժ 30.00



4692  
41





Գիշած Անդրանիկ

Սյս ճերմակ թղթի վրա  
Դրում եմ իմ յերգերը.  
Թողնում եմ նրա վրա  
Իմ կյանքի նուրբ մի թելու  
Յերբ կարդաս այս տողերը  
Իմ սիրաց զգա քո գեմ.  
Դիացիր, վոր ել չկա նա,  
Փոխվել ե վաղուց արդեն.

ՅԵՐԿՐԻ ՅԵՐԳԵՐ



Պարերիդ յերգը յերգեմ,  
Թթ գարունը վառ,  
Վասիող լույսերդ պայծառ  
Գովեմ ու յերգեմ,  
Թթ խանդավառ իմ հոգու  
Հույզերը վարար,  
Վարոնք նոր թափ են առիշտ  
Իմ յերկրի համար:

Յերկիր, քեզ եմ յերգում յես,  
Արշալույսը քո,  
Պայծառ գեմքդ լուսերես,  
Ենս այս յերեկո.  
Քո դեմ բացվել ե գարուն,  
Ժամում են վարդեր,  
Քո դեմ ջրեր վարարուն,  
Ու հասուն արտեր:

Ուզում եմ վոր գու լինես  
Աննկուն, համառ,  
Ու յես ցմահ յերգեմ քեզ,  
Որերըդ պայծառ,  
Ու վարդերիդ յերանգով  
Յերգերս ներկեմ,  
Սրտիս թափով ու հանգով  
Յերգեմ ու յերգեմ:

1980

ԲԱԼԱԴ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

1

Հազար շեփոր հնչեն թող  
Այս առավոտ,  
Հազար թմբուկ խփեն թող  
Այս առավոտ.  
Լույսի հեղեղ, լույսի տոն ե,  
Խնդություն.  
Հազար շեփոր հնչեն թող  
Այս առավոտ

Ո՞վ ե ծնել  
Շողշողուն այս պատանին,  
Լուսագես ու հրաչյա  
Շողշողուն այս պատանին  
Խարսյաշ վարսերը փոել,  
Լույս ե տվել խավարին,  
Հույս ե տվել սրտերին  
Շողշողուն այս պատանին

Տեսեք թովչանքը նրա՝  
Հենց նոր ծաղկած նշի ծառ,  
Տեսեք հայացքը նրա՝  
Արեգակի պես պայծառ,  
Տեսեք վարսերը նրա՝  
Ճառագայթի շեկ խուրձեր,  
Լուսե աչքերի վրա  
Լուրթ յերկինքն ե կռացել

Հազար շեփոր հնչեն թող  
Այս առավոտ,  
Հազար թմբուկ խփեն թող  
Այս առավոտ.  
Լույսի հեղեղ, լույսի տոն ե,  
Խնդություն.  
Հազար շեփոր հնչեն թող  
Այս առավոտ

2

Կյանք ենք տվել մենք նրան  
Արյունով ու քատինքով,  
Յեկ բաց գաշտերի վրա,  
Յեկ յերկաթի ասլի քով.  
Համառ կոխի ենք մղել  
Տարերքի գեմ ահավոր,  
Յեկ միշտ հազթող ենք յեւել,  
Մեծ յեռանգով ու յերգով.

Տուփ քարերից շինել ենք  
Շենքեր՝ մարմինը նրա,  
Յերակների պես արյան  
Մենք ջրանցքներ ենք շինել.  
Հետո սիրոց հրարորը՝  
Ելեքտրական մեծ կայտն,  
Վոր բարախում ե հիմա  
Ամեն սրտում, ամեն տան

Յեկ պղնձե լարերով  
Ցանց ենք շինել ներվերի,  
Լուսեղ լամպեր ենք կախել  
Վորպես աչքերը նրա,  
Վոր վառվում են տների  
Ու մեծ սյուների վրա՝

Այդ բոլորը կառուցող  
Մարգկանց անունի նման

Գործարանները հսկա,  
Առողջ թոքերի նման,  
Գործընել են ամեն որ  
Շնչառությունը նրա,  
Յեվ նա գարձել ե հզոր,  
Յեվ նա գարձել ե խրոխա,  
Յեվ աճել ե մեղ հետ նու  
Արեի տակ հրարորդ

Ամեն գարուն ու մայիս  
Մեր ցորենի գաշտերից,  
Թարմ կանաչից ու վարդից  
Հագուստներ ենք հազգրել,  
Յեվ փայտայել ենք նրան  
Վասկի հույսերի նման,  
Յեվ անունը դրել ենք  
Խորհրդային Հայաստան

3

Մեր գրկանքով ու կյանքով,  
Աբյունով ես աճել դու,  
Մեր պայքարով ու կամքով,  
Հույսերով ես աճել դու.  
Խորհրդային Հայաստան,  
Խորհրդային Հայաստան,  
Այս վառ արել վկա՝  
Մեր հեքով ես աճել դու.

Վոր լինի մեծ այգարաց,  
Կառուցում ու հաղթանակ,  
Վոր սերունդների դիմաց

Մենք ամոթով չմնանք.  
Վոր ամեն մի տաշած քար  
Ժպտա նրանց, յերբ վոր գան,  
Վոր դու լինես միշտ սկայծառ,  
Խորհրդային Հայաստան...

\* \* \*

Հազար շեփոր հնչեն թող  
Այս առավոտ,  
Հազար թմրուկ խփեն թող  
Այս առավոտ  
Լույսի հեղեղ, լույսի տոն ե,  
Խնդություն,  
Հազար շեփոր հնչեն թող  
Այս առավոտ...

1930

ԺԱՄԱՑՈՒՅՑ

1

Ժամացույցը բարախում ե,  
Հա բախում ե մի մեքենա,  
Վոր ընդհանուր վազքից յերրեք  
Մեր յերկիրը յետ չմնաւ

Ամեն զարկը քայլ ե մի մեծ  
Իմ յերկը գալիքի վառ,  
Մանկան պայծառ ծիծաղի պես  
Լուսապայծառ, լուսապայծառ...

Ու ձորերից խուլ ու հեռու,  
Խոցված կրծքից հսկա լեռան,  
Հոսում են գեռ հաղար առու,  
Ու քրքջում միաբերանս

Ժամացույցը բարախում ե,  
Հա բախում ե մի մեքենա,  
Վոր ընդհանուր վազքից յերրեք  
Մեր յերկիրը յետ չմնաւ

2

Ու բյուր ալիք, առու վարար,  
Մերթ կարկաչուն, մերթ փրփըրած  
Մեր գաշտերում բռնել են պար,  
Հա կանչում են, քաշում իրար

Դեպի դեմի ձորը մոտիկ,  
Հա վազում են թափով արագ,  
Իրար գրկած անթիվ ալիք,  
Վոր հյուղերում վառեն «ճրագ».

Յեվ ջրերի այդ կարկաչին  
Յերգն ե հյուսվում անփնտերի,  
Վոր թառել են ձորի լանջին,  
Բոռնցքի տակ բանվորներին

Ու վորպես մի յերկաթե սիրտ  
Բարախում ե մի մեքենա,  
Վոր հաղթական այս որերում  
Մեր յերկիրը յետ չըմնա ..

3

Լարերը բյուր՝ արյան յերակ,  
Կլանում են անկուշտ, ագահ  
Յեվ տանում են գյուղ ու քաղաք  
Ալիքների ուժը հսկա

Սպասում ե այնտեղ մթնում  
Կույր աչքի պես գյուղը խավար,  
Արեն արդեն մայր ե մտնում,  
Լար, շուտ լույս տար գյուղի համար

Յեվ քաղաքում հսկայաշունչ  
Գործարաններն են հանդում,  
Այդ ուժի տակ հաղար անիվ  
Ծիծաղում են, խնդում, թնդում

Այդ ուժի տակ բարախում են,  
Հա բախում են բյուր մեքենա,  
Վոր ընդհանուր վազքից յերրեք  
Մեր յերկիրը յետ չըմնաւ

1927

Բանաստեղծություններ—2

17



## ՅԵՐԿԱԹԱԼԱՐԻ ՅԵՐԳԸ

1

Յելա փողոց մի իրիկուն,  
Յեվ քամի յեր, և ձյուն, և թին,  
Յերբ արել չկար արդեն,  
Յելա փողոց մի իրիկուն:  
  
Տեսա մարդիկ, վորոնք անցան,  
Յեվ լույսերը եր քաղաքի,  
Լուցի մեղմ նվազի ձայն  
Քաղցրակարկաչ թավ ջութակի:

Մի սմիչով դառնում եր հար,  
Յեվ հնչում եր մի յեղանակ,  
— Դու յետ յերգում, յերկաթալնը,  
Այս ցուրտ քամու մատների տակ:  
  
— Յետ եմ յերգում, լսում ես ինձ,  
Հուզմում եքեղ յերգըս արդյոք,  
— Յերկաթալնը, յերգիր նորից,  
Այդպէս քաղցր ու սրտի մոտ:

2

... Ու մինչի լույս լսեցի յետ  
Յերկաթաձայն յերգը նըա,  
Հափշտակված մի մանկան ոլես՝  
Գլուխս հենած սյունի վըս:

Նվազում եր մի թավ ջութակ,  
Մի հուզական յերգ եր ասում,  
Պատճում եր, վոր այդ յերգի տակ  
Ինըը հազար սիրտ ե հուզում:

— Այդ յերգի տակ — ասում եր նա,  
Մի խենթ թափով ու անզագար  
Անիվներ են դառնում հիմա,  
Վորպես հլու կամակատար:

Մի սմիչով դառնում եր հար,  
Յեվ հնչում եր մի յեղանակ,  
— Դու յետ յերգում, յերկաթալնը,  
Այս ցուրտ քամու մատների տակ:

3

— Տես, խփում ե այնտեղ մի սիրտ,  
Ուժի հսկա մի մեքենա.  
Յետ այդ ուժի մասն եմ վախտ,  
Վոր ձգվել եմ սյունի վըս:

Յետ գնում եմ հեռնե, հեռնե,  
Յեվ գործարան, և հանք, և առուն  
Վարպես ուժի մեծ մի առուն  
Կյանք եմ տալիս նրանց հոգուն:

Բայց իշխում ե ինձ վրա նա,  
Վորի զիմաց չնչին եմ յետ,  
Քրտինք թափող մարդը ահա,  
Վոր հզոր և արեի պետ:

Նա յե հյուսել աշխարհն այս մեծ,  
Գլուխել ե զարեր, զարեր,  
Հիմա կանգնած, հաղթողի պետ  
Հազար հույսի ջահ և վառել...

Այլպես յերգեց նա մինչև լույս  
Յերկաթաձայն յերզը իրա,  
Վոր թափանցեց խորքը հոգուս,  
Արևն ինչպես ծովի վրա

Յեվ բարձրացավ իմ դեմ նորեն  
Յերկիրն իմ վառ, լուսապսակ,  
Յեվ արեց պայծառորեն,  
Վոր պահվել եր լեռների տակ:

Դարձավ նորից կյանքը յեռուն,  
Յեվ վազք՝ գեղի մի ապագա,  
Մի լուսեղեն պայծառ գարուն,  
Վոր պիտի գա, վոր պիտի գա.

Ու լսվում ե գեռ անդադար,  
Նվազում ե մի թավ ջութակ,  
— Դնե յես, դնե յես, յերկաթալար,  
Վոր յերգում ես իմ կրծքի տակ:

1980

20

### Պատութազուն Գրաւ ԺաՅոն Վրս

Այստեղ գետն ե խշում ահա,  
Այստեղ ձոր ե, վայրի, քարոտ,  
Ու ժայռերի սրտում հիմա  
Ուժնակի ահեղ վորոտ:

— Իջիր, քլունգ, բարձրացիր, բահ,  
Քրտինքը թող թափի, հոսի,  
Մենք այս ձորում հիմա անահ՝  
Կյանք ենք տալիս Զորագեսին:

Վորոտում ե յերզը այսպես,  
Այս խուլ ձորում վայրի ու խենթ,  
Յեվ կարսուով, սկրով առես՝  
Սիրտս ե խոսում մի ժայռի հետ:

Կանգնել ե նա գեմ հանդիման  
Ու հայացքը դեմքիս հանել,  
Թվում ե թե անցան հիմա՝  
Գլորվեցին դարեր, դարեր...

Թվում ե թե կանգնել եմ յես  
Դեմք մի հին հուշաբանի,  
Ու գիտնական մեծ Մարրի պես  
Սիրտն եմ կարդում այդ ժեռ քարին:

21

Հիշում եմ յես պատմությունը՝  
Պատմությունը այն հին դարի,  
Յեվ հրեշտակ մի թագավորի  
Գիրք՝ գրված մի ժեռ քարի.

— Յես — զբել եր քարի վրա —  
Թագավորս այս ինչ յերկրի,  
Տիրելով այս զահին՝ ահա  
Այսքան մարդու վեցըրի գերի.

Գլխատեցի այսքան մարդու,  
Տիկ հանեցի նրանց կաշուց,  
Յեվ յերկիրն այս ավերելով՝  
Վերածեցի մոխրի, փոշու...

..Ու անցել ե ժամանակը,  
Յեվ սահել են դարեր, դարեր,  
Վոր բորենու լեզվի նման  
Լիզել են բյուր արնոտ քարեր.

Հիմա կարծես կանգնել եմ յես  
Դեմք մի հին հուշարձանի,  
Ու գիտնական մեծ Մարքի սկես  
Սիրտն եմ կարդում այս ժեռ քարի

Գրում ե նոր մի պատմություն  
Մի գասակարք հերոսական,  
Վոր աննկուն, համառ, տոկուն,  
Կերտում ե նոր մի ասպազու

Գրում ե նա, վոր մենք յեկանի,  
Այս «չարքաշատ» խուել ձորի մեջ  
Ատեղծեցինք լուսե մի կյանք,  
Յեվ արեներ անժար, անշեղ:

Ենացըրինք այս խարիսխած  
Յերկիրը ծեր, հնադարյան,  
Ու հաղթեցինք մեր դեմ յելած  
Ամեն արգելք՝ գնոլ արյան:

Խորտակեցինք ժայռեր հզոր,  
Փոխեցինք շատ զետերի հուն,  
Վոր վառվեն բյուր լույսեր բասոր,  
Թափ ու կյանք տան յերկրի հոգուն:

Կանգնեցըրինք շնչեր հսկա,  
Գործարաններ յերկաթակուռ,  
Վաղիա մարդը թող լավ գգա՝  
Կովով ծնվեց այն, ինչ վոր կա:

Վաղիա մարդը թող խմանա —  
Այդ մեծ կովում հերոսական  
Շատ ընկերներ զըլեցին մա՞  
Արիարար ու հաղթական...

..Ու կանգնել եմ խոհուն, հանգարայ,  
Կարդում եմ լուռ մի պատմություն,  
Վոր գրում ե մի զասակարգ՝  
Ժայոի վրա և իմ հոգում:

Այստեղ գետն ե խշշում ահա,  
Այստեղ ձոր ե վայրի, քարոտ,  
Ու ժայռերի սրտում հիմա  
Ուժնակի ահեղ վորոտ...

— Իջիր քլոնգ, բարձրացիր բահ,  
Քրտինքը թող թափի, հոսի,  
Մենք այս ձորում հիմա անահ՝  
Կյանք ենք տալիս Զորագեսին

1930

## ՏԱՐԵԴԱՐՁԻ ՅԵՐԳ

Բոլոր տասներկու տարեկաններին

I

**Դ**ու ծնվեցիք այն զիշեր, այն կովի զիշեր,  
Դուցե հերոս հայրիկիդ մեռնելու պահին,  
Նա քեզ թեկ չտեսավ մեռնելիս հիշեց,  
Յերբ աղմկում եր դրսում բարձունչ քամին.

Դու ծնվեցիք այն զիշեր, այն կովի զիշեր,  
Դնդակների շառաչուն տարափի ներքո,  
Յերբ մեր յերկրին շողշողուն արև եր իջեր,  
Յերբ բանվորները յերկրին տուն դարձան յերգով.

Դու ծնվեցիք այն զիշեր, այն կովի զիշեր,  
Վոր փայլ առավ արիի շողերի ներկով,  
Յերբ մեր բանակը յերկրից տերերին քշեց՝  
Դնդակների շառաչուն տարափի ներքո.

Այսոր լրանում ե քո տասներկու տարին,  
Դու ծնվեցիք այն զիշեր, այն կովի զիշեր,  
Դուցե հերոս հայրիկիդ մեռնելու պահին,  
Յերբ մեր յերկրին շողշողուն արև եր իջեր.

Բոլորեցիք արդեն քո տասներկու տարին,  
Քեզ հետ յերկիրը աճեց, քեզ հետ մեծացավ,  
Շողշողում ե ահա, տես, վորպես պատանի,  
Վորպես լույսով զարդարուն փարթամ կաղնի ծառ.

Բացվեցին քո ճամբեքում շուշաններ լուսե,  
Ելեկտրական արեգներ ժկտացին քո զեմ,  
Ինչ իմ մանուկ հասակում հեքյաթն ե ասել,  
Դու քո պայծառ աչքերով տեսնում ես արդեն.

Դու քո պայծառ աչքերով տեսնում ես արդեն  
Աղամանդե լույսերի կոկոնները վառ,  
Այդ աստղեր չեն, վոր յերկնի կապույտում հարբեյ՝  
Ու մի զիշեր հոդմերի շունչով թափել վար.

Այդ մեր յեռանդն ե վառվում սյուների վրա,  
Վոր թափել ենք ջրառատ հեռու ձորերում,  
Վոր տասներկու արեգներ բարձրանան ահա,  
Նոյեմբերյան մարտերի տասներկու տարում.

## III

Նոյեմբերյան դու սերունդ, պայծառ պատահի,  
Վոր բարձրացել ես ահա լույսերի յերգով,  
Տես, բարձրանում են ահա սերունդներ քանի,  
Սոցիալիզմի կառուցման աղմուկի ներքու

Ու ծնվում ե հենց հիմա մի սերունդ լուսե,  
Հանդիսավոր այս որին, պայծառ այս գիշեր,  
Յերբ վոր յերկրում մի վոսկե հեքյաթ ե հյուսվել,  
Յերբ վոր յերկրին խնդության իջել ե գիշեր

Ու գեռ կգան նորերը, սերունդներ քանի,  
Տարիները կղանան վորակես կարուսել,  
Իսկ մենք կժպտանք նրանց ամեն մի քարից,  
Յեվ սյուների վրայից՝ վորպես վառ լույսեր

Նոյեմբերյան դու սերունդ, պայծառ պատահի,  
Վոր բարձրացել ես ահա լույսերի յերգով,  
Բոլորեցիք արդեն քո տասներկու տարին,  
Սոցիալիզմի կառուցման աղմուկի ներքու

## IV

Կաճի յերկիրը քեզ հետ, կմեծանաս դու,  
Ժամանակը կարծաթի մազերդ մի որ,  
Յեվ խնդությունը կյանքի քո պայծառ հոգում,  
Վոսկի մի յերգ կղանաս, վոսկի մի որոր

Որորոցում կնիքնի մի լուսե մանուկ,  
Կկախվի քո հայացքը նրա մնարին,  
Կշնչան շուրթերը մի պայծառ անուն,  
Ու մեզմ մի յերգ կհնչի մի նոր քնարից:

Ու մեզմ մի յերգ կհնչի մի նոր քնարից,  
Որորոցում կնիքնի մանուկը լուսե,  
Իսկ մենք կժպտանք նրան ամեն մի քարից,  
Յեվ սյուների վրայից, վորպես վառ լույսեր

Այսոր լրանում ե քո տասներկու տարին,  
Դու ծնվեցիք այն գիշեր, այն կովի գիշեր,  
Գուցե հերոս հայրիկիդ մեջնելու պահին,  
Յերբ մեր յերկրին շողշողուն արև եր իջեր

1932

## Ա Ճ ՈՒՄ

I

Հողմների դեմ չեն յերերա  
Լույսերը քո պայծառ ու վառ,  
Յետ չի զառնա յերեկը քո  
Ո՛, յերկիր իմ լուսապայծառ

Քո հերի հետ ապրում ենք մենք,  
Ու շնչում ենք քեզ հետ մեկտեղ,  
Մեղ հետ մեկտեղ ճամբար անցած,  
Ո՛, յերկիր իմ լուսապայծառ

Լույսերն՝ հազար, հույսերը՝ բյուր,  
Քո ճակատին պսակ են վառ,  
Ջրանցքների կանչը համրույր,  
Ո՛, յերկիր իմ լուսապայծառ

Վաղվա գալիք որվագ համար  
Մենք մեր կյանքը չենք խնայի,  
Յերկիր իմ վառ, լուսավարար,  
Լուսապայծառ, լուսապայծառ..

Ճերմակում են մաղերը,  
Դու մեծանում ես այնքան,  
Տարիները իմ գեմքին  
Ակոսներ են քանդակում,  
Նոր սերուղներ են գալիս  
Քո ճամբաները դոփում,  
Ո՛, յերկիր իմ հաղթական,  
Դու մեծանում ես այնքան.

Վառվում ե լույսը, մարում,  
Որերն անցնում են արագ,  
Հին աշխարհի խալարում  
Լուսե յերկիր իմ հրակ,  
Մահանում ե ամեն որ,  
Ամեն վայրկյան, ինչ վոր կա,  
Դու հյուսում ես կյանք մի նոր,  
Դու մեծանում ես այնքան.

Խորհրդային իմ յերկիր,  
Խորհրդային իմ յերկիր,  
Վաղը, յերը յես չեմ լինի,  
Յերը հազարները կզան,  
Քո ճակատին հաղթական,  
Լուսե պսակ կլինի,  
Միշտ խանդավառ ու ժպտուն,  
Դեմքդ պայծառ կլինի.

1928

ՊԱՐՏԱՇՆԵՐԸ

Այս մեր փողոցում, քարոտ փողոցում,  
Կառուցում են շենք վարդագույն քարից,  
Այստեղ ամեն որ փայտ են սղոցում  
Ու քար են տաշում մարդիկ սրանկից:

Յեվ քարերի հետ մաշվում են նրանք,  
Տաղվում են, վորսես քարերը դեմի,  
Շենքը յեխում ե, բարձրանում շարք-շարք:  
Ասես ժապում ե քո առաջ հիմի:

Յեվ ակամայից սիրսո խնդում ե,  
Դոր ամեն մի մարդ քարերի վրա  
Իր մկանների ուժը զբնում ե,  
Վոր այդ գեղեցիկ շենքը բարձրանա:

Այս մեր փողոցում, քարոտ փողոցում,  
Կառուցում են շենք վարդագույն քարից,  
Այստեղ ամեն որ փայտ են սղոցում  
Ու քար են տաշում մարդիկ սրանկից:

1930

ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑՑԸ

Յս տեսնում եմ բարձրանում ես որ-որի,  
Տուֆարար շենք, վարդագույն ու գեղեցիկ.  
Յեվ գիտեմ վոր մինչ ամառը բոլորի՝  
Տուֆարար շենք, կլինես դու յերկնաձիգ:

Յեվ գիտեմ վոր մինչ բամին զա ցուրտ ձմռան,  
Ջյունափառ մեր լեռներից ձիգ իջնի վար,  
Կհանդչի շատ բեռնակիը սայլ քո դուն,  
Աչքերիդ վառ կրակները կերեան:

Ու գիտեմ վոր արյունի ու քրտինքի  
Շաղախով են քո քարերը միացել,  
Յեվ արեւ քեզ վրա իր ստինքի  
Շողերով վառ ճակատներ ե լվացել:

Յեվ կանգնել են բանվորները հողագույն,  
Ու շաբել են, ու շաբել են, ու շաբել  
Ու քարերը, շաղախները ջինչ հոգու  
Հույզերով ու խնդությամբ են պաշարել:

Ու տեսնում եմ բարձրանում ես որ-որի,  
Տուֆարար շենք գեղեցիկ ու վարդագույն,  
Մինչ արեւ լեռներից դեն մոլորի՝  
Տուֆարար շենք, ականջիր դու իմ հոգուն:

Յես ուզում եմ խնդությունը լինի հորդ,  
Դանելում քո, պատերից ներս, անվախճան,  
Յեկ ամեն մի բնակիչ քո անհաղորդ՝  
Դանդության ու արտմության ու խեղճության.

Յես ուզում եմ, տուֆաքար շենք վարդագույն,  
Վոր ծոցում քո ճռվողեն շատ մանուկներ,  
Նրանց խինջը վողողի բակ ու անկյուն,  
Ու լինես դու նրանց հետ մի խաղընկեր.

Ու նրանք յեր մեծանան ու ծերանան,  
Ու յերը կյանքը մատերին սև ցանի ձյուն,  
Դու լինես վառ հուշարձան մի խնդության,  
Ու նրանց դեմ վերստին մի մանկություն.

Յես աեսում եմ, բարձրանում ես որ որի,  
Տուփաքար շենք վարդագույն ու գեղեցիկ.  
Յեկ գիտեմ վոր մինչ ամառը բոլորի՝  
Տուփաքար շենք, կլինես դու յերկնաձիգ.

1934

## ՔԱՂԱՔԸ

### I

Այս քաղաքում տեսել եմ յես անթափանց մի գիշեր,  
Յեկ տնակներ կիսաքանո՞ւ անպատճան ու անդուռ,  
Վորոնց վրա ծեր ժամի զանգի զողանջն ե իջել,  
Ու ծանրացել վորպես մուժ, վորպես անեծք, վորպես բու.

Յեկ աչքերի նման կույր՝ յես տեսել եմ ամեն որ  
Անապակի, ավերակ պատուհանները մռայլ,  
Ու նրանց գեմ վորնացող պտուտահողմն ահավոր,  
Վոր իջնում եր լեռներից վորպես սոված, գաժան գայլ.

Յեկ սովալլուկ ու գժգույն մանուկներ եմ տեսել յես,  
Ու մերկությունը նրանց վոր լիզում եր ցուրտ բամին,  
Նրանց կյանքն եր շպրտել աշնան տերենների պես,  
Վոր այդ սաղարթների հետ հողմը քշի ու տանիւ.

Ու տեսել եմ զիներույր շաբանները կառքերի՝  
Զունինի նվազ միալար, վորպես սոված վորը լաց,  
Վոր հնչում եր հին Գյումրու հեռու, խարխուլ թաղերից  
Ու արձագանք եր տալիս հոգիների մեջ հարբած.

Հիմա ներ են, ել չկան, ինչ տեսել եմ յես առաջ,  
Մնացել են ժամերի սիլուետները կիսաքանդ,  
Յեկ կուզիկ մի քահանա, վորպես զանգի մի զողանջ,  
Վորոնք մեր մեծ կառուցման քարերի տակ կմնան.

## II

Ո՛, քաղաք իմ, քեզ այնպես հարազատ եմ յես,  
Մտերիմ եմ քո տաշած ամեն մի քարին,  
Վարդագույն մի խնդություն տուփ քարերիդ պես,  
Ասես ներկել ե կյանքիս տասնեմեկ տարին:

Վարդագույն մի խնդություն ջահել իմ հոգում,  
Յես շըջել եմ ամեն որ փողոցները քո,  
Դու ապրել ես, շնչել ես ինձ հետ իմ յերգում,  
Ու հարբել ես խնդությամբ ամեն յերեկու:

Ենքերը, վոր հիմա կան, փողոցները նոր,  
Կապույտ գոտին ջրանցքի, կայանը լույսի,  
Խիսդ են սփռել իմ հոգում, վոր այնտեղ մի որ  
Հույզաթաթավ յերգերի մի առու հոսի:

Ենքերը, վոր հիմա կան, փողոցները նոր,  
Բարձրացել են ու աճել աչքերիս առաջ,  
Յեզ աղմուկը կառուցման բարձրացել ե վոր,  
Յես լսել եմ վորպես յերգ, նոր կյանքի դողանջ:

Ու տարերքը շարժել ե յերկերը մի որ,  
Որորվել են շենքերիդ կատարները յերք,  
Դու անվհատ ու համառ շառաչունով նոր,  
Սրտիդ անհուն յեռանդով կանչել ես—յելեք:

Ու յելել են աննկուն ջոկատները մեր,  
Կառուցման նոր մարտերի, նոր կովի համար,  
Շաղախել են քրտինքով, միս, քանի քարեր,  
Ու իրենց կամքն են թողել նրանց մեջ անմար:

Ո՛, քաղաք իմ, քեզ այնպես հարազատ եմ յես,  
Ու մտերիմ քո տաշած ամեն մի քարին,  
Վարդագույն մի խնդություն տուփ քարերիդ պես,  
Ասես ներկել ե կյանքիս տասնեմեկ տարին:

## III

Փոխվել ե քո պատկերը ու փոխվել ես դու,  
Ու փոխվել ե քո մեջ նա՝ կյանքը հարաձուն,  
Կառուցվել ես յերկնի տակ ու մեր ջինջ հոգում,  
Ել զանգակները ժամի քո դեմ չեն հաջում:

Ու չի իշնում քեզ վրա միստիկ յերեկո,  
Ու քո սրտում չի նվում լացը վորբերի,  
Պայծառ-պայծառ աստղերի անձրին ներքո,  
Յերեկոն քո՝ լուսեղեն վարդեր կրերի:

Կիշնի ահա յերեկոն, կրացվեն լույսի  
Շուշանաթերթ լամպերի կոկոնները վառ,  
Կնայի քեզ յերկնքից մի գունատ լուսին,  
Վոր անզոր ե աշխարհին լույս տալու համար:

Կնայի քեզ յերկնքից մի գունատ լուսին,  
Կիշնի ահա յերեկոն, զիշեր կլինի,  
Մութթ վրան կխփի լեռների ուսին,  
Յեզ լույսերի սարսափից քաղաք չի մտնի:

Կշառաչի քաղաքուր կյանքը, կրյեռա  
Ռազինների քաղցրալուր նվազների տակ,  
Ու զիներույր պանդոկի սանդուղքի վրա՝  
Վոչ մի սրտում չի խրվի ֆիննական դանակ:

Փոխվել ե քո պատկերը, փոխվել ե այնքան,  
Ու փոխվել ե քեզ հետ նա՝ կյանքը հարաձուն,  
Ու հիմա քեզ լուսեղեն ու զվարթաձայն,  
Ո՛, քաղաք իմ, վաղվա նոր որերն են կանչում:

Յես տեսել եմ նրանց մեր յերկրի ընդերքում,  
Մետաղի ու քարի կոխվներում ահեղ,  
Քանդում եյին նրանք յերգեր եյին յերգում,  
Հանգերի խալարում անթիվ ծեր ու ջահեր.  
Ու յերգերով նրանց ցրվում եր խալարը,  
Քանդում եյին նրանք՝ բյուր կոմունարները.

Քանդում եյին նրանք և կուրծքը ժայռերի,  
Ցեղ աները խարխուր, գերեզմանի նման,  
Ցեղ փրփռն ջըերը մեր վիշապ գետերի  
Հանում եյին յերկրի հորիզոնի վրա,  
Վորպես նոր արեգներ փռած վառ վարսերը,  
Արձներ կառացող բյուր կոմունարները.

Բարձրացող վորմերի վրա յեմ տեսել յես,  
Քրտինքով շաղախված տուֆ քարերի վրա,  
Տաշում եյին նրանք քարերը վարդերես,  
Ու կառացում բազում մներ ու զործարան,  
Ուրախ եյին նրանք ու նրանց յերգերը,  
Վորմեր եյին շարում բյուր կոմունարները.

Ու հասուն արտերի ծփանքներում անհուն,  
Վոսկեհատ ցորենի վառ շեղջերի առաջ,  
Հասկերի հողմաշոնչ սլավոցում անրուն,  
Համայնական անափ գաշտերի մեջ կանաչ,  
Սփռում եյին նրանք իրենց խիսդն ու սերը՝  
Արեր ու բերքի բյուր կոմունարները.

## ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԸ

### I

**Յ**ես տեսել եմ նրանց հրդեհներում այն մեծ,  
Գնդակների շաջուն տարափների ներքո,  
Մարտի այն որերում, յերկրում մեր հողմածեծ,  
Անհուն ու արի բաղուկով ու հողով,  
Աչքերի մեջ պայծառ լուսե կայանները,  
Կովում եյին նրանք, բյուր կոմունարները.

Կովում եյին նրանք, Ցեղ հրդեհով յերկրի  
Բոցի ծիրանափայլ լեզուներով ահա  
Պատմությունն եր զրվում նրանց վսեմ կովի  
Մեր զառամած յերկրի սեանողի վրա,  
Բնկնում եյին նրանք զրկած ալ վարդերը,  
Կովում եյին խիզախ, բյուր կոմունարները,

Ցեղ մեծ մարտնչումի պայքարներում վսեմ,  
Ծխի արյունափայլ բռւլաների վրա,  
Տեմնում եյին նրանք հաղթանակներ լուսե,  
Տեմնում եյին կյանքը նոր ընթացքով ահա,  
Թնդում եյին դվարթ նրանց խրամները,  
Կովում եյին նրանք, բյուր կոմունարները.

Ու շողջողուն մի որ, լուսե մի այգաբաց,  
Խիզախ ու քաջասիրտ սուրճանդակի նման,  
Մեր լեռներից ուրախ, ուժեղ մի հողմ սուրաց,  
Ցեղ վորոտաց զվարթ հորիզոնի վրա,  
—Ցնծա թող յերկիրը, ցնծան թող սրտերը,  
Հաղթանակը տարան բյուր կոմունարները.

Մեծ և ձեր անունը, իմաստալից ու վեհ,  
Սերունդների համար հավետ նվիրական,  
Ինչպես բազմախորհուրդ լուսեղ գործերը ձեր,  
Ճամբաները պայծառ դեպի մեծ ապագան.  
Դիմեմ, ձեր անունը կորհներգեն դարերը,  
—Յերկրի ամեն քարում կան կոմունարները

Կթողներ դուք յերկրում արևաշող մի կյանք,  
Յերջանկություն ու սեր, պայծառ մի ապագա,  
Ու վորսես թանգարժեք, իմաստուն մի կտակ  
Կշողան նրանց դեմ, յերբ վոր աշխարհ կդան,  
Սերունդների առաջ կթնդան քարերը.  
—Յերկրի ամեն խորշում կան կոմունարները

Յեկ ձեր անունի տակ պայծառ մի կյանք կաճի,  
Կրարձրանան բաղում մանուկներ արևած  
Ծաղիկներ կրունեն նրանց ամեն կանչից,  
Ուրախ կնի կյանքը, ուրախ ու քարեհաճ.  
Ու յերբ զարթնի հովը, կշրջան ծառերը.  
—Յերկրի ամեն խորշում կան կոմունարները

Յեկ յերբ լինի գիշեր, մեր յերկրի լուսածոր  
Բիրերը կփայլեն արևների նման,  
Յերկիրը կդառնա շողողուն լույսի ծով,  
Աստղերը կաղոտեն հորիզոնի վրա.  
Վոսկե զրերի պես կժպտան լամպերը—  
—Մեր հայացքի մեջ են բյուր կոմունարները:

1938

## ՔԱՂԱՔԻ ԼԵՏ

Կանգնած եմ յես ահա մի բլրակի վրա,  
Դեմքս տարածվում ե քաղաքը մեր,  
Գիշերը վուել ե կապույտ մահուզն իրա,  
Ու թարթում են հաղաք լուսեղ աչքեր:

Աչքերից աչքերը վառ շողեր են խմում,  
Զեվյունի շուրթերը ճակատիս,  
Միտքս քաղաքի հետ մունջ զրույց ե անում,  
Ախուրյանն ե խշշում ձորակից:

Յես ասում եմ, քաղաք, ահա քո աչքերում,  
Բիրերում վոսկենուր, հաղարափայլ,  
Իմ միտքն ե թափառիկ՝ այս ժամին դեգերում,  
Իմ միտքն ե դեգերում համբաքայլ:

Նա ասում է՝ մտքիդ այդ յես եմ փայլ տվել,  
Այդ յես եմ քայլ տվել քո հոգուն,  
Պայքարներս վսեմ, վոր չես կարող թվել,  
Նրանք են քո հոգում աղմբկում:

Յես ասում եմ.— Քաղաք, ահա կարդում եմ յես  
Գիշերվա կապույտ քո ֆոնի վրա,  
Բոցը քո աչքերի պայծառ զբերի պես  
Պատմություն են պատմում հոգուս ահա:

Նրանք ասում են ինձ — յեղել եւ մի գիշեր.  
Ո՛, մի թանձը զիշեր այս քաղաքում...  
Հարկավոր չե հիշել, հարկավոր չե հիշել...  
Այդպես են նրանք աղաղակում...

Հետո լույսերը այս, վոսկու հալոցքի պես,  
Հայացքները՝ բարձր, նոր շենքերին,  
Վորոնք փողոցներից լեռնացել են ասես՝  
Գլուխները ուղղած հորիզոնին

Այդ շենքերի հղկած յուրաքանչյուր քարից  
Նայում են ինձ պայծառ, պայծառ դեմքեր,  
Ցել բոլորը մեկտեղ, կարծես մի անգամից,  
Սկսում են նրանք խրոխտ յերգեր

Նրանց յերգում անդուր հեքը մեր վողջ կյանքի,  
Ու կամքի պողպատյա ձայնը հուժկու,  
Նրանց յերգում համառ թափը աշխատանքի,  
Հույզերի համերգը նրանց հոգու

Նրանք յերգում են — Մենք, մարտիկներ քրտնաթոր,  
Մեր ուժն ենք ավել այս քարերին,  
Մեր կամքերը հաղթող ու մեր քրտիկներ հորդ  
Արյունը լվացին հին դարերին

Նրանք յերգում են — Մենք, մարտիկներ քրտնաթոր,  
Նոր աշխարհի շունչը մեր հեքերում,  
Նրա արեր վառ, նրա կամքը հաղթող,  
Նրա սիրան ե խիում մեր յերգերում,

Ու կանգնած եմ ահա մի բլրակի վրա,  
Դեմքս տարածվում ե քաղաքը մեր,  
Ցել գիշերն ե փոել կապույտ մահուդն իրա,  
Ու թարթում են հաղար լուսեղ աչքեր

Հայութ ուղարձու ու Ա առանձին  
Օրին Առաջար քաղաքուն  
Առաջ պահան առաջ քաղաքուն  
Երան Առաջ Առաջար

### ԺԱՄԱՊԱՅԾ

Փողոցները խաչաձևող  
Նորակառույց շենքերի մոտ  
Կա մի փոքրիկ բացատ փողոց՝  
Փոշիաշունչ ու արհուտ

Այստեղ ահա, ճամբամիջին,  
Ուր անցնում են կառք ու ձիեր,  
Ուր արձանն ե Մեծ իլիչի  
Կանգնած ե մի միլիցիոներ

Զահել ե նա, ժիր ու զվարթ  
Ու մոխրագույն շորեր հագին,  
Գլխին փափուկ մի սաղավարտ,  
Ու փոքրիկ փայտ ունի ձեռքին

Մերթ ավտո յե անցնում մոտով,  
Մերթ ազմկոտ մի սայլ կամ կառ,  
Նա իր ձեռքի փոքրիկ փայտով  
Անձայն տալիս ե հրահանգի

Ցել նայում ե հեռու, հեռու,  
Ուղիղ կանգնած պոստի վրա,  
Ցել հիշում ե՝ ինչպես հերու  
Պետք Մոսկով ճամբեց իրան

Տեսնում ե նա շենքեր հսկա,  
Աղմկահույզ շարժում, հոխնդ,  
Հաղար ավտո ճամբի վրա,  
Տրամվայի գվարթ գղիրդ:

Այդ բոլորը ձուլված ի մի,  
Մի ընդհանուր անափի ժխոր,  
Կարծես հնչող համերդ լինի,  
Ու ժամապահը դիրիժյոր:

Ու նայում ե հեռու ելի,  
Ու թվում ե նրան ահա  
Հաղար ավտո անցան հիմի՝  
Իրեն հանձնած պոստի վրա:

Յեկ գալիս են տրամվայներ,  
Զընդոցով անցնում արագ,  
Շուրջը հսկա քարե շենքեր,  
Պայծառադեմ ու բազմահարկ:

Տեսնում ե նա ճամբին ահա  
Անց ու գարձի ծով ալեկոծ,  
Ինքը կանգնած պոստի վրա՝  
Դեմք անծայր, լայն մի փողոց:

Յեկ ասֆալտե փողոցում այդ,  
Ուր թնդում ե խուլ մի ժխոր,  
Նա շարժում ե մի փոքրիկ փայտ՝  
Վորպես հմուտ մի դիրիժյոր:

Բայց ժպտում ե մեկը նրան,  
Այդ մեծ արձանն ե լենինի,  
Վոր ասում ե կարծես իրան—  
—Ե՞յ, ժամապահ, այդ կինի:

1982

42

### ԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս փողոցում, ճամբի վրա,  
Կիսամութին թե լույսին,  
Աշխատում են հայր ու տղա  
Ամբողջ որը միասին:

Ակնորը խոհերի հետ  
Շարում ե քարը քարի,  
Վորդին ջանել ճարտարապետ՝  
Ավարտել ե այս տարի:

—Հայրիկ, պատը թեք ե գնում,  
Նայիր, գիծը ուր մնաց,  
Հայրիկ, արագ, յետ ենք մնում,  
Տես, արեք թեքվեց ցած:

Զվարթանում ե ծերունին,  
Խինդ ե վառվում իր հոգում,  
—Ճարտարապետ վորդի ունիմ,  
Մատաղ լինեմ ջինջ հոգուն:

—Հայրիկ, յելել ենք մըցության  
Կառուցման մեծ պայքարում,  
Վոր մեք կամքը, լի խնդությամբ՝  
Անմահանա այս քարում:

43

Յեվ ծերունին թափ ե առնում,  
Խառնում ե ցեխը քարին,  
Շաղախում ե քարաշարում  
Ժպիտները իր բարին

—Հայրիկ, սիրտս չի համբերում.  
Ուժ տուր, թափ տուր քո ձեռքին,  
Յես առաջին քարն եմ դնում  
Սոցիալիզմի մեծ շենքին,

Յեվ ամեն որ, ճամբի վրա,  
Կիսամութին թե լույսին,  
Աշխատում են հայր ու տղա՝  
Ամբողջ որբ միասին՝

1932

Յանձնական առաջնահանձնություն  
Հայաստանի Հանրապետության գործադիր մարմանի  
Հայաստանի Հանրապետության գործադիր մարմանի  
Հայաստանի Հանրապետության գործադիր մարմանի

Յանձնական առաջնահանձնություն  
Հայաստանի Հանրապետության գործադիր մարմանի  
Հայաստանի Հանրապետության գործադիր մարմանի  
Հայաստանի Հանրապետության գործադիր մարմանի

Յանձնական առաջնահանձնություն  
Հայաստանի Հանրապետության գործադիր մարմանի  
Հայաստանի Հանրապետության գործադիր մարմանի  
Հայաստանի Հանրապետության գործադիր մարմանի

344

## ՇԵՆՔԸ

Այս բազմահարկ շենքն իմ հոգում  
Հյուսել ե խինդ մի վառ,  
Այս բազմահարկ շենքն մի հոգուն՝  
Թվում ե վողջ մի դար  
Տեսնում եմ յես մի ապագա  
Ամեն մի քարում,  
Յես գիտեմ, վոր նա պիտի գա  
Լուսեղեն այս գարում

—Ե՞յ, վաղվա մարդ, վոր պիտի գաս,  
Յերբ մենք չենք լինի,  
Ամեն քարում մի կյանք զգա,  
Մի սիրտ սիրով լիւ

Այս բազմահարկ շենքն իմ հոգում  
Հյուսել ե խինդ մի վառ,  
Ե՞յ, վաղվա մարդ, քո հոգում ել  
Թող մնա անմար:

1929

45

ԼՈՒՑՍԵՐԸ

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

Կառուցման ժամին ընկալ մի բանվոր  
Իրա բարձրունքից ու փովեց գետնին,  
Հողին հանձնեցինք մենք շուքով այսոր  
Պայծառ հերոսի գետնաթալալ դին,  
Ընկեր, կյանքը քո տվիր մեր կյանքին,  
Հերոսի փառքով դու խաղաղ քնի,  
Դրանով հասար մի նոր բարձրունքի,  
Վորտեղից յերեք, յերեք չես ընկնի.

1932

**Բ**ո աչքերը պայծառ, քո աչքերը լուսե,  
Յերկիր, լամպերը քո լուսե լիմոն,  
Մեր հույզերի զվարթ կանչերով ենք հյուսեր,  
Վոր արևոտ լինի քո յերեկոն:

Յերկիր, լարերով այն, ուժի, լույսի առու,  
Մեր արյունն ե հոսում, քատինքը հորդ,  
Վոր թափել ենք հեռու ձորերում ու սարում,  
Վարարուն գետերի ափերի մոտ:

Յել այն լամպերից վառ՝ լիմոններից հյութեղ,  
Վոր արեի հետ են համ մըցում,  
Մեր հույզերն են քամվում, վորպես լույսի հեղեղ՝  
Հաղար շենքերի մեջ և փողոցում:

Այն սյուների վրա մեր սրտերն են փայլում,  
Վորպես լույսով լեցուն քնքուշ սրվակ,  
Մեր ժըպիսն ե վառվում լույսերի հայելում,  
Խնդրության կարկաչը՝ մեր կրծքի տակ:

Ո՛, այդ մենք ենք, յերկիր, հայացքը մեր հասել  
Սոցիալիզմի դժվար ճամբին հիմի,  
Մեր հույզերով միլիոն լիմոններ ենք վառել,  
Վոր գալիս՝ ճամբեքը մութ չլինի:

Կ Գ Ա Ն Ա

Առունիղմը կդա սրտերի,  
Սրտերի վրայով կդա նա,  
Համայնական հասուն արտերի,  
Արտերի վրայով կդա նա,  
Իմ յերկրի փրփրաբաշ ջրերի,  
Զրերի կանչերով կդա նա,  
Լույսով լի պղնձե լարերի,  
Լարերի հոսանքով կդա նա,  
  
Կղնգան ոելսերը յերկաթի,  
Յերկաթե ճամբեքով կդա նա,  
Կիլչեն կարգերը զարերի,  
Դարերի վրայով կդա նա,  
Թշնամին կլինի մահով լի,  
Մահերի վրայով կդա նա,  
—Ընկեր իմ, շառաչուն մեր կոլի,  
Մեր կովի շառաչով կդա նա,  
  
Իսկ յեթե չհամեմ այն որին,  
Չհամեմ այն որին, յեր գա նա,  
Իմացեր, վոր սիրաս քայլերի,  
Քայլերի ձայներից կարթնանա.  
Միայն թե, ընկերներ իմ անթիվ,  
Ասացեք — յեղել եմ աղետ,  
Վոր հառած աչքերը բո ճամբին՝  
Շնչել ե բո ամեն քարի հետ

1932

Ա Ն Վ Ե Ր Ն Ա Գ Ի Ր

Մենք մեր ուժն ենք տալիս քեզ, ու մեր հույզերը վոսկի  
Ու մեր որերը ջահել ու տենչանքները լուսե,  
Մենք մեր ուժն ենք տալիս քեզ—ամեն քարիդ ու հասկիդ,  
Ճամբաներիդ՝ ուր արգեն լուսե վարդեր են բուսեր  
  
Ճամբաներիդ՝ ուր արգեն լուսե վարդեր են բուսեր,  
Մենք նայում ենք ամեն որ՝ լուսաբացից լուսաբաց,  
Ո՛, քեզ համար դարերի ծանրություններն ենք ուսել,  
Ու գիտենք, վոր արևոտ ճամբաներով պիտի զատ  
  
Մենք գիտենք, վոր արևոտ ճամբաներով պիտի զատ,  
Մտնես սրտերը մարգկանց, հոգիները հըբահյուս,  
Վորպես վոսկի մի հեքյաթ, վորպես պայծառ մի յերազ,  
Վորպես զարերով տնմար վոսկեղեն մի արշալոյա  
  
Մենք մեր ուժն ենք տալիս քեզ, ու մեր հույզերը վոսկի,  
Ու մեր որերը ջահել, ու տենչանքները լուսե,  
Մենք մեր ուժն ենք տալիս քեզ, ամեն քարիդ ու հասկիդ,  
Ճամբաներիդ՝ ուր արգեն լուսե վարդեր են բուսեր

1934

## ԱՐԱՎՈՏ

**Պ**այծառացիք, այ առավոտ,  
Յերկիք, խմիր ցոլքն արեի,  
Կյանք առնեն թող արտ ու արսոտ,  
Յեվ այգիները խաղողին

Մեր գաշտերում համայնական  
Թող հնչի յերզը լիաթոք,  
Փող հնչի թող՝ իմ հաղթական,  
Իմ նոր յերկրում արեաշող:

Վոսկի հասկեր վոսկի բերբով,  
Բամրակ լինի՝ ձյունե սովան,  
Վաղկույդները բաղվեն յերզով  
Ալգիներում համայնական.

Պայծառացիք, այ առավոտ,  
Պայծառացիք ու արեի,  
Մեր գաշտերը համայնական՝  
Սպասում են քո բարեին:

1932

## ԿԱԿԱԶ

Երանց, զոր ընկան Մայիսին՝  
Նոյեմբերի համար:

**Մ**ի կարմիր կակաչ, մի սիրուն կակաչ,  
Ժպտաց ինձ գաշտում վառ մի առավոտ,  
Կարծես իմ սրտին ծանոթ ու ճանաչ՝  
Խոսեց հոգուս հետ մի կարմիր կակաչ:

— Իմ արյունակից, կանգ առ իմ դիմաց,  
Թերթերս ալ են, վառ են մետաքսից,  
Այս բաց գաշտի մեջ իմ շունչը պահած՝  
Մղասում եյի յես քո գալստին:

Քո ընկերոջից ընդունիր բարե,  
Ալ թերթերիս մեջ հայացքն ե նրա,  
Նրա մահով եմ սնվել կյանք առել,  
Այս կանաչ, կանաչ թարմ գաշտի վրա:

Նա մի հերոս եր ընկավ մեծ կովում,  
Այս հողի վրա, ուր բռնել եմ յես,  
Այդ մեծ պայքարում նա կյանքն եր կուռ  
Հաղարների հետ և ըմբոստ և վես:

Թաղեցին նրան այս հողում ահա,  
Յեվ հողը գարձավ սպարաբտ ու բերի.  
Գուցե մեռնողի հենց սրտի վրա  
Կյանք առա ու քեզ ջերմ բարե բերի:

51

—իմ կարմիր կակաչ, իմ սիրուն կակաչ,  
Ասա դու նրան, վոր կյանքը գեռ կա,  
Վոր խորհրդային մեր յերկրի վրա  
Կրկն թափիշյա գարուն ե ահա.

Մեր ամենորյա ահեղ սպայքալում,  
Մեր կառուցման մեջ, մեր սրտերում վաս,  
Ասա, վոր իր պես հաղար բնկերի  
Անունը սպայծառ սպահում ենք անմար.

1980

## ՀԱՅԻ ՅԵՐԳԸ

Յերբ եր ամառ արևառ,  
Արտն եր վոսկի ու խնդուն,  
Յերբ կանաչ եր հանդ ու քար,  
Յեղա մի որ յես հանդում.

Արտում վոսկի որորուն,  
Մի զյուղացի խինդով վառ,  
Մի զույգ հասկ եր արորում  
Իր բռան մեջ արեհարտ

Ժպիսներով վողողած  
Զույգ ափի մեջ բերքն իրա,  
Յեկ շուրթերը իրա թաց  
Հակեց հուզմունքով նրան.

Ու քրտինքի մի կաթի  
Ճակատից իր ընկալ վար,  
Բնկավ վոսկի հատիկին,  
Արեահամ, արեառ

Յեկ զցեց նա իր բռան  
Հատիկները դեպի շեղչ,  
Իր խնդությունը դրած,  
Իր քրտինքը նրանց մեջ.

Հիմա նվ ե ծառում այս  
Հացի պատառը վոսկի,  
Վոր հագեցած խնդությամբ  
Յեղ յեռանդովը բազկի,

Յեղ ժպիտով իր պայծառ  
Ու հույգերով վողովուն,  
Վոր զյուղացին արևառ  
Ափի մեջ եր տրոքում

Մի յերեխան արևաչ  
Ատամներով իր կաթի,  
Վոր կյանքն ունի իր առաջ՝  
Նման շքեղ հեքյաթի

Մի ծերունի՞ զառամած,  
Վոր քայլում ե զեղի մաս,  
Վոր իշխում ե ձորբ՝ ցած,  
Կամ մահանում ե հիմա.

Կամ մի բանվոր յեռանդուն,  
Կյանքի կերտողը համառ,  
Վոր քրտնաթոր ու անդուր  
Վոսկի որերի համար

Ուժ ե յեռանդ ե տալիս  
Յերկաթներին ու քարին,  
Յեղ իր կյանքը՝ պանծալի  
Մեր ընդհանուր պայքարին.

Գուցե յես եմ կերել այն  
Վոսկի բուռը այդ բերքի,  
Ու նրա վառ խնդությամբ  
Ծնունդ ավի այս յերգին:

Կամ գուցե զու, գուցե նա,  
Ով վոր ե թող իմանա,  
Ժպիտներով խնդության,  
Քրտինքով եր ցողված նա.

1932

## Ա Ռ Ս Զ Ի Ն Ո Դ Ա Ա Վ Ի Ն

**Թ**ռիք զու, թռիք զու, թռիք զու հեռու,  
Վրապես հաղթ արծիվ զու կապույտ յեթերում,  
Վրապես նոր կոռւնկ, զոր յերկիր ե զալիս.  
Պայծառ մի, պայծառ մի գարուն ե բերում:

Թռիք զու, թռիք զու մտքի պիու արագ,  
Կամքի պես հուժկու, զու կյանքի պես վարար,  
Կյանքին մեր թռիչք տուր, թռիչք տուր ու թափ,  
Վերջին մեր բարձունքը թռչելու համար:

Թռիք զու, թռիք զու, թռիք զու հեռու,  
Լինեն թող թերզդ հուժկու՝ յեթերում,  
Վերջին մեր բարձունքը կթռչենք քեզ հետ,  
Պահած վառ ջահերը մեր կուռ ձեռքերում:

1984

## ՅԵՐԳ ՀԱՂԹԱՆԱԿԻ

Մ ենք վառում ենք այս գիշեր  
Բոլոր լույսերը յերկրի,  
Բոլոր հույսերը պայծառ  
Մենք վառում ենք այս գիշեր,  
Աշխատավոր մարդկություն,  
Թող ձեր սրտերը բերկրի.  
Չունի այնքան պայծառ եջ  
Վոչ մի ստար պատմություն:

Տես, նայում են ջագեսի  
Բյուր աչքերը լուսարձակ,  
Կասղիական լույսերի  
Ծողերն ընկան ջրերին,  
Չորագեսի վարսերից  
Լույս և ծորում ձորերին,  
Բանաբեռից, Ռիսնից  
Ցեղում են զույգ արեգակ:

Այդ մեր սրտերն են լուսե,  
Վոր նայում են իրարու,  
Այդ մեր կամքերը հաստատ,  
Վոր մենք իրար ենք հյուսել,  
Ցեղ տենչում ենք հիմա մենք  
Պայքարներով ամենի,  
Վոսկեպիթիթ, կենսատու  
Ոսցիալիզմի արկին:

Ու գալիս ե ահա նա  
Հմայքներով իր լուսե,  
Նրա համար յերկաթե  
Ճամբաներ ենք կառուցել,  
Ելեքտրական վարդերի  
Վառ ծաղկոցներ ենք հյուսել,  
Համայնական արտերի  
Թավիշ կանաչն ենք բացեր.

Քրտինքով ենք շաղախել  
Դժվար ճամբեքը նրա,  
Պայքարել ենք, տոկացել՝  
Նրա արեի համար,  
Հուսացել ենք, վոր կզա  
Ու հայացքը իր պայծառ  
Կփոխ մեր գաշտերի  
Ու հին հյուղերի վրա.

Յեվ գալիս ե ահա նա,  
Այեն առավոտ ծեղին,  
Այն, վոր ձգվում ե ուժզին  
Սուլիչների ձայնը զիլ՝  
Հաղթական կանչն ե նրա,  
Այն, վոր բարախում են հար  
Գործարանները հսկա՝  
Վստրերի ձայնն ե նրա.

Այն՝ վոր հեռում ենք համառ  
Աշխատանքի աղմուկում,  
Ու գործում ենք անդադար,  
Այդ նրա հերն ե անմար,

Այն, վոր ինդությամբ հարբած  
Մենք յերգում ենք սրտաբաց՝  
Այդ նրա յերգն ե հուզիչ՝  
Մեր սրտերի մեջ հյուսած:

• • • • •  
Բայց սպասեք... սպասեք...  
Ահա յեխում են նրանք  
Ճակատներով արնավառ,  
Հայացքներով թափանցող,  
Այդ նրանք են, վոր ընկան  
Պայքարներում ամենի,  
Վորոննք ձգտում եյին վառ  
Սոցիալիզմի արկին:

Տես, կարմրեց ավագուտ  
Անսպատը կրակից,  
Նրանց ձեռները ահա  
Մի անգամից բարձրացան,  
Կասպիական ջրերը  
Մռնչացին ահարեկ...  
Յերկաթաթե մի թոշուն  
Թպրաւով ընկալ ցած...

Այդ նրանք են, վոր ընկան  
Պայքարներում ամենի,  
Վորոննք ձգտում եյին վառ  
Սոցիալիզմի արկին  
—Շիրիմների վրա ձեր,  
Հերոսական ընկերներ,  
Մենք կառուցում ենք հիմա  
Սոցիալիզմ ու հուշարձան...

ՏԵս, վառվում են Զագեսի  
Բյուր աչքերը լուսաբակի,  
Կասպիական լույսերի  
Փայլը ընկավ ջրերին,  
Զորագեսի վարսերից  
Լույս և ծորում ձորերին,  
Քանաքեռից, Ռիոնից  
Յելնում են զույգ արեգակն

1932

## ԱՆԱՎԱՐՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### I

Յեղել և յերկիր մի  
Արյունոս քարերով,  
Աչք արցունքով լի,  
Սիրաը արյունքով ծով,  
Յեղել և յերկիր մի  
Շնչել և դարերով  
Ու չար դավերով լի,  
Արյունոս տերերով

Իշխել են այդ յերկըուժ  
Վասալ ու թագավոր...  
(Պատմությունն ե զըուժ  
Յերկաթագրերով),  
Ծծել են յեղեգով  
Աշտարակի գինի,  
Ժողովրդի հեքով,  
Նրա արյան գույնի,

Արծաթյա թամրերով,  
Զիրով ասպազեն,  
Քառասմբակ գոփել են  
Անտառներ ու ձորեր,  
Վորսել են յեղջերու,  
Երեներ ու վարագ,

Դաստիարկել են զինու  
Մասաններ ու կարաս

Պատմությունն ե խոսում  
Դարերի յետից,  
Ժամանակն ե հասում  
Ընթացքով արեի,  
Յեղել ե յերկիր մի  
Արյունոս քարերով,  
Ու չար գալիերով լի  
Արյունոս տերերով:

II

Ապրել են այդ յերկրում  
Գետնաբնակ մարդիկ.  
Ու կերել են կալե  
Ամանների միջից.  
Ու ավել են հողին  
Յեղ արյուն և քրաինը,  
Կերակրել ե նրանց  
Հողը՝ վորովես սահնը.

Պատմությունն ե խոսում  
Դարերի յետից.  
Նա գովում է յերկրի  
Զորիները աղնիվ,  
Բայց չե զըրում  
Ինչպես քշել են այլուծի,  
Խլել ժողովրդից  
Բաժինն առյուծին:

Յեղ յեղել ե մի որ,  
Շինվել ե մի քաղաք.  
Ասում են թե այստեղ  
Արքան Արշակունի  
Կատարել ե զողի,  
Ավաղակի հավաք  
Յեղ կոչել ե նրան  
Արշակավան քաղաք:

Յեղ ավ զիտե այստեղ  
Ավանում Արշակի,  
Վոր կոչվել ե քաղաք  
Գողի, ավաղակի,  
Զեն աքսորվել անմեղ  
Հոգիները խիզախ  
Տերերի զեմ ուղղված  
Վորպես հազար նիզակ:

Պատմությունն ե խոսել  
Դարերի յետից,  
Ու գարերն են հոսել  
Ընթացքով արեի,  
Յեկել են նոր զարեր,  
Նոր իշխողներ, ու նոր  
Արյուն-քրաինքով լի  
Մի զասակարգ հզոր:

Տերերը նոր՝ զինված  
Բնությամբ զարերի,  
Խոսել են արյունոս  
Ուումբերի վրուսով,  
Ու զասակարգը մեր՝  
Զայրույթով զարերի՝  
Վոնդել ե նրանց,  
Փախցըրել ե վոտով:

Ու մնում ե հիմա  
իրրև հուշ հների՝  
Մի ջվարթնոց մոայլ  
Խսչաքարեր մամուս,  
Յեվ կճուճներ կավի,  
Մի պատմություն աղոս,  
Վոր խոսում են քեզ հետ  
Տարտամ ու համառոս

### III

Այժմ կրո յերկիր մի,  
Ուր բացվել ե գարուն,  
Հայացքը խինդով լի  
Հառել ե նա հեռու  
Իշխում ե այդ յերկրում  
Յեվ խրոխտ և անպարտ,  
Արեներ կառուցող  
Մի համառ դասակարգ:

Չոքերը՝ ուր նըանք  
Դուրս են յեկել վորսի,  
Վողողել ենք անափ  
Հեղեղներով լույսի  
Նըանց մեջ մենք վոսկի  
Արեներ ենք վառել,  
Յերկիրը ցանցել են  
Բյուր ելեքտրալարեր

Դարձել ե այդ յերկրում  
Քրտինքը հորդ, վարար  
Ժայռերի վորոտում  
Յերկիրի ծիծաղը վառ.

Փրփրերախ քրքիջով  
Ջրերը սրբնթաց՝  
Թունելների միջով  
Թափով իջնում են ցած,

Յերկրում այդ հնորյա  
Սուլիչներ են կանչում,  
Գնացքներ են վինչում,  
Ռադիոներ են հնչում,  
Յերկրում այդ յելնում են  
Վարդակարմիր աներ,  
Վորոնց քարերը մենք  
Հույզերով ենք դրեր

Անում ե յերկիր մի,  
Վոր աչքերով լուսե,  
Հոգիներում հիմի  
Բյուր յերգեր ե հյուսել.  
Նրան արև ու սեր,  
Վոսկի որեր ու կյանք—  
Հավերժական վառք քեզ,  
Բանվոր դասակարգ:

1932

ՊԱՏԳ ՄԱՎՈՐԸ

Այն դամբանի առաջ կանգնեցի յես յերկար,  
Հոգիս արտմությամբ լի, սիրաս լեցուն հույզով,  
Այն դամբանի վրա փայլուն ամեն մի քար  
Վաղողված եր վորքան թախիծով ու լույսով:

Յեկ այդ քարերի տակ՝ յերկըներից բերած,  
Դեկավարն եր ննջում մեր կովի ու դարի,  
Այն դամբանի առաջ իմ հայացքր մնաց  
Մտերիմ ու ծանոթ մի հարազատ քարի:

Այդ իմ յերկրի քարն եր այն դամբանի վրա,  
Քարաշարում կեցած պատգամավորը լուռ,  
Ու սառել եր այնտեղ՝ հայացքի մեջ նրա  
Յերկրի յերախտապարտ՝ համակրանքը անլուր:

Այդ իմ յերկրի քարն եր մտերիմ ու ծանոթ,  
Վորակես հուզարկավոր, արցունքների նման,  
Նա իմ յերկրի կողմից ցողում եր վիշտ, կարոտ՝  
Այն մեծ դեկավարի դամբարանի վրա:

1933

ՅԵՐԿՈՒ ՅԵՐԳ ԼԵՆԻՆԻՆ

I

Յես զիտեմ վոր և մեռած ես և ապրում ես զու հիմա,  
Յեկ, քո վոզին միշտ կմնա ժամանակի պես անմահ.  
Դու, մարդկության յերջանկության հզորաշունչ մարդարե,  
Թափանցեցիր մտքով՝ գալիք հազար տարի ու դարեր:

Յեկ յերջանիկ ու բախտավոր մարդկությունը առագա,  
Մինչև վերջին սերունդը իր, արեգակը քանի կա,  
Իր տիեզերք հոգում յերբեք չի մոռանա քո մասին,  
Դու կմնաս այնտեղ պայծառ, վորպես արև ու լուսին:

1934

67

Կ Տ Ա Կ

II

**Յ**երկրներից հեռու, ծայրերից աշխարհի,  
Մարմարեղեն դամբան, քեզ այցի յեն դալիս,  
Բայց միթե զու յես, վոր այն մեծ դեկավարի  
Կարուտանքը՝ սիրած բյուրերին ես տալիս.

Միթե քո մեջ և լոկ այն մարդը վեթխարի,  
Վոր աշխարհը զբեց մի նոր ճամբի վրա.  
—Այցելուներ յերկրի ու ամբողջ աշխարհի,  
Բյուր սրտերի մեջ և դամբարանը նրան

1933/

**Կ**րաբձրանաս մի որ, կլինես խելահաս,  
Ու յերկիր կմտնես վորպես գտրուն զվարի,  
Գուցե հուզվի հոգիդ, կամ գուցե զարմանաս,  
Ցերը ժպատ քեզ կյանքը և սպայձառ և հոգարտ.

Կշըշես արեստ փողոցները յերկրի,  
Կնայես յերկնահաս շենքերին, լույսերին,  
Կնայեյիր ինչպես մի ծեր պատմազըրի  
Բոցաշունչ պատմության պայձառ յերեսներին.

Զմայլանքի խինդով հոգիդ կոտառուրես,  
Կժպտան քո զիմաց շենքերը խոյանքով,  
—Ինչպես են կառուցել, զիտեմ կհարցընես,  
Քարերը շենքերի կասեն քեզ.—Քրտինքնվ...

Կարսփա հոգիդ խինդախառ թախիծով,  
Յեվ ասես կյանք կառնի քո զեմ ամեն մի քար,  
Դու առաջ կշարժվես ճիշտ միհնույն զծով,  
Ու քո զեմ կիովի լուսեղ մի ճանապարհ.

Կրացվեն քո առողջ անհամար գործարան  
Ու հաղար մեքենա սրտատրով զարկով,  
—Ի՞նչպես են կառուցել—կհարցնես նըանց,  
Ու հաղար մեքենա կասեն քեզ.—Զըկանքով....

Կքայլես զու ելի միշտ առաջ ու առաջ,  
Կկանգնի քո դիմաց պանթեոն մի պայծառ,  
Արձաններ մարմարի՝ սրախողիսող արված  
Մարտիկներ անվանի ու անանուն հաղար:

Կնայես, կխորհես՝ հոգիդ թախիծով լի՝  
Կճանաչես նըանց կոմունար անունով.  
—Ինչպես են բարձրացել, —կհարցնես ելի,  
Արձանները մեկ տեղ կասեն քեզ.—Արյուննվ...

Բայց ինչ վոր կասեն քեզ լեզուներով հաղար  
Քարերը շենքերի, արձանները հոկա,  
Ընկեր իմ անանուն, թող քո հոգին պայծառ  
Հաղար անգամ ավել, հաղար սրտով զգա:

1932

ԻՄ ՅԵՐԳԵՐԸ ՔԵԶ...

Փոքրիկ Ողոքելին

Պո որերը բարձրանում են,  
Բարձրանում ու շողջողում են,  
Շողջողում ու գուրգուրում են  
Գուրգուրում են քեզ:

Իմ մազերը ճերմակում են,  
Ճերմակում ու ծերանում են,  
Ծերանում ու մոխրանում են,  
Մոխրանում են, տես:

Քո հույղերը արթնանում են,  
Արթնանում են ու ծաղկում են,  
Ո՛, ծաղկում են ու բուրում են  
Ու բուրում են սեր:

Իմ հույղերը մ, խամրում են,  
Ո՛, խամրում ու մահանում են,  
Մահանում ու մոխրանում են,  
Մոխրանում են դեռ:

Քեզ զալիքը վողջունում ե,  
Վողջունում ե ու կմնչում ե,  
Ո՛, կմնչում ու ճաճանչում ե,  
Ճաճանչում ե, տես:

Ո՛, մանկիկ, քեզ իմ ձեռքերը,  
Իմ ձեռքերը, իմ հեքերը,  
Իմ հեքերը, իմ յերգերը,  
Իմ յերգերը քեզ:

1934

\* \* \*

**Յ**ես իջնում եմ ձորը, դու բարձրանում ես վեր,  
Դու բարձրանում ես մեր, յես իջնում եմ ձորը,  
Բո գեմ գալիք կյանքի լուսապայծառ լեռներ,  
Բո գեմ որը բացվող ու շողշողուն նորը,

Ու շողշողուն նորը տես, նայում ե նա քեզ,  
Տես, նայում ե նա քեզ, այն շողշողուն նորը,  
Դու բարձրանում ես վեր, իսկ յես իջնում եմ, տես,  
Իսկ յես իջնում եմ, տես, գեպի ձորը, ձորը...

1933

## ՅԵՐԳԵՐ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻՆ

Աշխարհում կըլինի շողշողուն մի գարոն,  
Շողշողուն մի գարուն կըլինի աշխարհում,  
Կըլինի մի պատմիչ հետազա մի գարում,  
Կինտըի ձեր պատկերն և ամեն մի քարում,  
Կինտըի ու կարծես կզանի ձեզ մեկ-մեկ,  
Կխոսի ձեզ հետ նա, կժայռա ձեզ մտքում,  
Ու հետո կնստի հույզերով իր հոգու  
Գովեստներ կզրի ձեր մասին իր զրքում  
Կըզրի — յեղել են բյուր մարդիկ, վոր համառ  
Կերտել են աշխարհը այսքան վառ ու անմար

## ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԸ

Կարնդ եմ յես ձեզ պես յերգել  
Աշխատանքի մեծ թափը ձեր,  
Չեք պատկերը վեհ ու պայծառ  
Կարնդ եմ յես զբչով կերտել.  
Յեզ հույզերի համերգը այն,  
Վոր խառնում եք յերկաթաձայն  
Անիմսերի հումկու կանչին,  
Յեզ քրտինքը, և հեքը ձեր,  
Վոր համում եմ իմ ականջին,  
Կարնդ եմ յես ձեզ պես յերգել.

Հարվածային իմ ընկերներ,  
Աշխատանքի ձեր համերգում  
Դուք բոլորդ եք կարծես յերգում.  
Յեզ յերգում եք այնպիսի յերգ,  
Վոր չեն յերգում հոգագոյի  
Հինգ վեցերորդ մասում յերբեր,  
Յեզ յերգում եք այնպիսի յերգ,  
Վոր չի յերգել ծովն ալեհույզ,  
Անսանձ սամումն անապատի  
Իր ավագե սյուների հետ

Ահա խինդով մի անսահման  
Դուք դարձել եք անհուն մի թափ,  
Այդ ձեր հումկու թափի նման  
Ո՞վ ե զործել այդքան արագ  
Հնապարյան այս աշխարհում,  
Ու մշտավառ արեի տակ,  
Ու հոսում ե ժամանակը.

Ժամանակը հար ու հավետ,  
Վորը սակայն չի հասնում ձեզ,  
Ու ձեր թափից մնում ե յետ:

Հոյակապ ե յերկիրը մեր,  
Ուր քաղաքները լիաթոք  
Մուր են թքում միշտ մեալի վեր,  
Ուր ամեն սիրո արև մի բորբ  
Յեզ բազուկները անվեհեր  
Աշխատում են թափով անհուն,  
Ուր պատանի, յերխասարդ և ալեհեր  
Բոլորը մի տենդով լեցուն  
Կառուցում են յերկիրը մեր,  
Մի նոր կյանքի գուռ են ծեծում:

Լուսանում ե մի առավոտ,  
Կիսամութ ե ահա ձեր դեմ,  
Ահա ձեր իսկ աչքերի մոտ  
Արթնանում ե քաղաքն արդեն,  
Ու բացվում են դռներ հազար,  
Դուքս են թափում բրնձաղեմ  
Մարդիկ անթիվ մեծ հավաքի,  
Յեզ անքում են սալահատակ  
Փողոցները այդ քաղաքի  
Նբանց հումկու վոտների տակ:

Սկսվում ե ահա մի նոր  
Աշխատանքի յեռանդուն որ,  
Կրկին ջուտ բազուկի ուժ,  
Կրկին ազմուկ, յերկաթի ձայն,  
Կրկին վերից հսկա մի մուրճ,  
Վոր մեծ թափով իջնում ե ցած,  
Յեզ կռանվող հսկա մի թուչ,  
Յեզ մարդիկ, վոր յեռանդ դարձած

Աշխատում են խոհուն ու լուրջ,  
Հավատով լի ու անտրտունջ:

Լիփտեր, լիփտեր, յելնող, իջնող,  
Ապառաժի ահեղ պայթյուն,  
Գրնացքների անդադար սող,  
Յեկ թունելներ, ուր միշտ արթուն  
Համառ, տոկուն ու անհոգող  
Աշխատում են մարդիկ անքուն,  
Աշխատում են յեռանդագին  
Մարմարի ու տուփի հանքում,  
Նրանց հուժկու թափ ու յերգին  
Խոր ձորերն են արձագանքում:

Այստեղ ահա մեղմ, միալար  
Մաքոքներն են զառնում արագ,  
Ու թելերը փարզած իբար՝  
Բուն են մտում նորերի տակ.  
Այստեղ ահա փթթել ե վառ  
Կանաչազարդ մի վառ զարուն,  
Այստեղ կանանց մեծ մի բանակ  
Յեռանդով լի թել ե մանում  
Մաքոքների զարձով արագ,  
Նրանց քաղցր նվազի տակ:

Այստեղ նորից կոիվ ահեղ,  
Պայքար հզոր տարերքի դեմ.  
Գետը հսկա, վոր զարեցար  
Հոսել ե հար, թեքել են զեն,  
Աշխատում են հիմա համառ,  
Վոր հսկա մի քարաժայից  
Շառաչյունով բաց թողնեն վար,  
Վոր այդ գետի հսկա թափով  
Նոր արևներ վառեն անմար,  
Նոր աշխարհի կյանքի համար:

Այս բոլորը ձուլված ի մի՝  
Վողջ յերկիրն ե կարծես յերգում  
Զեր մեծ թափի յերգը հիմի  
Այս բոլոր ձուլված ի մի՝  
Աշխատանքի ձեր համերգում  
Դուք բոլորդ եք յերգում հիմի  
Յեկ յերգում եք այնպիսի յերգ,  
Վոր չի յերգել ծովն ալեհույզ,  
Անսանձ սամութի անապատի  
Իր ավազե սյուների հետո

Հարվածային իմ ընկերներ,  
Ո՞վ կարող ե ձեզ պես յերգել,  
Զեր պատկերը վեհ ու պայծառ  
Ո՞վ կարող ե զբավ կերտել  
Զեզ, վոր հիմա յեռանդ զարձած  
Կառուցում եք նոր մի աշխարհ,  
Հարվածային իմ ընկերներ,  
Աշխատանքի մեծ թափը ձեր  
Ու աննկուն կամքը համառ,  
Անզոր եք յես ձեզ պես յերգել

1030

Ում քրտինքը հույզի հետ  
Կաթի յերկաթին

Հիմա տուն ես դառնում դու,  
Իմ հերոս ընկեր,  
Աղմկում են քո հոգում  
Հազար ու մի յերգ,  
Դու ապրում ես ինչ վոր մի  
Չապրած խնդություն,  
Հիմա հազար ու մի ձեռք  
Քեզ կանչում են տուն

## ՅԵՐԳԵՐ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻՆ

I

Աղմկում են քո հոգում  
Հազար ու մի յերգ,  
Հիմա հազար ու մի յերգ  
Աղմկում են քո հոգում  
Դու ապրում ես ինչ վոր մի  
Չապրած խնդություն,  
Հիմա հազար ու մի ձեռք  
Քեզ կանչում են տուն

Աշխատել ես այսոր դու  
Յեզ ժիր և աշխայժ,  
Ու ավել ես քո հոգուն  
Նոր թափ ունոր ուժ,  
Հիմա դառնում ես դու տուն  
Յեզ գոհ և արի  
Ու ժպտում ե քո հոգուն  
Փառքը պայքարից

Այստեղ կոիվ ե ահեղ  
Մուքճի, յերկաթի,  
Կյանքն ե կառուցվում այստեղ  
Կաթիլ առ կաթիլ,  
Այստեղ հերոսը նա յե՝  
Ով քրտինք թափի,

**Յ**ես քեզ իմ մեջ եմ զգում,  
 Ներոսական բարեկամ,  
 Ներոսական բարեկամ,  
 Յես քեզ իմ մեջ եմ զգում,  
 Ու քո շունչն ե իմ յերգում,  
 Կառուցղիդ հաղթական  
 Խինդն ու յեռանդը հախուռն  
 Արյունիս մեջ եմ զգում:  
  
 Ա՛յս, յես գիտեմ, յես գիտեմ  
 Դժվար, դժվար են այնքան  
 Պայքարները քո վսեմ,  
 Դժվար, դժվար են այնքան.  
 Մարտնչողիդ հեքը յես  
 Իմ հոգու մեջ եմ զգում,  
 Ներոսական բարեկամ,  
 Ինձ կովիդ մեջ եմ զգում:  
  
 Ու քո կովում հաղթական  
 Սոցիալիզմի չմարող.  
 Դառ արևներն եմ զգում.  
 Ու խանդավառ կանչերի  
 Ու գեմքերի արևկա  
 Պայծառատես ու ժպտուն  
 Շքեղ յերթն ե իմ հոգում,  
 Քեզ նըա մեջ եմ զգում:

**Հ**ոգիս փովեր փողոցներում, շենքերին,  
 Զեր գեմքերին ու սրտերին արևկա,  
 Զեր պայքարի ու կառուցման հեքերից  
 Զգար սիրտս՝ ձեր սրտերում ինչ վոր կա:

Թափանցեր նա անդունդները ձեր սրտի,  
 Անձայրածիր յերկինքները ձեր հոգու,  
 Յեկ վեհությունը զգար նա ձեր կամքի,  
 Յեկ հույզերը արեի պես լուսատու:

Գարունները շնչեր հոգիս ձեր կյանքի,  
 Աշունները, ձմեռները ցրտաշունչ,  
 Յեկ ամպերում ձեր հոգու լուրթ յերկնքի՝  
 Մոլորվեր նա վորպես թոշոն անտրտունչ:

Ու յերբ կրկին վերադառնար նա ինձ մոտ,  
 Հարցընեյի, ասա, սիրտ իմ, ինչ տեսար.  
 Պատամխան տար—սրտերի մեջ արևոտ  
 Վեհ կամքերի, հոգիների բյուր աշխարհ:

**Ուսկնդրիր իմ յերգին**  
 Ու հեքին, ընկեր,  
 Յես քո կողքին եմ կրկին,  
 Մեծ ճամբի վրա,  
 Հզոր կառուցման մեջ մեր  
 Դու՝ արև պայծառ,  
 Յես ել քեզնից լույս առած  
 Ամպի մի բուլա:  
 Իմ յերգերը թափեն թող  
 Վոնց անձրւ զվարթ,  
 Վոր թրջում են քար ու հող,  
 Շենքեր, յես ու արտ,  
 Արկի տակ թող հոսի  
 Յերգերիս առուն,  
 Սիրտս կանչի ու խոսի,  
 Վոնց պայծառ գարուն,  
 Վոր իմ յերգը միանա  
 Թուտաշած քարին,  
 Յեկ հոգին քո իմանա՝  
 Ուժ տա պայքարին,  
 Թափ առնի նա ու լինի  
 Աննկուն, համառ,  
 Վոր վոչ մի բերդ չմնա՝  
 Առնելու համար:

1932

### ՅԵՐԳ ԿԱՌՈՒՑՄԱՆ

**Քարը՝ քարի,**  
 Դարը՝ դարի,  
 Ուր ենք հասել հիմա մենք.  
 Մեծ պայքարի,  
 Վոգով արի  
 Դարն ենք կերտում հիմա մենք:

Յեղիր անահ,  
 Մոռացիր մահ  
 Կառուցման մեծ ճակատում,  
 Լսիր, ահա  
 Ճամբիդ վրա  
 Նոր արմներ են ժպտում:

Թարը՝ քարի,  
 Կամքով արի  
 Կառուցում ենք կյանքը մեր,  
 Նոր աշխարհի  
 Լույսը վառի,  
 Իմ բարեկամ, իմ ընկեր:

Մեր բանակի  
 Հաղթանակին  
 Հավատով լի նայիր դու,  
 Յեղիր համառ,  
 Հույսերով վառ  
 Ուժ և թափ տուր քո հոգուն:

Հզգա, վոր մենք,  
Բույրըս մեկ՝  
Կյանք ենք տալիս այս դարին  
Յեվ զբա հետ  
Մահ ենք հյուսում  
Հին աշխարհին, խավարին

Կյանք ենք տալիս  
Հավատով լի,  
Վոր այս պայծառ մեծ դարի  
Լույսերով վառ,  
Հույսով անմար  
Մի նոր արև կվառվի.

Յեղիք տոկուն,  
Թող քո հոգում  
Հույսը յերեք չմարի,  
Զեռիդ դըրած  
Քո մի քարը  
Հավասար ե մի դարին

Քարը քարի,  
Կամքով արի  
Կառւցում ենք կյանքը մեր,  
Նոր աշխարհի  
Լույսը վառի,  
Իմ բարեկամ, իմ ընկեր

1980

## ԽԱՌԸ ՑԵՐԳԵՐ

## ՈՐԱՑՈՒՅՑ

Պոկում եմ յես այսորվա քո թերթիկը, որացույց,  
Խինդաշաղախ թախիծով, հաճույքով եմ պոկում յես,  
Ինչպես աշնան մի տերև ու վարդի թերթը ինչպես,  
Պոկում եմ յես այսորվա քո թերթիկը, որացույց:

Յես տեսնում եմ նրա մեջ ժամերի վաղքը վսեմ,  
Մահացումներ եմ տեսնում և ծնունդները բազում,  
Յես տեսնում եմ նրա մեջ գալիք մեր կյանքը լուսե,  
Այնքան հստակ, այնքան ջինջ, ինչպես վճիռ յերազում:

Ու քըտինքներ հորդառաս ու յեռանդ եմ տեսնում յես,  
Քո թերթիկում, որացույց,—ժամանակի անջինջ քայլ,  
Յեվ խորտակված սերերի մորմորումները հրկեզ,  
Յեվ խանդակառ սրտերի ցնծությունն եմ զգում յես:

Յեվ գիտեմ վոր պոկում ե նա ել մի որ իմ կյանքից,  
Յեվ առաջ ե ընթանում կյանքը մի քայլ ավելի,  
Սակայն հոգիս, որացնւյց, վորպես մահուկ անհանդիսա,  
Ականջում ե նոր կյանքի յերկաթաձայն քայլերին:

Ու գիտեմ յես, գիտեմ յես, ժամանակի վորպես քայլ  
Թարմ հետքերը այսորվա գեռ աշխարհում կմասն,  
Վորպես ծիծաղ, վորպես մահ, հերոսության վորպես փայլ,  
Վորպես ծնունդ, վոր հյուսեց ժամանակի մեքենան:

Պոկում եմ յես այսորվա քո թերթիկը, որացույց,  
Խինդաշաղախ թախիծով, հաճույքով եմ պոկում յես,  
Ինչպես աշնան մի տերև ու վարդի թերթը ինչպես,  
Պոկում եմ յես այսորվա քո թերթիկը, որացույց:

## Պ Ո Ե Տ Ը

Պասակարգի անհուն հուզումներով լիցուն,  
նա վողջ մի տարերք և անթիվ յերգերով լի,  
նրա յերգը վորպես միլիոն սրտի լեզու՝  
Հնչում և սրտերում ու վողջ աշխարհով մի.

Յեկ մերթ խաղաղ ե նա՝ սրոետի ջինջ հոգին,  
Ու մերթ մոնչում ե, վորպես մամուսպ ովկյան,  
Յերբ պատրաստվում ե նա ծնունդ տալ իր յերգին,  
Ո՛, անհանգիստ ե նա իր հույզերով այնքան.

Ո՛, անհանգիստ ե նա, վորպես հուզված տարերք,  
Ինչպես յերկինք—յերկիր, վոր խառնվում են իրար,  
Ինչպես ծովն ե հնչում մի շառաչուն համերգ,  
Փշրում բյուր ալիքներ իր ափերի վրա.

Նա մոայլ ե լինում իր յերկունքի պահին,  
Նրա յերկինք հոգին ամպում ե խոհերով,  
Յեկ հույզերի հախուռն ու ամենի քամին  
Գալարվում ե նրա ծով սրտի ափերով.

Յեկ սուր զիգզագներով կայծակում են այստեղ  
Մաքերը սրոետի ու հույզերին խփիում,  
Ու հանկարծ իր որտի շառաչյունով ահեղ  
Վոգեշունչ յերգերի անձրևներ են թափում.

Յեկ յերգերի այդ հորդ անձրևներից հետո  
Խաղաղվում ե կրկին վողջ տարերքը նրա,  
Պարուրվում ե պայծառ նրա հոգին խինդով  
Ինչպես արև յելնի լուրթ յերկնքի վրա.

Յեկ ինչպես նըրահյուս ծխածանի աղեղ,  
Վոր կախված ե յերկնի կապույտներից անհուն,  
Խաղաղվում ե այդպես նրա հոգին ահեղ  
Ու ժպիտն ե փայլում աչքերի մեջ խոհուն.

1932

ունաւ պահանջման քան ու պահանջման  
ունաւ պահանջման քան մինչդ և նույնական  
նորմի տերու աղք ուսւրաց և նույնական  
աղք ուսւրաց նորմ հայտ նույն ուսւրաց

ԴԱՇՆԱԿԱՆԱՐ ՅԵՐԵԽԱ

Սվագում են, աղջիկս, գաշնակահար յերեխա,  
Դաշնակահար յերեխա, ճնշյունների սիրահար,  
Ճնշյուններիդ անձրեզ սրտիս վրա թող տեղա,  
Վոր արթնանան նրա մեջ նոր հույզերն իմ անհամար.

Հարվածային քո հայրը այնտեղ կովում ե ահա,  
Այնտեղ կովում ե ահա յերկաթի ու քարի հետ,  
Հարվածային քո հայրը համառըեն ու անահ  
Նա ձգուում ե մեր կյանքի յերջանկությանը հավետ

Նա ձգուում ե մեր կյանքի յերջանկությանը հավետ,  
Դու նվագիր, աղջիկս, գաշնակահար յերեխա,  
Ահա բացիկ ե մեր զեմ մի նոր կյանքի արահետ,  
Ճնշյուններիդ անձրեզ սրտիս վրա թող տեղա

Ո՛, մենք յելել ենք խոնավ նկուղներից, խավարից,  
Հարվածային քո հայրը այնտեղ կովում ե ահա,  
Վոր նոր կյանքի արեց մեր սրտերում վարարի,  
Իսկ դու, իսկ դու նվագիր գաշնակահար յերեխա.

Ո՛, մենք զեռ պետք ե տիրանանք բարձրունքները զիտության,  
Բարձրունքները զիտության և արվեստի ու յերգի,  
Մեր զեմ, աղջիկս, մեր զեմ զեռ անառիկ բերդեր կան,  
Գաշնակահար մանկիկս, դու նվագիր, նվագիր.

ԳԻՇԵՐԱՍՈՒՏ

Ամպի ծվենները վառվում են ահա,  
Հանգչում ե արեր, հալչում ե ասես,  
Ու մութը նստել ե սարերի վրա,  
Խոհուն են սարերը, սարերը ինձ պետ

Խոհուն են սարերը գարերը ուսած,  
Հանգչում ե արեր, արեր ահա,  
Ու մութը թափվում ե հողի պես զեռ թաց,  
Մեռած մի ցերեկի գագաղի վրա!

Ու մութը թափվում ե հողի պես զեռ թաց,  
Ամպի ծվենները մարել են ահա,  
Մի լեռան կատարից լուսինն ընկալ ցած  
Ու փշրվեց կարծես աշխարհի վրա.

Ել չկա ցերեկը, զիշեր ե իմ զեմ,  
Խոհուն են սարերը գարերը ուսած,  
Ցերկնիք ջահերը, ջահերը արզեն  
Վառվում են Գիշերը ինչ նուրբ ե հյուսած,

## ՎԱՅՐԿՅԱՆԸ

**Զ**բերը հորդում են, ձյունիալ ե, ջմն, գարմւն,  
Կարկաչում ե առուն, սիրտ իմ, խնդաւ  
Այս կարկաչը, սիրտ իմ, ել յետ չի գառնալու,  
Այս կարկաչը, սիրտ իմ, ել չես զգաւ

Չըկանգնեց վայրկյանը, քո վրայով անցավ,  
Ու կատարեց սահուն թոփչքն իրա,  
Ու թոթափեց ահա գարկերի հետ մեկտեղ  
Իր բերածը, սիրտ իմ, նա քեզ վրաւ

Դու ել անցար, սիրտ իմ, անտրտունջ ու անձայն,  
Ենս ել քեզ հետ մեկտեղ և ամեն ինչ,  
Հիմա ուրիշ եմ յես, հիմա ուրիշ ես դու,  
Այլ ե աշխարհն հիմա և ամեն ինչ...

## ԱՇԽԱՅՑԻՆ

**Ա**յն քամին ե քշում տերեները դեղին,  
Բարի վողջույն քեզ եր, վերջին աշուն,  
Գաշտերիդ բերքառատ ու քո պարարտ հողին,  
Վոսկեծամ իմ յերկըին վողջույն, վողջույն...

Սև հողին ե հանձնում իմ յերկըի զյուղացին  
Իր հատիկը՝ վոսկի հոյսերով լի,  
Վոր նոր գարնան պայծառ, լուսե այգարացին  
Իր յերկըի հյութերը նա վայելի

Ահա նա յե հիմա ակոսում սև հողի  
Կուրծքը փիրուն, փափուկ ու բերքառատ,  
Վողջույն մեր գաշտերի այդ «յերկաթե հյուրին»,  
Մեստեմբերի լազուր յերկնքի տակ

Ցանում ենք հատիկը և՛ հողում, և՛ սրտում,  
Թող ծլի, աճի նա ու մեծանա...  
Այն քամին ե հիմա գաշտերում թիրտում,  
Ամռան շունչը վերջին —թող մահանա...

Մահացումն ե ծնում ամեն ինչ, վոր նոր ե,  
Հզոր ե մեռնողից ել ավելի.  
Կմեռնի հատիկն ել, վոր ապրի նա նորեն,  
Մի վոսկի հասկի մեջ ու բերքով լի

Հատիկի մեջ անգամ կա կոխվ ու սպայքար,  
Կըռիվը ծնուած ե, կա, կմաս,  
Կովով ծնվել եմ յես, ամեն մի ծառ ու բար,  
Կովով ծնված այս հին հողի վլաս

Այն բամին եքշում տերեները դեղին,  
Բարի վողջույն քեզ ել, վերջին աշուն,  
Մենք հատիկ ենք հանձնում հիմա քո ցուբա հողին,  
Այդ հատիկի մահվան վողջույն, վողջույն...

1930

Դիմում կայութեան ու անքաղաքաց պատուան  
Ենթաւոր ու անքաղաքաց ամուսինական տուններ  
Ենթաւոր ու անքաղաքաց պատուան  
Ենթաւոր ու անքաղաքաց պատուան

Ենթաւոր ու անքաղաքաց պատուան  
Ենթաւոր ու անքաղաքաց պատուան  
Ենթաւոր ու անքաղաքաց պատուան  
Ենթաւոր ու անքաղաքաց պատուան

Ա պատուան ու անքաղաքաց պատուան  
Ա պատուան ու անքաղաքաց պատուան  
Ա պատուան ու անքաղաքաց պատուան  
Ա պատուան ու անքաղաքաց պատուան

## Լ Ս Ի Ց Կ Ի

Լոիր, լուցկի իմ չնչին,  
Վոր մարում ես իմ չնչից,  
Իմ ընկերոջ թանգ կյանքի  
Մասը չունես քո միջին

Չունես արզյոք դու նրա  
Արյան հյուլեն քո բոցում,  
Ու չի այրվում քեզ հետ նա  
Քո աննշան հնոցում,

1930

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Դեռ մանուկներ են նրանք,  
Անգետ մանուկներ,  
Նրանք սիրում են խաղայ  
Մինչև յերեկո,  
Նրանք ունեն անհամար,  
Ժյուր խաղալիքներ.  
Դեռ մանուկներ են նրանք,  
Անգետ մանուկներ.

Նրանց համար աշխատը  
Խաղարան ե մի.  
Նրանք դեռ չեն ճաշակել  
Վոչ վիշտ, վոչ կոփի,  
Որեքը զեռ նրանց դեմ  
Ժպտում են հիմի,  
Ու աշխարհը սիրելի  
Խաղարան ե մի

Բայց խաղալիքներն իրենց՝  
Գաղտնիքներ ունեն,  
Այն ինչ ե վոր շարժվում ե  
Գնդակների մեջ,  
Ինչպես յեղակ, վոր հանկած  
Սուլիչը սուլեց,  
Ո՛, խաղալիքներն իրենց՝  
Գաղտնիքներ ունեն,

Ու ջարդում են, վոր բանան  
Գաղտնիքները խոր,  
Գնդակները պատռում են,  
Վոր մեջը նայեն,  
Չե՞ վոր նրանք գեռ անգետ  
Մանուկներ են, նոր...  
Ու ջարդում են, վոր բանան  
Գաղտնիքները խոր.

Ու թող խաղան ու ջարդեն,  
Մինչև մեծանան,  
Մինչև հազար խորհուրդներ  
Բարդվեն նրանց գեմ,  
Մինչև որերը մթնեն,  
Տարիներ անցնեն,  
Դեռ թող խաղան ու ջարդեն,  
Մինչև մեծանան.

1926

**Խ**աղաղություն ե կարծես իջել  
իմ սրտի վրա և իմ հոգուն,  
Արդեն զիշեր ե, արդեն զիշեր,  
Ու այնտեղ վոչ վոք չի աղմկում:

Յելնում են դեմքս մարդիկ, դեմքեր,  
Միտքս թռչում ե հեռու, հեռու,  
Ու ծանոթ մի մարդ, մի հին ընկեր,  
Ու դեմքս բացվող թափիշ գարուն:

—Բարե,—ասում եմ նըսանց մեկ-մեկ,  
—Վողջույն, կովում ընկած մարտիկ ընկեր,  
Մեր զաշտերում խինդ, յերգ ու համերգ,  
Ու յես աշխարհում ապլում եմ դեռ...

Յել խոնքվում են իմ դեմ նըսանք,  
Փոխվում են դեմքերն, անեանում,  
Ու կանչում կարծես—ապլում ենք, կանք...  
Բայց վոչ վոք իմ դեմ ել չի մնում,

Յելնում ե մեկը նորից իմ դեմ,  
Նա մի ծերունի յե դեմքով խաղաղ.  
—Գիտե՞ս, մեռած եմ, չկամ արդեն,  
Ծնվել եմ առողջ, մեռել եմ կաղ:

Յել ժապում ե մեղմ, պայծառ ու ջինջ,  
Ինչպես արեսոտ ամպի քուլա,  
Հայացքը խորունկ, խոսքը վճիտ,  
Սղբյուրի նման, մեղմ ու զույալ:

—Յես փայտահատ եմ յեղել հնում,  
Կտրել եմ մի որ ընկուզենի  
Մի հին, կուսական մեծ անտառում,  
Վոր քո դեմ հիմի սեղան լինի:

Յել ժապում ե մեղմ, պայծառ ու ջինջ,  
Ինչպես արեսոտ ամպի քուլա.  
—Զունեմ յես հիմա վոչինչ, վոչինչ,  
Բայց աշխարհում դեռ իմ գործը կա:

Յել հալչում ե մի ակնթարթում,  
Կորչում ե հազար դեմքերի մեջ,  
Վոր յելնում իրար վրա բարդվում,  
Անեանում են, յելնում, անվերջ...

Այդպես խոսում են յերկար, յերկար,  
Բագում իրերում ապրող մարդիկ,  
Նըանք, վոր մի որ յեռանդով վառ  
Կոկ են յերկաթ, տաշել են քար:

Հալչում են իմ դեմ ահա նըանք,  
Կորչում են նոր-նոր դեմքերի մեջ,  
Թաղվում են կարծես խոհերիս տակ,  
Անարտունջ, անխոս ու առանց վեճ:

1930

1-4  
102

Հայոց առաջնորդութիւն և հայութեան  
առաջնորդութիւն առաջնորդութիւն  
առաջնորդութիւն առաջնորդութիւն  
առաջնորդութիւն առաջնորդութիւն

Հայոց առաջնորդութիւն առաջնորդութիւն  
առաջնորդութիւն առաջնորդութիւն  
առաջնորդութիւն առաջնորդութիւն

### ԽՈՐՀՈՒՐԴ

Մի սարսափիր մահից դու ,  
իմ բարեկամ, իմ ընկեր,  
Մահը կորուստ չի մարդու,  
Կործանում չե ղեւ

Սարսափիր դու, յերբ գիտես՝  
Ապօռւմ ես ու կաս,  
Ու քո կյանքում մեր կյանքին  
Բան չունես, վոր տաս

1932

\* \*

Դու վորհմի նման չար,  
Մեր յերգերի ծաղկոցում,  
Անփառունակ, անքանքար  
Դասնություն ես տարածում.

Բայց կգա մի անողորժ  
Ծաղկաքաղի պայծառ որ,  
Ի՞նչ կլինես դու, վորհմ,  
Վորհմ, չար ու թունավոր.

1934

103

\* \*

**Ա**ռաջ վշտացիր, վոչ թախծիր դու,  
Կյանք ե, կանցնի, կզնա,  
Վորպես արձան անցնող մարդու,  
Նրա գործը կմնա!

Դարը կիջնի դարի վրա,  
Դարը դարից ուժ կառնի,  
Ու դարերի փողին վրան՝  
Պայծառ գործը կհառնի

1934

### Ի՞նչ ջաշել ե ՖԻՐԴՈՒՍԻՆ

Անց են կացել քանի՛ սերունդ, քանի՛ տարի, քանի՛ դար,  
Դեռ քո յերգի հուրը, շահիր, մնացել ե մշտավառ.  
Հազար տարվա մուժից հիմի վորպես պայծառ մի լուսին,  
Լուս ե տալիս անունը քո, յերգի արքա Ֆիրդուսին

Ու դեռ քանի՛-քանի սերունդ, ու քանի խան, քանի շահ  
Անց կկենան այս աշխարհով, դու կմնաս միշտ անմահ,  
Հազար սերունդ կդա կանցնի, կխոսի միշտ քո մասին,  
Ամեն սերունդ կդա, կասի —ինչ ջահել ե Ֆիրդուսին

1934

## Շ Ի Բ Ի Մ Ը

Հովի: Թումանյանի հիշատակիմ

**Պ**այծառանուն բանաստեղծի շիրիմի վրա,  
Արթնացել են հիմա քանի՛ վառ ձնաղիկներ,  
Նրա վճիռ ու քնքաղար յերգերի նման,  
Վորոնց վրա գարնան թովիչ արեն և ընկեր.

**Պ**այծառանուն բանաստեղծի շիրիմի վրա  
Կանաչել ե գարունը այս, ինչպես ժողիսն իր վառ,  
Ու ձյունել են, վորպես արծաթ մաղերը նրա  
Չմեռները՝ ծանը, վորպես խոներն իր պայծառ.

**Պ**այծառանուն բանաստեղծի շիրիմի վրա,  
Վորպես վրան բարձրացել ե գունդն արեղակի,  
Նրա հստակ, նրա պայծառ անունի նման,  
Վոր հնչում ե, վոր կանչում ե դեռ հողի տակից.

**Պ**այծառանուն բանաստեղծի շիրիմի վրա,  
Արթնացել են հիմա քանի՛ վառ ձնաղիկներ,  
Նրանք չերգած հույզաթաթավ յերգերն են նրա,  
Վորոնք սրտի ցըսությունից աշխարհ են ընկեր.

1982

## ՅԵՐԿՈՒ ՅԵՐԳ ՆԱԶԻԿԻՆ

1.

**Ի**՞նչ խաղաղ ե քո հոգին—  
Մեղմ յերեկո յես զու,  
Վոր հեռավոր մի յերգի  
Մըմունջն ունի ոգում,  
Վոր խոհերի պես քո հեզ  
Զեփյուռն ունի նազուն,  
Հույզերիդ պես՝ լուսերես  
Աստղեր ունի բազում,  
Ի՞նչ խաղաղ ե քո հոգին,  
Լուրի յերկինք ես զու.  
Աստղերով քո յերկինքի  
Լույս տուր իմ հոգուն.

107

2.

**Յ**երբ յես յերգեր եմ զբում,  
 ինձ հետ հուզվում ես դու,  
 ինձ հետ ուրախ ես լինում,  
 ինձ հետ տիպում ես դու  
 թե վոր մի տեղ եմ գնում,  
 Մտքով զալիս ես դու.  
 Հոգուս թե ամպ ե իջնում,  
 Թագուն լալիս ես դու.  
 Իսկ յերբ, տարված յերգերով,  
 Նստում եմ յես անքուն,  
 Քնքուշ, քնքուշ խոսքերով  
 Ինձ նախատում ես դու.

1984

Զ Ա Ն Տ Հ Ա

Փռքիկ Հովիկին

**Զ**ա՞ն, փոքրիկ, սիրուն տղա,  
 Քեզ արե, քեզ կյանք, քեզ սեր,  
 Հայացքդ սրտիս վրա  
 Վառվում ե հազար հույսեր.

Արեի վորդին ես դու  
 Այս ծաղկող հողի վրա,  
 Ու վոսկի մի վառ խռստում,  
 Զա՞ն, փոքրիկ, սիրուն տղա

Քեզ համար գեռ վորքան շուտ,  
 Ինձ համար ուշ ե արդեն,  
 Զգում եմ խինդը հոգուդ,  
 Զա՞ն, փոքրիկ, սիրուն տղա.

1929

Զ Յ Ւ Ն

**Զ**յուն, փափուկ ձյուն, սպիտակ ձյուն,  
Զգույշ իջիր գաշտերին,  
Ծաղիկները մտել են քուն,  
Հողն և նրանց անկողին:

Հանդարա, կամաց իջիր այսպես,  
Վոր ծաղկունքը չարթնանան,  
Ծածկիր նրանց քնքուշ ու հեղ.  
Զգույշ, զգույշ անսահման:

Զյուն, փափուկ ձյուն, սպիտակ ձյուն,  
Հանդիստ, խաղաղ իջիր վար,  
Ծաղիկները մտել են քուն,  
Ծաղիկները ցրտահար. ։

1935

\* \*

**Պ**աղիկները քուն կմանեն, յերբ լինի աշուն,  
Կանաչները լուս կթոշնեն աշնան մշուշում,  
Աղրյուրները մարգարտաշիթ՝ յերբ ձմեռ լինի,  
Ել չեն կանչի, չեն կարկաչի ինչպես վոր հիմի:

Ուրեմն զու, սիրտ իմ, շաղ տուր հույզերդ առատ,  
Ինչպես գալրնան ծաղիկները ջինջ ու անարատ,  
Ու քո խորքից թող վոր վճիտ քո յերգը հոսի,  
Մարգարտաշիթ աղրյուրի պես կանչի ու խոսի:

Ծաղիկները քուն կմանեն, յերբ լինի աշուն.  
Սիրտ իմ, զու ել պիտի թոշնես աշնան մշուշում.

1934

Գ Ր Ի Զ

Ինձ հետ յեղիք հաշտ ու խաղաղ,  
Ո՛, սիրելի իմ գըիչ  
Իմ հոգու հետ դու մի խաղա,  
Մի լինիք խորթ ու ուրիշ:

Հանձնել եմ քեզ կյանքիս ուղին,  
Գրիք յերգեր սրտառուչ,  
Գրիք անկեղծ, մաքուր, ուղիղ,  
Հյուսիք նրանց փունջ առ փունջ:

Այնպիս գրիք, վոր խոսքը բռ  
Մարդու հոգին իմանա,  
Վոր չինի մութ յերեկո,  
Յերկար ապրի ու մնա:

Ո՛, շատ-շատ ե դժվար գրել  
Այնպիսի յերգ, վոր հուզի,  
Գրել միայն, բայց չհուզել,  
Այդպիսի յերգ մի ուզի:

1930

ՅԵՐԳԻՍ ԼԵՏ

Թուղթ, հանձնեմ քեզ իմ կյանքի  
Վայրկյանները սիրելի,  
Թե մի որ կյանքս հանգի  
Կյանքս յեղիք սիրով լի:

Խոսիք լեզվով հույզերի,  
Հանգարտ խոսիք, ինչպես յես.  
Ասա՞ հույզերի գերի  
Կյանքս հանձնել եմ յես քեզ.

Ու յերբ կարդա մեկը քեզ,  
Շնչա լուռ ականջին,  
Ասա՞ վոր ապրել եմ յես,  
Ականջս կյանքի կանչին:

Ասա՞ վոր ապրել եմ յես  
Մի անհանգիստ, մեծ դարում,  
Վոր ալեկոծ ծովի պես  
Ցեռում եք ու մաքառում:

Ասա՞ սիրել եմ յես վես  
Այդ կոփվը կատաղի,  
Հանգարտ ասա դու, ինչպես  
Մունջ տողերը այս տաղին

Ասա՞ մեկն եմ յեղել յես  
Յերգիչներից այն բազում,  
Վոր տեսել են լուսերես  
Կյանքը՝ յերգում, յերազում:

Ալդպես ասա նըան դրւ.  
Թե/նա հույզով բռնկի,  
Փարվիր նըա ջինջ հոգուն,  
Յերգով նըան համակիւ

1984

այս առ առ յարձն առան  
միաւուն շնչով քամ  
ականջ առ առարձն առան  
միաւուն առ առարձն առան

114

Յերբ չեմ լինի յես, յերբ չեմ լինի յես,  
Յերգս կմա թղթերի վրա,  
Ապրող տողերն իմ յեղեցների պես  
Համբ շշուկով հարց կտան իրար:

—Ու՞ր ե միտքը այն, վոր փայլ տվեց մեզ,  
Աչքերը, վոր մեզ թղթին ցողեցին,  
Սիրտը՝ հույզերի մի սափոր կարծես,  
Վորից մենք առատ հույզեր խմեցինք...

Ու մի վերջակետ աննշմար ու խեղճ,  
Կասի—բոլորը հալվեցին ձեզ մեջ,

1984

115

ՓԼՈՒԶՈ Մ Ի

**Խ**արխիել ե հնակառույց շենքը քո հոգու,  
Յեվ հույզերի պարտեզը հին թոշնում ե այնտեղ,  
Մի անհայտ ձեռք չար հույզերի թուփերն ե պոկում,  
Ու ցանում ե նոր վարդերի սերմերը լուսեղի

Ժամանակի հողմը ահեղ քշում ե ահա  
Թերթիկները հին վարդերի՝ չար ձեռքով ցանված.  
Աղոթքները, վոր իշել են քո հոգու վրա,  
Հողանջները ժամի զանգի՝ արյունով հարբած,

Յեվ բռնության ու քաղցի տակ ծնված քո «յես»-ի  
Զվարթ մահերդն ե աղմկում, վողջունիր նրան,  
Թող մեռնի նա, պոկի նա ել հոգուդ պարտեզից,  
Նայիր, նոր մի կյանք ե շողում աշխարհի վրաւ

Նայիր, նոր մի կյանք ե շողում աշխարհի վրա,  
Ու փլչում ե հնակառույց շենքը քո հոգու,  
Համայնական կյանքի ձայնը լսում եմ ահա  
Նոր հույզերի ու նոր յերգի քաղցր համերդում։

1933

ԽԱՂԱԼԻՔԸ

**Լ**որդի չորս տարեկան յերեխան  
Ատացափ նվեր մի—խաղալիք.  
Խաղալիքը մի նեղը մանկան  
Սևահեր զլուխ եր կլորիկ

Ու մի որ, անգույշ դիպվածով,  
Զարդեց նա խաղալիքը բակում,  
Խաղալիքը, կարծես թե լացով,  
Շշնջաց—դժւ ել ես ջարդում։

1932

ՀԵՆԱԿՆԵՐԸ

Դողագնդի անթիվ քաղաքներում բոլոր,  
Յեվ զյուղերում հետին, ճամբաների վրա,  
Յերբ յեխնում ե վոսկի արեգակը բռոսոր,  
Վոսկեղերձան բաշով կարմիր ձիու նման,  
Դագաղաձայն՝ վորպես մահասարսուռ քայլերդ,  
Դոփում են գետինը միլիոն կենտ հենակներ.

Հենակներին կրթնած՝ արագիներ վորպես,  
Մի վոտնանի մարդիկ, աչքերի մեջ ցասում,  
Հոգիներում նրանց բյուր հույզերը հրկեց,  
Յեվ սրտերում խորով վափագները բազում,  
Ռորում են առաջ վոտները անընկեր.  
Դոփում են գետինը միլիոն կենտ հենակներ.

Յես տեսնում եմ նրանց՝ հեռուներից անծիր  
Աչքերի մեջ սառած սարսափը ահագին,  
Շարժումներում ճնշող տիրություն ու ձանձիր,  
Ու գեմքերին իջած ապտակները կյանքի,  
Խոհերում զիշերը՝ անթափանց ու անեւ.  
Դոփում են գետինը միլիոն կենտ հենակներ.

Յեվ շարժվում են նրանք զլխիկոր ու տրտում,  
Քաղաքներում բոլոր և զյուղերում հետին,  
Ամեն մեկը կարծես իրա վոտն ե վնտրում,  
Չանձրացել են նրանք արդեն վայտե վոտից.  
— Յեր վոտները կերան հաղար ոռոմբ ու արկեր,  
Վոր դոփեն գետինը միլիոն կենտ հենակներ.

Ընկերներ իմ անթիվ, ընկերներ անհամար,  
Յես տեսնում եմ անա ձեր վոտները կորած  
Կապիտալի դժոխք հնոցների մեջ վառ,  
Նրանց ծխաններում գորշ ու յերկնասլաց,  
Վոր դարձել են հաղար կյանք լափող կրակներ,  
Վոր դոփեն գետինը միլիոն կենտ հենակներ.

Յեվ բոցերը դեղին՝ բյուր կյանքերով վառվող,  
Շավալվել են վորպես մի անդիջում հրդեհ,  
Թափ են առել վորպես ձեր կամքերը համող,  
Խարխում են արդեն պալատներ ու շենքեր,  
Ու նրանց շուրջ իրրի յերգեր մահվան բոթի՝  
Դոփում են գետինը միլիոն կենտ հենակներ.

Յեվ կիլչեն նրանք Յես լսում եմ արդեն  
Աղաղակներ հոմեկու, միլիոնների ցասում,  
Վոտնաձայներ խրոխտ, վոր դոփում են իմ գեմ  
Ամուր վոտների տեր բանակները բազում,  
Վոր խորտակեն բոլոր հրանոթ ու տանկեր,  
Վոր չոռփեն հողը միլիոն կենտ հենակներ

Յես լսում եմ արդեն շառաչը պալքարի,  
Հմբուտացման անափ մաքառումը անհուն,  
Վոր աշխարհը լափող վառ հրդեհը մարի,  
Վոր մահը սափառնի կապիտալի հոգում,  
Ովկյաններում սառեն անթիվ ոռոմբ ու արկեր  
Վոր չոռփեն հողը միլիոն կենտ հենակներ

Յեվ աշխարհի անթիվ քաղաքներում մի որ,  
Յեվ զյուղերում հետին, ճամբաների վրա,  
Կրաքերանա վոսկի արեգակը բռոսոր,  
Վոսկեղերձան բաշով, կարմիր ձիու նման,  
Յեվ կթնդան ողում հաղթանակի յերգեր,  
Պատմություն կդառնաբ, միլիոն կենտ հենակներ.

## ՎԵՐ ԶԱԼՈՒՅՑՍԸ

**Ս**որթիեց արեգակը այնտեղ, արևմուտքում,  
Դարերի տակ ճկուած մի լեռան սապատին,  
Ամպերի սպիտակ կուրծքն ե արյունոտում  
Արյան շատրվանը այն բոցակաթիւ,  
Ու նետում ե մի ձեռք ահա դեպի յերկինք՝  
Արյունոտ մի դաշույն, իբրև լուսնի մահիկ.

Այնտեղ վերջալույս ե, արևն ե մահանում,  
Յես զզում եմ նրա հեքը մահացողի,  
Այնտեղ վերջալույս ե, և աստղերն են յեղնում  
Վորպես արցունքները մահը փողրացողի,  
Այնտեղ վերջալույս ե, յերկինքը սգավոր  
Իր փիրուզե դեմքին քաշում ե սև մի քոդ.

Յեվ իջնում ե մութը ու հողմն ե բարձրանում  
Փեշերը քսելով արտերին ու հողին,  
Յեվ զիշերն ե ահա թանձրությամբ ծանրանում,  
Եերկիրը մտնում ե խավար մի անկողին.  
Մութի մեջ զծվում ե սիլուետը մի լեռան,  
Վորպես արեգակի մի անշուք գերեզման.

Բայց դեռ մարմրում ե իմ դեմ մի վերջալույս,  
Արևմուտքի մոայլ, խավար ֆռնի վրա,  
Այնտեղ հիվանդ մի մարդ գալարվում ե մնհույս,  
Յեվ դեռ արյունոտ են շըթունքները նրա,  
Յեվ դեռ մնվում ե նա կյանքերով մարդկային,  
Ու արյուն ե կաթում ժանիքներից ահա.

Այնտեղ մեռնում ե նա՝ տիրանը աշխարհի,  
Մոռայլ քաղաքների տիրակալը գեղին,  
Նա, վոր ցանկանում ե հողագունդը վառի  
Իրը հույսը վերջին, զալարքը մեռնողի,  
Նա, վոր ցանկանում ե բոցերով հրդեհի  
Բանալ արյունադավ վրկության մի ուղին

Այնտեղ վերջալույս ե, հոգեվարք ե այնտեղ,  
Քաղաքների թանձր մշուշներից ահա  
Յես տեսնում եմ բարձր ծխաններից արդեն  
Զի բարձրանում ժահրու, թունոտ շունչը նրա,  
Յեվ թույլ են բարախում մոտոր ու գործարան,  
Այդ մահացող մարդու խարխուլ սրտի նման

Յես տեսնում եմ՝ այնտեղ ահա շրջում ե նա,  
Մի ուրվական լուսե, բազմություններ խրոխա,  
Վոր չորեկ են կարծես նրա կրծքի վրա,  
Վորպես մահասարսուուն անողոք մի բոթի  
Յեվ փորվում ե այնտեղ մի անդունդ անսահման,  
Մահացողի անհուշ ու խորունկ գերեզման

Վաղը կմեռի նա այնտեղ, արևմուտքում,  
Մոռայլ քաղաքների տիրակալը գեղին,  
Վոր զեռ հազար կյանքեր ու սրտեր ե ուտում,  
Իր՝ մեռնողի, անհույս զալարքներով վերջին.  
Վաղը կմեռնի նաև Յեվ մունչ տողերն իմ այս  
Գուցե հնչեն վորպես զվարթածայն մահազդ

Այնտեղ վերջալույս ե, բայց տեսնում եմ ահա  
Վաղվա բոցաճառագ արեգակը չքնաղ,  
Վորպես արու առյուծ կանգնած լեռան վրա՝  
Թափ ե տալիս հպարտ վոսկե բաշը իրա,  
Նա ժարդկային կյանքի վոսկեզարն ե ուսել,  
Հրդեհվում են այնտեղ պայծառ արշալույսներ.

Նեղամին սկսում է առ և առաջն քառակ  
առաջը պատճեն պահպանության վեհա  
ժամկ պրուբարձ և առաջնության դաշտը  
պահպան պահպան առաջն պահպան առաջ  
գնացը խորհուր և առաջնության դաշտը  
պահպան պահպան պահպան առաջն

## Վ Ո Ս Կ Ի Ն

— Այրիկ, ինչն յե վոսկին  
Արեգակի պես փայլուն,  
— Վորովինետն նրա մեջ  
Աշխատավոր մարդկության  
Միբան ու արյունն ե այրվում:

— Հապա ինչն յե գեղնել  
Ինչպես համբույրը մահին  
— Տղաս, նրա հետեւց  
Ազահ մարդիկ են ընկել  
Նա ել գեղնել ե ահից:

— Հայրիկ, հայրիկ սիրելի,  
Ասա, ինչն յե հսկուն  
— Տղաս, սիրուը ահով լի  
Նա գեռ յերկու աշխարհի  
Արյան կովի յե կանչում:

1933

Կ մնա վառ արել,  
Մեր կամքը հաղթող,  
Կանչի մեր բարել  
Սահմանից այն կողմ:

Մի որ կերնեն գեմ գեմի,  
Բանակ առ բանակ,  
Կխորսակիվի թշնամին,  
Կնի հաղթանակ:

Կմնա վառ արել,  
Մեր կամքը զբան,  
Կանչի մեր բարել  
Աշխարհի վրա:

1932

128

ԼԵՌՆԵՐՈՎ

Սենք իջանք լեռներով՝  
Կոփվը տաք եր,  
Ցերկիբը մահով լի՝  
Մշուշի տակ եր,  
Զիերը փնչացին,  
Դոփեցին արագ,  
Մեր շուրջը գնդացիր  
Ու թեժ գնդակ եր.

Ճերմակ զորքերը մեզ  
Պաշարել եյին,  
Չորս կողմ գնդացիր եր,  
Վոր շարել եյին.  
Նահանջի յելք չկար,  
Զկար մի ուղի,  
Մեր շուրջը խոր ձորեր,  
Սեղ սարեր եյին.

Ուումբերը թնդացին,  
Կոփվը տաք եր,  
Մեր վաշտը թշնամու  
Գնդակի տակ եր,  
Թշնամու թիկունքու  
Թնդացին հանկարծ  
Պարտիզան քաջլրի  
Խիզախ գնդակներ.

Թշնամու բանակում  
Խուճապ, շփոթ եր,  
Մեր գնդակի ձայնը՝  
Մահ եր ու բոթ եր.  
Թշնամին ջախջախված,  
Ընկած եր արդեն,  
Լուսանում եր ահա,  
Արեր մոտ եր.

Մենք յելանք լեռներով,  
Ուղին մեր բաց եր,  
Բաշերը ձիերի  
Շաղերով թաց եր,  
Զիերը փնչացին,  
Դոփեցին արագ,  
Մեր զեմ արդեն պալծառ  
Վառ այգաբաց եր.

1984

ԳԵՂԱԿԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ

1

Կոմսոմոլ են տղեն,  
Աչքս վրեն մնաց,  
Հրեն ճամբի վրեն  
Զիով են հւը գնաց,

Սիրոս տարավ իր հետ,  
Կյանքս ել հւը մնաց,  
Հերս կուլակ մի մարդ՝  
Հորս դուշման գնաց,

Լուսը խավրի, իմ հեր,  
Դու անարկ մնաս,  
Կոմսոմոլ են տղեն  
Առանց բարե գնաց,

Կոմսոմոլ այ տղա,  
Աչքս վրեգ մնաց,  
Ասես սրտիս վրա՝  
Զիդ դոփելով գնաց,

2

Ի կյանքը՝ քարոտ ճամբա,  
Լաշակս զլխիս ամպ ա.  
Իմ խավար հոգու համար  
Իմ յարը մի վառ լամպ ա.

Արեք զառ ա մանուժ,  
Իմ յարը վար ա անուժ,  
Մաշինի ձենից ասես  
Իմ սիրտը խաղ ա անուժ

Արեք հողի վրա  
Մանուժ ա շողը իրա,  
Կոմյերիտ յարիս տված  
Բարեկ՝ սրտիս վրա.

**L**ինեյի, հով լինեյի,  
Լուսնյակի շող լինեյի,  
Լագերում ննջած յարիս՝  
Յերկոնին քող լինեյին

**Մ**այիսի ցող-լինեյի,  
Իմ արի քով լինեյի,  
Թշանքը գրկած յարիս  
Թշանքին փող լինեյին

**F**ատրակ լինի՝ լավ լինի,  
Սիբալ՝ սիբո գալ լինի,  
Քան թե կուլակ մի տղա՝  
Հոգուս վրա ցավ լինի

Ե Ն Ս Ա Ր Ի

Ասղն անուժ եր,  
 Փողն անուշ եր,  
 Կյանքը գառն եր են տարի,  
 Հողի մարդը  
 Աչքի փուշ եր,  
 Աչք սրտում են տարին  
 Մոլի առաջ  
 Դուռը բաց եր,  
 Աչքը թաց եր են տարի,  
 Վոչ կարող եր  
 Ցավը լացեր,  
 Վոշ ել բազզը են տարին  
  
 Աշխարհը վառ  
 Բոցերի մեջ,  
 Մահ, կոտորած են տարի,  
 Կրակը թեժ,  
 Աղքատը խեղճ,  
 Մերկ ու սոված են տարի,  
 Զահելահել  
 Կովի տարան,  
 Գյուղը գատարկ են տարի,  
 Հողը մնաց  
 Առանց վարել,  
 Արտը կծղուն են տարի

Սովը յեկավ՝  
 Դուռը բաց եր,  
 Վողը ու լաց եր են տարի,  
 Մահը յեկավ՝  
 Ով անհաց եր,  
 Սրբեց տարալ են տարի,  
 Սրբեց տարալ,  
 Ցեվ գյուղերից.  
 Արնածարալ  
 Մահը կուշտ եր են տարի,  
 Կյանքը ծանը  
 Դժոխիք գառավ,  
 Արև չկար են տարի

Ու հիմա յերբ  
 Միտք եմ անում  
 Բերքը առատ ես տարի,  
 Արտը հասուն  
 Հետո խոսում,  
 Ծիծաղում ե ես տարի.  
 Ցեվ հասկերի  
 Ծփանքից մեղմ  
 Խնձ են նայում հազար դեմք,  
 Նրանք ընկած  
 Ըսկերներս են,  
 Վոր մահացան են տարի,

Նրանք կարծես  
 Բարձրանում են,  
 Որորվում են ու ժայռում,  
 Ու կարծես թե  
 Արտերը մեր  
 Նրանց արյամբ են փթթում,  
 Ու կարծես թե  
 Վարդերն յերկրի

Նըանց ծիծաղը լինի  
Ու կարծես թե  
Նըանց հետ լուռ  
Ջրուցում եմ յես հիմի,

Հողն անուշ ե,  
Յերգն անուշ ե,  
Կյանքը՝ ուրախ ես տարին  
Հողի մարդու  
Աչքը կուշտ ե,  
Ահ չունի նա ես տարի,  
Յերգ ու խնդում  
Մեր սրտերում,  
Կյանքը մերն ե ես տարի,  
Փառք մեր բերքին,  
Չեռքին, յերգին,  
Փառք մեր կովին ես տարի.

## Պ Ո Ե Մ Ն Ե Ր

1933

ՀԵՔՑԱԹ ՇԻՐԱԿԻ ՄԱՍԻՆ

1

Յիրակը կին եր մի ջահել,  
Եիրակը զյուղացու մի կին,  
Զեր սիրում, չեր ուզում մարդուն,  
Իր մարդը ծերուկ եր ու հին  
Դե ջահել մի կին նորահարս  
Վանց սիրի մի չոր ծերունու.  
Նա չեր գնաւ կսիրեմ, կառնես  
Մի սմբած կաշեղեն մարդու  
Եիրակը սիրում եր մեկին,  
Առույգ, մի ջահել տղի,  
Յեռանդով սիրուն ու նոդին լի,  
Վոր ուզի՝ յերկաթներ կծոփ,  
Վոր ուզի՝ արևներ կկոփ,  
Վոր ուզի՝ աշխարհը կհուզի,  
Կըանդի ու նորը կձուլի  
Եիրակը սիրում եր մեկին,  
Առույգ, մի ջահել տղի.

Ծերուկը չզիտեր այդ մասին,  
Ծերուկը ք  
Լսել եր հերյաթներ դատարկ,  
Զըույցներ եր լսել փուչ ու սին,  
Աստըծու, աշխարհի, չարքերի  
Դժոխքի, սատանի մասին,

Կարծում եր թե նա չի ուզի  
 Դժոխքում խաշի ու յեփի,  
 Ու յերբեք ու յերբեք ու յերբեք  
 Չի նայի Շիրակը ծուռ ճամբիւ  
 Այսպես եր մտուծում են ահել  
 Ամուսինը Շիրակի մասին,  
 Բայց գե նա, գեռատի մի կին,  
 Ինարկե, ջահելին կուզիւ

2

Յեկ ահա խոսում են այն մասին,  
 Թե Շիրակը ամուլ ե... չունի...  
 Վոր արդեն անցել ե տարին,  
 Աշխարհը դարձել ե նորից,  
 Հասել ե իր տեղը կրկին,  
 Կանաչը զարթել ե քնից,  
 Կաքավը յերգում ե քարին,  
 Իսկ ենտեղ—հիվանդ ե հիմա նա,  
 Շիրակը տաքություն ունի,  
 Թոքերը խաշվում են կարծես,  
 Արգանդը ուռել ե ցավից

—Շիրակի արգանդը փուչ ե,  
 Չըեր ե Շիրակը,—ասին,  
 —Շիրակը ինքն ել մի բան չե,  
 Անպարկեշտ ու լիբը ե,—ասին,  
 —Ավսան, ծերունին լավ մարդ ե,  
 Վոսկի յե, գոհար ե,—ասին,  
 —Շիրակի արգանդը լավ ե,  
 Բայց մարդը հիվանդ ե,—ասին.

—Ժայռերի շուրթերից ջուր քամեր,  
 Պատուեցեք կուրծքը ժայռերի,  
 Շիրակի շուրթերը չորցել են,  
 Ուրիշ ջուր ել նրան չի ոգնի  
 —Շինեցեք ջրանցք մի քարե,  
 Թող լողա Շիրակն են ջրում,  
 Շիրակի արգանդը քար ե,  
 Ուրիշ ջուր ել նրան չի ոգնի:  
 —Կմեռնի, ափսոս ե Շիրակը,  
 Ոգնեցեք, թե սիրում եք նրան,  
 Կմեռնի, կմնա սիրածը,  
 Ուրիշ ջուր ել նրան չի ոգնի:

—Ծերունին չի հոգում այդ մասին,  
 Ծերունին քնկոտ մի ահել  
 Կանչեցեք սիրածին Շիրակի,  
 են կայտառ իզիթին ջահել:  
 Կանչեցեք, թող գնմ, քանողի,  
 Հավաքի ջահելներին բոլոր,  
 Քաղաքի բանվորներին ջուռա  
 Ու բոլոր իզիթներին հանգի  
 Կանչեցեք, թող գնան փորեն,  
 Ջրանցք մի, քարե մի վորկոր,  
 Շիրակի արգանդը նորեն  
 Կյանք առնի, թարմություն մի նոր:  
 Ասացեք՝ Շիրակը մեռնում ե,  
 Արգանդը ուռել ե ցավից,  
 Ասացեք՝ թող յեխեն հանգը,  
 Զուր հանեն ջրերի բանտից:

3

Կյանքը կրտա  
 են ջահելը Շիրակին,

Զուր կըամի  
 Քարերի բիբա սըտերից,  
 իրեն կտա  
 Պայթյունների կըակին,  
 Չի վախենա  
 Ուժանակի հըգեհից:  
 Կհավաքի  
 Ընկերներին իր բոլոր  
 Ու քաղաքի  
 Բանվորներին են ջահել  
 Ու կրօնի  
 Կապսի ճամբան են քարուս  
 Ու կհամսի  
 Ախուրյանին են մոլոր

4

Ու համսում են նրանք,  
 Աշխատում են արդեն,  
 Մեղուների նման  
 Բանվորները առույգ:  
 Հա փորում են նրանք,  
 Ու կանչում են իրար,  
 Ու կանչում են, իրար  
 Ճանաչում են նրանք:  
 Ու պայթում ե ահա  
 Քարաժայոր մեկ եր  
 Ու թոշում են ասես  
 Բեկորները վերի,  
 Ու իջնում են թափով  
 Թլունգները թեթե,  
 Ու բահերը չափով  
 Քարձրանում են վերի

Յեկ հնչում են ուրախ  
 Աշխատանքի յերգեր,  
 Ու լցնում են հողը  
 Ու կախվում են ներքեն,  
 Քարձրանում են նորից,  
 Սպասում են կարծեա,  
 Ու պայթում ե ահա  
 Քարաժայոր մեկ եր

5

Ծերունին մեռել եր վազուց,  
 Ծերունին քնկոտ մի ահել,  
 Շիբակը սպասում եր արդեն  
 Իր սիրած իգիթին ջահել,  
 Անցել են տարիներ յերկու՝  
 Անկողին ե մաշում Շիբակը,  
 Անցել են տարիներ յերկու՝  
 Քարաժայոր ե տաշում սիրածը,  
 Լսել ե՝ վոր պիտի գան շուտով,  
 Լսել ե՝ վոր քիչ ե մնացել,  
 Լսել ե՝ վոր եսոր կամ եզուց  
 Ջրանցքը կրացվի շառաչով,  
 Ու ջուրը կհոսի կչկչան,  
 Ու իրեն դեպի ջուր կտանեն,  
 Ամենքը հըճվանքից կձան,  
 Յերր ջրից վողջ առողջ կը հանեն,  
 Ու զիտե, վոր կդառնա նա ել  
 Ու շուտով հարսանիք կլինի.  
 Իր սիրած իգիթին ջահել  
 Շիբակը հարազատ կլինի

Պիտի բացվեն, — ասին, —  
Դոները են բանտի,  
Ու դուքս թռչի ջուրը,  
Բոնի ճամբան ճանդի,  
Վոր գյուղերը խնդան  
Ու հյուղերը բոլոր,  
Ու սրտերը թնդան  
Ու չմնան մոլոր.  
Պիտի բացվի, — ասին, —  
Են ջրանցքը հսկա,  
Վոր Շիրակը իրեն  
Առողջ ու լավ զգա,  
Ասին՝ յերը վոր ուժգին  
Ողը ուրախ թնդա,  
Թնդանոթը ահեղ  
Յերը վորստա, խնդա,  
Հանդի ճամբով, ուրախ  
Են ջրանցքը կզա,  
Վոր Շիրակը իրեն  
Առողջ ու լավ զգա:

Խոնըվում ե բանտի գռան  
Բազմությունը անհամբեր,  
— Գնա, քամի, դեպի ջրանցք  
Ու Շիրակին ճամբավ բեր,  
Սպասում են պայծառ ժամի  
Թնդանոթին են ահեղ  
— Ահա ճամբույր, գնա, քամի,  
Տուր սիրածին են ջահել

Յեվ պայթում ե ահա,  
Վորպես սրախ կարսա,  
Հորիզոնի վրա  
Թնդանոթի վորուս  
Զուրը կանչով զվարթ,  
Կտրում ե ճամբաներ,  
Ժպտում են ճանդ ու արա,  
Ցնծում են բյուր սրտեր,  
Յեվ նետվում են ահա  
Թեժ գնդակներ կրկին,  
Կարծես յերկրի վրա  
Կախված մութ ամպերին,  
Ու շաչում ե ջուրը,  
Շառաչում ե ուժգին,  
Յեվ ուռչում ե կարծես,  
Վոլորում ե ուղին,  
Ու զանում են նըանք  
Հաղթանակով մարախց,  
Վորպես աշխույժ, կայտառ  
Հնձվորները արտից,  
Հավաքվում են են հուր  
Արմի տակ վոսկի,  
Սպասում են կարծես  
Զահել հարսի խոսքին  
Ու Շիրակը ահա  
Լողանում ե ենտեղ,  
Լողանում ե ենտեղ,  
Սպասում ե մեկին,  
Ու Շիրակը կարծես  
Հարբած լինի ենտեղ,  
Գեհ, Շիրակը ջահել՝  
Արծաթ գոտին մեջքին:

Յեկ սիրածին ահա  
Մոտ են բերում շուտով  
Ու քրտինքը ճակախն  
Հարսնիք անում փութով,  
Ու սիրածին ջահել  
Մոտ են բերում, ասում  
Ահա Շիրակը քո  
Հիմա քեզ ե հասնում  
Ու շախում ե ջորը,  
Շառաչում ե ուժգին,  
Յեկ ուռչում ե կարծես,  
Վոլորում ե ուղին:

—Շիրակի աչքը դուսը չե,  
Հզի յե Շիրակը, —ասին:  
—Շիրակը ահելից ե հզի,  
Բայց մարդը չիմանա, —ասին.  
—Այ հազա, քնկոտից են հին,  
Վոր քայլել չգիտեր, —ասին:  
—Շիրակը նամուսով մի հարս ե,  
Մի հարս ե, վոսկեվարս ե, —ասին:  
—Շիրակի մարդը հզոր ե,  
Հզոր ե, անահ ե, —ասին:  
—Վոր ուզի՝ կկոփ, կձուլի  
Ցերկինքը յերկրին —ասին:  
—Վոր ուզի կխառնի, կհուզի,  
Ցերկինքը կքանդի —ասին:  
—Վոր ուզի կքայլի աներեր,  
Աշխարհը —հողագունդը ուսին:

Շիրակը կին ե մի ջահել,  
Մի ջահել, բոլշեիկ տղի,  
Ու արղեն վաղուց ե ծնել  
Վոսկեշող բերքը իր հողին  
Ծնել ե և մի լույս տղա,  
Վորպես մի պայծառ արեղակ,  
Վոր լույս տա, հեա, շողշողա,  
Ու վայլի ջրերի կանչի տակ:

1925

Ն Ա Խ Ա Տ Ի Ն Ք Ը

Հոգում փոթորիկ եր, աչքերի մեջ՝ զայրույթ,  
նկան գեմքի վրա մոայլադեմ զիշեր.  
Սիրոց հուսալքման մութ կասկածն եր այրում,  
Յեղ հոնքերի մուժը աչքերին եր իջեր  
Յեղ զայրույթը վորպես անընկճելի զազան  
Կրծոտում եր կարծես նրա սիրութ, լափում,  
Յեղ զառնացած հոգուց տրտունջներով հազար  
Հայհոյանքի, թուքի անձրեներ են թափվում  
Վրդովել են նրան մի հաշվապահ չնչին,  
Մխալ հաշվիսեր եր բարդել նրա վրա,  
Անվանել են նրան «դրամաշորթ», «չարչի»  
Յեղ նա զառնացած եր ամբողջ հոգով՝ հիմա

Ու տուն մտափ այգակես, հոգին զայրույթով լի,  
Առաջ վազեց նրա չորս տարեկան տղան  
Յեղ ուրախ կարկաչով փարզեց հոր վոստերին,  
Սակայն նա սամնությամբ մի կողմ հրեց նրան  
Տղան լսեց, տիտր նայեց մաք աչքեղին,  
Իր մանկական հոգում լսցը պահած կարծես,  
Տղան լսեց, հետո զորպահնքը դեմքին  
Մայրը համբուրելով յերեխային գրկեց.  
Նա զգաց իր մարդու զայրույթը կատաղի,  
Փոթորիկը զգաց, վոր կա նրա հոգում,  
Յեղ յերեխան կարծես իր վշտից ու ահից  
Կուչ եր յեկել քաղցը իր մայրիկի զրկում,  
Իսկ նա սենյակի մեջ շրջում եր գեռ յերկար,

Շրջում եր նա յարված մեքենայի նման,  
Կովում եր նա իր մեջ փոքրան հոգում ուժ կար.  
Հայհոյում եր մտքում սրան—նրան

Հետո հոգնեց, փոլեց մահակալին իրա  
Յեղ հայացքը հասեց անորոշ մի կետի.  
Վերջալույսի շաղն եր զեմի պատի վրա,  
Նրա միջից մեկը լուս նայում եր պատից,  
Արկաշան եր, իր հին բարեկամը արի,  
Այդ նկարն եր նրա պատից նայում համառ,  
Աշխատել են նրանք մեկ տեղ քանից տարի,  
Ու միասին կավել կամունիդմի համար...  
Յեղ լուս նայում են նա խոհան այդ նկարին,  
Կարծես ափասանքով շնչում ե նրան.  
—Հիշում ես մեր սրառմ ինչ վառ հույսեր կային,  
Ինչ յերազներ վասկի, ուր են նրանք հիմառ  
Վերջալույսի վերջին շաղն ե պատի վրա  
Արկաշան ե նայում հայացքներով խոհուն,  
Թվում ե, թե նա լուս նախատամ ե նրան,  
Թվում ե, թե նա լուս ինչ վոր բան ե խորհում  
Արկաշան ե, իր հին բարեկամը արի,  
Նու լուս նախատամ ե իր հայացքով համառ,  
Աշխատել են նրանք մեկսեղ քանից տարի,  
Ու միասին կավել կամունիդմի համար  
Յեղ մաքերը նրա թափանցեցին հնուտ,  
Տարիները անցան ու վայրերը ծանոթ,  
Մաքերի մեջ ան կափերը յեռուն,  
Մաքերի մեջ՝ պայման արկեր ու հըբանոթ.

...Ահա զիշեր ե մեղմ, արծաթազոն զիշեր,  
Արկայծում են յերկնի աչքերն աղամանզե,  
Իր բարձունքից լուսինն արգեն վար ե իջել  
Ու վաղոցի լույսով քազաբներ ու հանդեր.

Ճնշող լոռության մեջ նիբնում ե մի քաղաք,  
 Քարացել ե կործես այդ քաղաքը անից,  
 Յեվ գիշերում խաղաղ՝ թևատարած անա  
 Մավառնում ե կարծես սառը շունչը մահի  
 Մի մութ պատուհանից, նեղիկ, մոայլաղեմ,  
 Յեվ ճաղապատ, խորունկ գերեզմանի նման,  
 Լուսնի շողերի տակ գուրս ե նայում մի գեմք,  
 Արմունկներով հենված ցուրտ ճաղերի վրա  
 Նա սուլում ե կամաց, Յեվ սուլոցը նրա  
 Ծանր մտքերն առած տարածվում ե հեռու,  
 Յեվ գիշերվա ճնշող լոռության մեջ անա  
 Այդ սուլոցի թախծոտ հնչյուններն են հեռում  
 Յեվ քաղաքի խաղաղ կտութերի վրա  
 Թվում ե, թե թել-թել բղկավում ե մի սիրտ  
 Թվում ե, թե մոայլ մի անձընոտ որվա  
 Տխուր հողմն ե սուլում մուգ կիրճերի միջից  
 Նա սուլում ե, Յեվ մեղմ հնչյունները յերգի  
 Նրա կյանքի ամրող պատմությունն են անում,  
 Նա սուլում ե, և այդ գուցե նրա վերջին,  
 Վերջին ցանկությունն ե այս լայն հին աշխարհում

Հետո լոեց, Հետո... Ահա շուռ յեկավ նա,  
 Ել չկա նա արգեն պատուհանի գիմաց,  
 Յեվ լուսինն ե սառած հայացքներով իրա  
 Վողողել այդ փոքրիկ պատուհանը գեռ բաց,  
 Դուրս բերեցին նրան չորս զինվորներ մոայլ,  
 Ու քայլում ե նա լուռ նրանց միջով ահա,  
 Հետեւում ե նրանց ստվերը բայլ առ քայլ,  
 Գընում ե առջեից մի սպիտակ սպան  
 Զընգում են նրա խթանները փայլուն,  
 Զընգում են, ու նա լուռ շարժվում ե առաջ,  
 Յեվ այդ զընգոցը թախիծով մի անհուն  
 Հնչում ե մեղմ, վորպես մահվան զանգի զողանչ,

Իսկ նա քալում ե լուռ, զլխահակ ու տրտում,  
 Վոտքի տակ տնքում ե քարոտ մի ճանապարհ,  
 Քարը սիրտ չեր՝ զգար ինչ ուներ նա սրտում,  
 Բնկերներին վերջին, վերջին բարեց տար

Ու կանգ առան նրանք Ահա յեկեղեցին,  
 Խավար գիշերվա պես խորհրդավոր նստած,  
 Նրա վրա խաչը՝ արնածարավ մի ցին,  
 Իր բարձունքից ահա մոայլ նայում ե ցած,  
 Ահա բակը Ահա արծաթազոծ մի լիճ.  
 Փարթամորեն կեցած կանաչ խնձորենին,  
 Մտվերի տակ նրա արյունոտ մի գահիճ,  
 Վոր լուռ սպասում ե ահա հրամանի  
 Յեվ ոձի պես սառը պարանի մի կտոր  
 Խնձորենու ճյուղից ահա կախվել ե ցած,  
 Յեվ յերկնի անհուն լոռության մեջ անգորը,  
 Վորպես լույսի հալվածը ջինջ մի սառապ ծորաց,  
 Սպան նշան արագի Յեվ գահիճը մոայլ  
 Առաջնորդեց նրան զեպի խնձորենին,  
 Յեվ սպրդնած լուսնի շողերը սառն, անփայլ,  
 Ընկան նրա խոհուն ու գժգունած դեմքին  
 Ու բարձրացավ նա լուռ պատվանդանի վրա,  
 Շուրջ զիշեր, աստղեր, զեմք գունատ լուսին,  
 Դաշիճը լուռ կապեց ձեռով ու վոտքը նրա,  
 Յեվ սպարանի ոզք զցեց նրա վզին,  
 Ահեղ շառայշունով պատվանդանը ընկավ,  
 Ու լուսինը վերից անով նայեց մոլոր,  
 Խնձորենու ճյուղը իջավ ու վեր յելավ,  
 Սրսփացին ծառի տերեները բոլոր...  
 Խնձորենու ճյուղը իջավ ու վեր յելավ,  
 Յերկու տերեւ զցեց կանաչ խնձորենին,  
 Յերկու կանաչ տերեւ արցունքների նման,  
 Յեկեղեցու բակի մամոստ, ցուրտ քարերին

Իսկ նա որորվում է ծննդան հենած կը ծքին,  
 Արորվում է մահվան խարսնել նիբհավ ահա,  
 Յեվ ասաղերը՝ կանաչ տերեների միջից  
 Լույս են սփռում նրա սառ գիտի վրա,  
 Յեվ նայում ե մասյլ հոկա յեկեղեցին,  
 Խավաթ պիշտի պես խորհրդաւոր նստած,  
 Աւ վրայից խաչը, փորսես սոված մի ցին,  
 Իր բարձունքից ահա ազահ նայում է ցած  
 . . . . .  
 Վերջայուսի շողն ե զեմի սրատի վրա,  
 Նրա միջից մեկը նայում է լուս, խոհուն,  
 Թվում է, թե նա լուս նախատում է նրան,  
 Թվում է, թե նա լուս ինչ վոր բան է խորհում  
 Արկաշան ե, իր հին բարեկամը արի,  
 Այդ պատկերն է նրա պատից նայում համաս,  
 Աշխատել են նրանք մեկտեղ բանից տարի,  
 Աւ միասին կավել կուռւնիզմի համար...  
 Յեվ նայում է նա լուս Աւ կյանք առած ահա  
 Նա հեզում է կարծես ու աչքերը թարթում,  
 Աւ կարծես թե խոհուն հայացքներսի իրա  
 Նա ընկերոջ կծու նախատինք է կարգում:  
 Նա ասում է—տեսար կանաչ խնձորենին,  
 Տեսար ողում ճոճվող իմ դիակը սասած:  
 Մակայն վոչ մի արտօննչ չիջավ իմ շաբթիրին,  
 Մեռնում եյի՝ աչքս հազթանակին հասած,  
 Աւ մեռա յես, ինձ պես հազարները ընկան,  
 Ընկան հազարները, անգերեղման, անթար,  
 Նրանց սրատում սակայն վոչ մի արտօննչ չկար,  
 Կովում եյին նրանք աներեր ու անվախ,  
 Իսկ քեզ վրդովիլ է վարձկան մի հաշվապահ,  
 Զրկել է քեզ ինչ վոր կոտեկներից չնչին,  
 Յեվ զու, վոզորելին, մորթապաշտի նման  
 Նահանջել ես ուղում մեր մարտերից վերջին:

. . . Խնձորենու ճյուղը իջավ ու վեր յելավ,  
 Սրսփացին ծասի տերեները բալորը,  
 Յերկու կանաչ տերեկ՝ յերկու արցունք ընկավ...  
 Աւ նայում է զեմից իր ընկերը մոլոր...  
 Աւ նայում է զեմից իր ընկերը մոլոր,  
 Արորվում է սգում և նայում է նրան,  
 Յեվ վասկետա վազվա յերազներով բալոր  
 Բունը թեատրած իջավ նրա վրա:

Լուսարացին նորից վառ լուսարացը շողաց,  
 Նետո գժգունեցին ասաղերն ազամանզե,  
 Արեգակը կարծես անկոզնուց զաւրս սոզաց,  
 Աւ կյանք առան կրկին բաղաքներ ու հանդեր:  
 Յեվ քաղաքից բորսը կտուրների վրա  
 Նոչեց զվարթաձայն մի ազմկոտ համերդ,  
 Այդ սուլիներն եյին, ձայնակցելով իրար,  
 Կանչում եյին կարծես—յելք, յելք, յելք...  
 Աւ արթնացավ նա ել կայսուս, զվարթաձայն  
 Մի յերգ սրանձ իրա շրթունքների վրա,  
 Աւ կացավ կամաց մահճակալին մանկան,  
 Անուշ նիբնը այստեղ որորում եր նրան  
 Յերկու համբույյը թողեց վարդ այտերին մանկան,  
 Գորավանքի մի շող փոեց զեմքի վրա,  
 Աւ զործարան զնաց բարձ ուժ ու մկան,  
 Իր մեքենան այստեղ սպասում եր նրան  
 Աւ ներս մտավ ահու Յեվ վողջունեց նրան  
 Գործարանի զվարթ ազմուկը միարար,  
 Մերենաներն ախտեղ յերգում եյին համառ  
 Կուռւնիզմի համար, կուռւնիզմի համար...

1933

## ԼԱՎՈՐԵՐԻ ՀԱՄԱՐ

1

Հազար ինձիու ուներ հոր ճակատը նբա,  
Սրեսախաշ դեմքին ժպիտ չկար բնավ,  
Հույսոր դրած իրա բազուկների վրա,  
Նրա կյանքը՝ ծովում հուսակտուր մի նավ.

Վորդին դեռ պատահի, տասչորս գարուն տեսած,  
Հազար սոված որեր ու տանջանքներ հոգու.  
Դառնություն ու զրկանք հոր հետ հալալ կիսած.  
Ուր եր զգվանք ու կյանք ծնողի և վորդու

Ապրում եյին նրանք հետին մի փողոցում,  
Վորդին, հայրը բանվոր, մեկ ել մայրը պատավ,  
Իրենց խարխուլ ու հին հողաշեն խրճիթում,  
Ուր վոր կյանքը նրանց պատիժ ու մահ դառավ:

Ուր վոր չկար արե, ուր վոր ծիծաղ չկար,  
Ուր կարիքն եր թքում իրենց սկ պատերին,  
Ուր ձմեռվա բուքին մի կտոր փայտ չկար,  
Ուր պարում եր բուքը իրենց հին կտուրին

2

Աշնան ցուրտ քամին ե խուլ հեծկլտում դրսում,  
Մութը արդեն ընկավ, բայց դեռ հայրը չկար,  
Խոնավ հին խրճիթում դեռ դողում են, մրսում,  
Սովասում են նրանք, մինչև վոր հայրը դաւ

Մեկը մայրն ե պառավ, մեկը վորդին ջահել,  
Սպասում ե մեկը վաղվա գալիք մահին,  
Մեկը սիրում ե միշտ կյանքին ուրախ նայել,  
Ու լորթ լինել կյանքում սարսափին ու ահին:

Մեկը իր վող կյանքում չի խնդացել բնավ,  
Բաղցին ու մերկությանը յեղել ե միշտ գերի,  
Մեկը փրփուր ծովում ափին համսող մի նավ,  
Հուսով ե, վոր կյանքը լավ որեր կըբերի

Սակայն ուշ ե արդեն, լուսինը մուր յելավ,  
Դրսում արթուն են լոկ վոստիկանն ու քամին,  
Քամին վոստիկանի խուլ սուրոցը բերավ.  
– Ինչնեւ հայրը չեկավ գիշերվա այս ժամին

3

Ամուր խփում ե նա խրճիթի հին դռան,  
Վճռական են նրա հարվածները, հատու.  
Ինչ վոր մի ուժ այսոր կյանք ե տվել նրան՝  
Նման ե նա կովում հաղթանակող մարդու

Ահով բաց ե անսում դուռը՝ կինը նրա,  
Ցենում ե հոր զիմաց վորդին իր պատահի,  
Կարծես ծիծաղում ե տանջված դեմքը նրա,  
Իսկ դրսում դեռ սուլում, սուրում ե մի քամի:

– Ուրախ յեղիր, կնիկ, լավ որեր պիտի գան,  
Պիտի կոիկ լինի տիրոջ ու բանվորի,  
Պիտի փշրենք շուտով ամեն շղթա, կապանք,  
Պիտի պատրաստ լինենք այդ մեծ կովի որին

Ու լուս ե վորդին հիացմունքով, արի,  
Ուզում ե, վոր շուտ գան այդ որերը յեռուն,  
Ինքը դուրս գա հոր հետ ու զրոշակ պահի,  
Մաս ունենա ինքն ել այդ մեծ որվա կովում:

151

Այդ պատմութ ինչեր, ինչեր չանցան,  
Վոսի յերազներով ցուրտ խռճիթը լցվեց,  
Մինչ հոգնուծ գլխով քնի զիրկը անցավ,  
Ու քնի մեջ տեսավ գալիք որերը մեծ:

Տևագի թոշում եյին զնզակները հրե,  
Առաջեր եյին պայթում պալատների վրա,  
Մի բառնցր եր կալվել պալատներից վերի,  
Այդ բառնցրը կարծես հոր ձեռքըն եր իրա:

Տեսագի իրան՝ սիրուն, կարմիք շարերը հաղին,  
Բազմանազար ջահել աղջիկներ ու աղերը,  
Առջեւմ եր կանզնել ինքը այդ մեծ շարքի,  
Լովազմ եր շատ խրօսոյ ու հազթական մի յերգ:

Խոնարհեցին իրենք այդ բառնցրի զիմաց,  
Ու խոսք տվին լինել նրան միշտ հարազատ,  
Այդ բառնցրի նման ամուր ու միացած,  
Այդ բառնցրի նման վճռական ու ազատ:

Յեկ թսպում և զրում անելպագոչ վարս,  
Ճայթում են զնզակներ անթիվ ու անձնաւր,  
Զինված զուրս են յեկել բանվորները, վորոնը  
Կովում են յերկիրը ձեռք բերելու համար:

Դուրս յեկավ կովի զաշա նրս հայրն ել այդ որը  
Վառքից մինչե զլուխ զենքի մեջ, պատրաստ,  
Վարդին յերկար ինսպրեց ու աղաչեց հորը,  
Վոր իրեն ել տանի այդ որը կովի զաշա:

Բայց խրատեց հայրը ու համուեց մնալ,  
Ասաց պիտի աեղա զնզակների տարափ,  
Չքարձրանս կտուր ու փողոց չը զնա,  
Փողոցներում լի յեն այսոր մահ ու սարսափ:

Յեկ թսպում և զրում անելպագոչ վորոտ,  
Ճայթում են զնզակներ անթիվ ու անձնաւր,  
Զինված զուրս են յեկել բանվորները, վորոնք  
Կովում են յերկիրը ձեռք բերելու համար:

Գնզակներն են վզզում փողոցներում ահա,  
Յեկ սուրում և ուրախ հոկտեմբերի քամին,  
Դուրս յեկել փողոց մի պատմուի անան,  
Ուր և զնում արցյուր այս ահսելի ժամին:

Գնում են այս այնուեզ, վոր իր հորը զանի,  
Գնում ե, վոր համան այդ արյունոտ կովին,  
Դուցե լինքը այնակ պիտանի կը լինի,  
Զուր կրերի կոզնի կովով բնկերներին:

Անցնում ե ծուռ ու ծուռ փողոցներով հետին,  
Ու թեքում ե ահա մի տասյի փողոց,  
Ուր զիակներ կային փալած սառը գետնին,  
Ու լովում եր ուժեղ ահավոր մի սուրոց:

—Կանզնիր, մի են, —զոչեց սարսափ ապդոդ մի ձայն,  
Ու մոտեցան նրան յերկու զինված մարդիկ,  
Նրանք իր հոր նման ունեցին հըքացան,  
Հազել յեխն հոր պես զեղին անդրսավարտիկ:

Թվաց նրան, թի հոր բնկերներն են նորս,  
Ու թվաց, թի նրանք հանաչում են հորը,  
Ու կարծում եր հիմ վոր իր հայրն ել կզա,  
Չվախեցալ, պատմեց համարձակ բոլորը:

—իմ հայրն ել ձեղ նման կովող բանվոր ե մի,  
Նա ել զնաց կովի լավ որերի համար,  
Ուզում եմ, վոր յես ել այստեղ լինեմ հիմի,  
Ու ոգտակալ լինեմ այդ մեծ կովի համար:

Այդպես խոսում եր դեռ վորոտաց մի ապտակ,  
Ու պատանին փովեց պաղ մայթերի վրա,  
Ու վորոտով կպավ շիկացած մի զնդակ,  
Ենք բարերը ներկեց մուգ արյունը նրա:

Այդ փողոցում հողմը մահը յերգեց նրա,  
Սրեր համրուրեց ճակատը դժգունակ,  
Քամին լսեց միայն վերջին ճիչը նրա,  
Մեկ ել կողքի քարը սառը գետնին քնած:

7

Տուն եր գառնում հայրը հաղթանակով արի,  
Սուլում եր հողմի հետ նա ել ուրախ մի յերգ,  
Աչքը ընկավ հանկարծ արյունոտ մի քարի,  
Ու այդ քարի վրա՝ արյունոտված մի ձեռք:

Յերբ մոտեցավ բարին՝ հեկեկաց նա բարձր,  
Տեսավ արյունաներկ դիակը իր վորդու,  
Ու կոացավ, զրկեց զորովանքով քաղցր,  
Ենք զլսիկոր ու լուս վորդուն տարավ նա տուն:

Ուր վոր չկոր արև, ուր վոր ծիծաղ չկար,  
Ուր կարիքն եր թքում իրենց սե պատերին,  
Ուր ձմեռվա բուքին մի կտոր փայտ չկար,  
Ու պարում եր բուքը իրենց հին կտորին:

Դուռը հրեց վոտքով ու ներս մտավ նա տուն  
Ենք դիակը զրեց մերկ սեղանի վրա,  
Մայրը ճշաց ցավից, զրկեց մեռած վորդուն,  
Համբույրներով ծածկեց սառած դեմքը նրա:

Հայրը կանգնել եր լուս, շրթունքները սեղմած,  
Ուզում եր, վոր լացը ատամներով պահի,  
Քամին աղմկում եր զբսում բերանը բաց,  
Ու աշխարհին ուրախ ավետիս եր տալիս:

—Լաց մի լինի, կնիկ, յեղիր հանգիստ, արի,  
Հաղթանակը տարանք այս մեծ որվա կովում,  
Վերջին շապիկս առ, վորդուս պատան կարի,  
Այս որվանից կյանքը մեզ նոր բախտ ե կոռում:

Այսորվանից մեռավ ամեն տանջանքու ահ,  
Հազար նոր սերունդներ պիտի հիշեն հավետ  
Նրանց, վոր մահացան, բայց մնացին անմահ,  
Մեր վորդուն ել մեռած այդ քաջ բյուրերի հետ:

1926

Պ Ա Հ Ա Կ Ը

— Այս լեզուց պատմանձիք համ, — Ճամփո  
ավեց են կողմից վարական Անեփը:  
— Այս տպա, բնաշի եռ եղափա տառամ, ինչ  
մի վասա բան առ յերկաթարդին:  
Հ Ա Գ Հ Բ Ա Վ Ե Մ Ա Յ Ա Խ Ա Կ Ը

**Զ**եր հին ձորեքով անցաւ յես, վարդին,  
Տեսա ժայռեր ու քերծեր վիթխարի,  
Անտառից վչոց զեփյուաների հետ  
Դե-Բեկը յերգով ալիք եր տալիս  
Տեսա Լուեցի վարովան Ասեփին,  
Ա՛, վորսան եր նաև փափախվել, վարդին,  
Դե-Բեկի զուլուլ ջրերի ափին  
Կանզնած եր նաև իր մահուկների հետ  
Այն համենի փափախն իր զլխին,  
Հին արեիները, վար ուներ առաջ,  
Բայց չեր անիծում նաև յերկաթուզին  
Բանել եր ձեռքին լոպտերը կանաչ,  
Վոր շաղեքարշը սուլի համարձակ,  
Դղրդան կոռուծ անտառ ու ձորեր,  
Վարսկան Ասեփի անել կըծքի տակ  
Այն հին սարսափը վազուց է կորեր  
Զեր հին ձորեքով անցաւ յեր, վարդին,  
Տեսա ժայռեր ու քերծեր վիթխարի,  
Անտառից վչոց զեփյուաների հետ  
Դե-Բեկը յերգով ալիք եր տալիս

Ուներ նու այնտեղ վայսաշնն մի տուն,  
Մի աղջիկ ուներ ու յերկու տղա.  
Ուելսերի վրա հսկում եր արթուն,  
Գծի պահակ եր կոչումը նրան  
Կարմիր ու կանաչ զբաշներ ուներ,  
Կարմիր ու կանաչ լոպտերներ սիրուն,  
Երջում եր նաև միշտ գծով վար ու վեր,  
Գնացը զալիս՝ զըրուշ եր պահում,  
Գնացը զալիս՝ զըրզում ելին  
Ու կենդանանում ձորերն այդ ամա,  
Յեղ կանաչ զըրուշ բանած իր ձեռին  
Նա կանզնում եր մինչ զնացըն հեռանան,  
Իսկ յերբ հազնում եր կամ թե ձանձրանում,  
Նստում եր զուրալ Դե-Բեկի ափին,  
Դիտում եր՝ մութը վանց և թանձրանում,  
Ու ձորը կախում ամեն քարափից,  
Իրիկամ մուժում նստում եր նաև լուս,  
Յերկինը եր յենում լուսին արծաթի,  
Ու զեմն եր թափում հստոկ ու մարտը  
Ասողերի կաթը կաթիլ առ կաթիր  
Ու թոշում ելին խոները նրա  
Մոտիկ ու հսուս ասրիներն անցած,  
Կարծես Դե-Բեկի ջրերի վրա  
Հին կազնի լիներ խոհան կոացած,  
Կարծես Դե-Բեկի ջրերի միջով  
Իր ջանել կյանքի որերն են հսուս,  
Ու ալիքները բաղցը կարկաչով  
Իր սրտի հետ են զրուցում, խոսում,  
Բայց հանկարծ հեռվից վիչալով, խրոխու  
Սուրսում եր հակա զնացըն արևաչ,  
Նա վեր եր կինում, կանզնում գծի մոտ  
Բոնած իր ձեռքին լոպտերը կանաչ

Մութ եր այն գիշեր — վոչ աստղ, վոչ լուսին.  
 Զորը լցված եր խավարով անհուն,  
 Փայտե խրճիթից ճրադի լույսի  
 Ցոլքն եր կայծկլառում թանձը խավարում:  
 Վորոտում եյին ամպերն ահարկու,  
 Ճայթում, ճարճատում, զգրգում եյին,  
 Կայծակն անհունի մեջքն եր մտրակում,  
 Ու թնդում եյին ձորերը այն հին.  
 Ու թնդում եյին ձորերը այն հին,  
 Թափում եր առատ հորդ տեղատարափ,  
 Ցեղ անձրեի տակ լվացվում եյին  
 Ու ծեծվում եյին քերծեր ու քարափ  
 Գծի յերկայնքով, խավարում հեռու,  
 Կանաչ մի լույս եր դեղերում անահ,  
 Մերթ կորչում եր նա ու մերթ յերկում,  
 Ցերերում սիրուն ասուպի նման  
 Գծի պահակն եր, լապտերը ձեռին  
 Հսկում եր ահա գիծը՝ վար ու վեր,  
 Լապտերի լույսն եր փոռում ռեյսերին,  
 Իսկ անձրեց հորդ շափշափում եր գեռ  
 Իսկ ամպերը դեռ վորոտում եյին,  
 Ճայթում, ճարճատում, թնդում ահարկու,  
 Մոայլ անհունի ամպած կողերին  
 Անել կայծակն եր թափով մտրակում,  
 Բայց հանկարծ հնչեց անեղ մի թնդյուն,  
 Փուր յեկան մթնում լեռները կարծես,  
 Ցերկիրը ցնցվեց, կարծես ընդերքում  
 Վառողի հսկա անեղ լեռ պայթեց:  
 Ու արձագանքը ահեղ թնդյունի  
 Սնցավ ձորից ձոր, թնդաց լեռից լեռ,  
 Ու կորավ խորքում հեռու անհունի,  
 Իսկ անձրեց հորդ շափշափում եր գեռ:

Վազում եր կանաչ լապտերը ձեռին  
 Գծի պահակը հուզված, ահարեկ,  
 — Ասես ինչ յեղավ հիմա գծերին —  
 Լուռ մտառում եր նա իր հոգու հետ,  
 — Ասես ինչ յեղավ...—Ու վազում եր նա  
 Անձրեից ծեծված, թրջված, ծանրացած,  
 Բայց ներքին մի ուժ մղում եր նրան  
 Գծի յերկայնքով շտապ դեպի ցած  
 Վազում եր... Հանկարծ կանգ առավ սառած,  
 Լապտերի կանաչ լույսի տակ ազոտ՝  
 Ահազին մի ժայռ, լեռներից պոկված,  
 Ընկած եր գծին, իր վուների մոտ:  
 Լեռներից պոկված ահազին մի ժայռ,  
 Մահան պես դաժան նստած ռելսերին,  
 Շուրջը ամայի քարափներ ու ծառ,  
 Ցեղ մթին գիշեր — վոչ աստղ, վոչ լուսին  
 — Հիսա ինչ անի, զնացք պիոնի զա —  
 Ու կանզնած տեղը շվարեց ահով —  
 Կզա ակները քարովը կտա,  
 Ջորը կլցվի արյունով, մահով  
 Ու թվաց նրան՝ գիշերվա մթնում  
 Հսկա զնացք ե խորսակվում ահա,  
 Ու հազար զիեր Դե-Բեղն են թափում,  
 Որորփում նրա ջրերի վրա  
 Բայց հանկարծ ինչպես կայծակը մթնում  
 Փայլատակում եր անտառ ու ձորեր,  
 Լուսավոր մի խոհ շողաց իր մտքում,  
 Իսկ անձրեց հորդ շափշափում եր գեռ  
 Իսկ ամպերը դեռ վորոտում եյին,  
 Ճայթում, ճարճատում, թնդում ահարկու,  
 Մոայլ անհունի ամպած կողերին  
 Անեղ կայծակն եր թափով մտրակում,  
 Վազեց նա դեպի խրճիթը իրա,

Անձրեից ծեծված, հուզված, ահարեկ,  
Կարծես մարերը խիզախ ու անահ  
Մարտնչում եյին նրա հոդու հետ

3

Նստած փայտաշեն լրճիթի խորքում,  
Ճրագի լուսում գմբույն ու աղոս,  
Պատահի վորպին իր զամն եր կարդում,  
Կուցած սպառավ իր մոր ծնկան մոտ  
Յերկու փորբերը — աղջիկ ու աղա,  
Երիտում եյին լուս մի թախտի վրա,  
Իսկ պառավ մարտը գողգոջ ու յերեր,  
Լուս կարկասում եր շորերը իրաւ  
Իսկ անձրեց գես ծեծում եր զբոսում,  
Ծեծում եր անվերջ ծածկ ու լուսամուտ.  
Գուղը ճռնչաց, լրճիթի շեմքում  
Յերկաց ծեր հոր կերպարանքը մուտի,  
Ներս մտավ շտաս, վանց յերինից ուսկիուն  
Անձրես ամպի կախված մի քաւրտ,  
Շորերից ջուրը կաթկաթում եր ցած  
Փալտաշեն իր ասն հատակի վրա  
— Գիրքգ թող, վորդի, զնա Սանտահին.  
Ու վասեց շտաս մի կարմիր լապտեր,  
Ասա՞ թող պետք գնացը պահի՝  
Թէ կայարանից գուրս չի յեկել գես  
Մայրը սարսափեց. իսկ վորդին արասում,  
Տեսնելով իր հար գեմքը վշտահար,  
Վեր կացավ տեղից, անխօս, անծովստն,  
Լապտերը առավ, ընկավ ճանապարհ,  
— Վեր հանիր զու ել յերեխաներին,  
Շուտ արա, կնիկ, ժամանակ չկա,  
Աժդահա ժայռ ե ընկել ոելուերին,  
Հիմա ուր վոր ե գնացը կզաւ

Իսկ նա վառում եր կարմիր լապտերներ,  
Ու ինքըն իրեն շշնջում առով.  
— Կա ակները քարովը կոտա,  
Չորը կըլցվի արյունով, մահով.

Ոելսերի վրա յերկու մանուկներ,  
Զեռներին կարմիր լապտերներ պահած,  
Գնացքի ճամբին սպասում են դեռ,  
Հորդ անձրեկ տակ, քունները կտրած,  
Իսկ այստեղ հեռվում, զծով զեսի վեր,  
Վազում ե արագ մի կարմիր կրակ.  
Ոելսերի վրա յերկու մանուկներ,  
Խավար ձորի մեջ, հորդ անձրեկ տակ  
Իսկ ճռոյները մարտնչում եյին  
Նրանցից ներքեն, հոկա ժայռի հետ,  
Վոր մահի նման նստել զծերին,  
Համառում եր դեռ ու չեր զանսում յետ  
Ոելսերի վրա յերկու մանուկներ,  
Զեռներին կարմիր լապտերներ պահած,  
Իսկ անձրելը հորդ շավշափում եր դեռ,  
Ծեծում, հեծեծում, թթում եր նրանց,  
Իսկ ամպերը զեռ վորոտում եյին,  
Ճայթում, ճարճատում, թնդում ահարկու,  
Մռայլ անհունի ամպած կողերին  
Ահեղ կայծակն եր թափով մտրակում.

4

Հանկարծ զիշերվա մինում ահուլի,  
Վորպես վիրավոր զազանի վոռնոց,  
Կարծես մահագում սարսափներով լի,  
Հնչեց գնացքի թախծոտ ծզրտոց,  
Ահով լցվեցին ձորերը կարծես,  
Գնացքի կանչը կրկնվեց ահա,

Դողացին անով թուշոնների պես  
 Յերկու մանուկներ գծերի վրատ  
 — Ասես կարդի ե զնացքը պահի...  
 Ասես տեսնում ե լույսերը կարմիր...  
 Գծի պահակը յերկուղից, ահից  
 Կարծես մոռացավ անելիքը իր  
 Խոկ գետից հսկա վիշտավի նման  
 Դնացքն եր ահա ֆշալով սողում,  
 Յեկ ահեղագոչ թնդյունից նրա  
 Ապառաժներն ու ժայռերն են դողում  
 Ու մոտենում եր զույգ աչքերով վառ,  
 Բնթացքը նրա չեր գանդաղում դեռ,  
 Ու գծի վրա դիակի պես սառ  
 Դեռ կանգնած եյխն յերկու մանուկներ  
 Բայց ահա կարծես դանդաղում ե նա,  
 Շարժաթերել գանում են կամաց,  
 Ու գալարվելով, սողալով ահա  
 Գծի վրայով նա սահում ե ցած  
 Խոկ անձրես հորդ շափշափում եր դեռ,  
 Խոկ ամպերը դեռ վարուում եյխն,  
 Ու դողում եյխն յերկու մանուկներ  
 Կարմիր լապտերներ բռնած ձեռնելին  
 Դնացքն ալեկի գանդաղեց կարծես,  
 Ել չուներ նախկին թափր սրբնթաց,  
 Ու հոգնած, անքուն ուղիորի պես  
 Կանգ առավ կարմիր լույսերի գիմաց,  
 Մեքենավարը քրտնած, ահարեկ,  
 Իր շոգեքարշից շտապ թռաւլ ցած,  
 Գծի պահակի ահել սրտի հետ  
 Ահոելի ձորը խնդությամբ թնդաց  
 Ու մթին ձորի թանձը խավարում  
 Մեքենավարը փաթաթվեց նրան,  
 Յեկ հուզմունքով լի, ջերմությամբ անհուն,

Նրանց շուրթերը միացան իրար  
 Խոկ ամպերը զեռ վորոտում եյխն,  
 Խոկ անձրես հորդ շափշափում եր դեռ,  
 Ու կարմիր լապտեր բռնած ձեռներին  
 Լուռ նայում եյխն յերկու մանուկներ

\* \* \*

Զեր հին ձորերով անցա յես, վարպետ,  
 Տեսս ժայռեր ու քերծեր վլթխարի,  
 Անտառից վչող զեփյուռների հետ  
 Դեմենդը յերգով ալիք եր տալիս  
 Տեսս լոռեցի վորսկան Ոսեփին,  
 Ո՛, վորքան եր նա փոփոխվել, վարպետ,  
 Դեմենդի զուլալ ջըերի ափին  
 Կանգնած եր նա իր մանուկների հետ

1984

## Արեւելան Պուշկի

Եղանակը պատճեն է պահած  
Տիգրան առաջնորդ ամառավայրից  
Եղանակը պատճեն է պահած  
Տիգրան առաջնորդ ամառավայրից

Եղանակը պատճեն է պահած  
Տիգրան առաջնորդ ամառավայրից  
Եղանակը պատճեն է պահած  
Տիգրան առաջնորդ ամառավայրից

ՊԵՐՎՈՅ ԾԱՌԱՅՈՂ

Ի Ր Ա Ն Ի

Ա Ր Ա Զ Ի Ն Յ Ե Ր Գ

1

Յերգում եյին փողոցում, շուկաներում քաղաքի,  
Բակերի մեջ, ամենուր յերկու յերգիչներ,  
Մինչև արև թագուհին իր ծիրանին հալաքի,  
Մինչև կապոյշ շղարզով յերեկոն իջներ,  
Մինչև ազանը ձգվեր խորախորհուրդ մրմունջով  
Կտորներից հողաշեն ու մղկիթներից,  
Մինչև աղքատը վերջին, կյանքի դառը արտաւնջով,  
Աղերսները վողբաձայն կտրեր տներից,  
Մինչև աղոտ լույսերով փայլեր ամեն ասակի,  
Ու սկ չաղբայի նման զիշերը իջներ,  
Յերգում եյին փողոցում, շուկաներում քաղաքի,  
Բակերի մեջ, ամենուր յերկու յերգիչների

2

Սիրում եյին այդ յերկու յեղբայրներին հարազատ,  
Յերգիչներին՝ հոգեթով հույզերի աղբյուր,  
Նրանք յերկու յեղբայրներ իրենց յերգերով աղատ  
Մտնում եյին ամեն սիրտ, բացում ամեն դռւու  
Նրանք յերկու յեղբայրներ, յերկու ծաղկած նշենի,  
Յերկու արփի նորածագ, յերկու վարդատունկ,  
Նրանք յերկու յեղբայրներ, կարիքը միշտ փեշերին  
Ամեն զիշեր միասին զնում եյին տուն

Մեկ մեկու դեմ սիրով լի. մեկ մեկու դեմ սըտաբաց,  
Բայց մորմոքած սըտերում հոգսը միշտ արթուն,  
Նրանք յերկու յերգիչներ՝ յերգի մըմունջով հարրած,  
Յերազներով հոգեթով մտնում եյին քուն.

3

Ու յերր բացվում եր արփին, փոռում աշխարհի վրա  
Նարինջագույն մեսաքսի քնքուշ զաղիփան,  
Յերր Եյնալի սարերից իջնում եր հովը ահա՝  
Համբուրելով անցնում եր ամեն վարդաստան,  
Յերր Իրանի վարդարույր կանաչ աչքերի նման  
Բացվում Եյին վարդերի կոկնները վառ,  
Բուրում Եյին ջինջ ողում ուհան, վարդ ու յեսաման,  
Խմում Եյին արկի ճաճանչները զառ,  
Ու յերր բացվում Եյին նուրբ շուշանները սաղափի,  
Թերթիկներով լուսածոր՝ աստղի թարթիչներ,  
Յերգում Եյին փողոցում, շուկաներում քաղաքի,  
Բակերի մեջ, ամենուր յերկու յերգիչներ.

4

Յեվ հնչում եր այդ յերկու յերգիչների սըտահույզ,  
Սըտամորմոք թախիծի յերգը վարարուն,  
Յեվ հնչյունները յերգի՛ վորպես հույզերի վորկույզ,  
Ծախում Եյին կոկիծով նրանք բաղարում,  
Յեվ հնչյունները յերգի սառում Եյին շուկայի  
Մութ կամարների ներքո, ընկնում Եյին վար,  
Վորպես անկենդան մետսոյ պղնձաձույլ մի շահի,  
Իրու յերգի, հույզերի ու արցունքի վարձ,  
Յեվ հավաքում Եյին լուռ յերգիչները այդ յերկու.  
Շահիները պղնձի անկենդան ու պաղ,  
Գնում Եյին ընկնջած, ամոթահար ու նկուն,  
Անցնում Եյին շուկաներ, մտնում թաղից թաղ.

5

Ու տարածվում եր նրանց՝ Սափարի ու Զեյնալի  
Յերգի հոչակն ամենուր, մտնում անից տուն,

Նրանք մի զույզ յերգիչներ հարազատ ու սիրալի,  
Ծաղկոցների բուրմունքը նրանց ջինջ սրտուն  
Նրանք մի զույզ յերգիչներ ու աշխարհում վարդաստան  
Վարդերի փուշն եր միայն բաժինք նրանց,  
Այդպես յերգով չեր մտել վոչ մի սոխակ Գյուլիստան՝  
Խանչախները հոգսերի սըտերում լիրած,  
Այդպիսի յերգ չեն լսել շուշանները սաղափի,  
Յերր վոր զեփյուոր նրանց շուրթերին իջներ,  
Յերգում Եյին փողոցում, շուկաներում քաղաքի,  
Բակերի մեջ, ամենուր յերկու յերգիչներ.

Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ Յ Ե Ր Գ

1

Արդուլ խանի հոյաշեն պարտեղները անսահման,  
Ոթախները գորգաղարդ՝ մետաքս ու ատլաս,  
Արդուլ խանի մարմարե ապարանք անսման,  
Մնդուկներում մարգարիտ, գոհար ու ալմաստ,  
Արդուլ խանի ուղաբերի շարանները անհամար,  
Մետաքս գորգերով բեռնած ձգված չինդ ու ջին,  
Արդուլ խանի բաղերում վորքան, վորքան նուշի ծառ,  
Վորքան թաղեր խաղողի, ծիրան ու անջիր,  
Արդուլ խանի հարեմում վորքան լուսաշող գոհար,  
Աղամանդներ շողշողուն աստղերից վճիտ,  
Արդուլ խանի պարտեղի վարդերից ել թարմ ու վառ  
Քանի չքնաղ փերիներ հարեմի միջին:

2

Աղամանքի զեմ զիմաց ավաղանը մարմարի,  
Շատրվանը ալմաստի հալոցք և ծորում,  
Շուրջը գորգերն ալվան ծաղիկների, վարդերի,  
Վորքնց վրա արեն իր գույներն և ցողում,  
Մանդուխներին՝ մետաքսե ասեղնակար բարձերին,  
Նստոտել են անկանոն կանայք Արդուլի,  
Հովք իջել ե նրանց արբեշումե վարսերին՝  
Համբույք ու բույք տանելու վարդին, սյումրուլին  
Յերկու ջահել դարավաշ սինիներով արծաթի,  
Նախշուն գինչանների մեջ բերում են զյուլար,  
Վարդի բույքրդ հազեցած, վորպես չքնաղ հեքյաթի  
Հրաշք աղբյուրների ջուր, նրա պես զուլար

3

Ու նրանց մեջ նստել ե հարեմի ծեր ներքինին,  
Գլխին զեղին արախչին, հաղին արխալուզ,  
Վրան փաթթած յերկնագույն իր մեջկապը սաթինի,  
Դեմքը՝ թոշնած զեղձի պես, անրեխ, անմորուք:  
Կատակում են նրա հետ ու քաշքում են նրան  
Շարժումներով զրպովէ, լակիրշ ու կրօստ,  
Արդուլ խանի հարեմի կանայք՝ սողունի նման  
Գալարվում են, տապկլատում իրը նրա մոտ  
Ու բրջում ե անդոր ծեր ներքինին հարեմի,  
Ցեվ կանացի իր ձայնով ճվճվում անդուր,  
Բայց քաշքում են նրան ու զալարվում են ելի,  
Աղաչանը ներքինու իզուր ու իզուր...

4

Ավաղանի շողշողուն, մարմար պոռունկին նստած,  
Իր մոքերին անձնատուր չքնար նաջիրան  
Բաղամածն աչքերի յերկար թարթիչները թաց՝  
Կախել եր լուրթ ջրերին, գիշերվա նման  
Ու կարծես թե վարդերի ցուքն եր ընկել այտերին,  
Կուրծքը յենում եր իջնում, վորպես հովի խաղ,  
Նկարել եր լուսաշող ավաղանի հայելին  
Նրա պատկերը նրբին, նոճու պես չքնաղ  
Ցեվ ջրերի հայելում հում եր կուրծքը նրա,  
Կարծես այդ հաքն եր հուզում կոհակները բյուր,  
Կարծես զեփյուռը միայն վառ կարոտովը նրա,  
Նրա համբույքի համար մտավ խաղաղ ջուր:

5

Արդուլ խանի հարեմի աղամանդն եր նաջիրան,  
Նրա զարդը սիրելի վողջ հարեմի մեջ.  
Նրա հայրը հանգերում կյանքը մաշած մի չորան,  
Աղբյուրների պես հստակ, գառների պես խեղճ:  
Ուրախ արցունքն աչքերին՝ քյարին արակ աղջկան,

Տվեց խանի հարեմին վորպես մի փեշքեշ,  
— Արարիչ տեր, — ասաց նա, — իմ սիրելի նաջիբան  
Խանում լինի բախտավոր՝ խանումների մեջ,  
Բայց հոգու մեջ ամպ ուներ ու զժրախտ եր նաջիբան,  
Մոտենում եր ծեր խանին խորը նողկանքով,  
Ու թոշնում եր ջրափի զյուլը սարահու նման,  
Ցերը թերվում եր արեր իջնում յերեկոն.

6

Ավագանի ավիլն մինչ՝ լուռ թախծում եր նաջիբան,  
Ու արցունքն եր լվանում վիշտը աչքերի,  
Խանի կանանց ճանկերից, ցամքած աղվեսի նման,  
Դուրս եր պրծել հարեմի ծերուկ ներքինին  
Ու քրքջում եյին դեռ նստած մետաքս բարձերին,  
Հնչուն ծիծաղը նրանց առվի պես զուլալ,  
Ղարավաշները նրանց, Արդուլ խանի հարսերին,  
Բերում եյին սառնորակ շարքաթ ու զյուլարու  
Ու յերը տրտությամբ կախված՝ նաջիբայի ամպի պես  
Թարթիչները սևաթույր ջրից բարձրացան,  
Ծաղկոցից զուրս, փողոցում, անցնելով բակ ու պարտեզ,  
Սրտակեղեք կանչի պես հասալ յերգի ձայն.

7

Տարածվում եր այդ յերգը, վորպես դառը սրտերի  
Վշտամորմոր, սրտարուխ արցունքների ծոր,  
Ցեղ հնչյունները յերգի իջնում եյին վարդերին,  
Վորպես կաթիլ առ կաթիլ սրտից իջնող ցորու  
Ցեղ հնչյունները յերգի իջնում եյին սրտերին—  
Հոգու հրդեհ եր կարծես բռնկել ողում,  
Զերմությունից այդ յերգի բույրն եր քամվում վարդերի.  
Ու ներծծվում ամեն մի զգայուն հոգում  
Հնչյունները այդ յերգի այրում եր սիրտը նրանց,  
Վորպես բոցի կաթիներ պոկված արկից,  
Լսում եյին մետաքսէ իրենց բարձերին նստած  
Սիրունները մարմարե՛ խանի հարեմին

8

Ու յերը սառեցին յերգի թրթլուները յեթերում,  
Ինչպես մըրունջն ազանի լրիկվա պահին,  
Ինչպես հանգչում ե խաղաղ ամեն գիշեր թիերում  
Առուների յեղերքի զյուլը սարահին,  
— Կանչի, ծերուկ, — ասացին սիրուները հարեմի,  
— Կանչի թող գան ու յերգն մինչև լրիկուն,  
— Կանչի, ծերուկ, զեռ շատ կա մայրամուտին արեի,  
Աղերսեցին մեկ առ մեկ նրանք ներքինուն  
Ու ներքինին թռնթռնիաց, քիչ համառեց, տրտնջաց,  
Հետո ժպտաց խորամանկ, բացեց փեշն իրա,  
Ցեվ արծաթի թումանը նրա փեշում ծնգաց,  
Ու փայլ փոեց խորշոմած յերեսին նրաւ

9

Ցեղ մինչ զնաց ներքինին անցնելով բակ ու պարտեզ,  
Կանայք կարգի բերեցին զլուխ ու վրա,  
Սև մետաքսէ ամպերի նրբին ծվենների պես  
Իջան նրանց զլիներին ոուրանդ ու չազքաւ  
Սև մետաքսէ ամպերի նրբին ծվենների պես  
Գրկեց ամեն մի չազքաւ պայծառ մի լուսին,  
Թաթախվեցին լույսի մեջ սև ոուրանդները կարծես,  
Ու խմեցին լույսերը նրանց յերեսին  
Ու մինչ չընաց նաջիբան համբուրվում եր հովի հետ,  
Մինչև ոուրանդը նրբին յերեսին իջներ,  
Ու մինչ հնում եր խանդից վաղ պարտեզը բուրավետ,  
Պարտեղ մտան սրտահույզ յերկու յերգիների

10

Ցեկան կանգնեցին նրանք խանումների զեմ զիմաց,  
Նրանք յերկու յերգիներ, յերկու ուռ դալար,  
Ցերկու թխաղեծ ջահել, նախշուն արախչին դրած.  
Զուխտակ աչքերի վրա՝ շուխտակ սև կամար,  
Մեծը՝ Սաֆարն ալելի բարձրահասակ ու դժույն,

Փռքը՝ Զեյնալը սիրուն խոշոր աչքերով,  
Վորոնց մեջ կյանքը կարծես լցըել եր վիշտ, տիսրություն,  
Ու զարձրել եր նրանց տիսրությամբ գերող  
Կանգնել եյին նրանք լուռ, յերկու ջահել յերգիչներ,  
Յերկու յեղայը հարազատ իրար կողք կողքի,  
Աչքերն հառած յերկնքի փիրուղներին, դեպի վեր,  
Հնչեց նրանց հոգեթով դողանչը յերգին

11

Ծորաց թախիծը անհուն հնչյուններից այդ յերգի,  
Սըսկացին ծաղկոցի վարդերը բոլոր,  
Դյութվեց դալար մի նոճի ավազանի յեղերքին —  
Նաջիբան եր՝ լսոների ծովի մեջ մոլոր,  
Բուրեց ճերմակ մի շուշան թովչությունից այդ յերգի,  
Նաջիբան եր՝ հառաջեց մորմոքով խորին,  
Ծաղկած, փարթամ նշենին թափեց թերթերն իր ծաղկի,  
Նաջիբան եր՝ արցունքի շիթերն աչքերին  
Ավազանը բյուրալիք գրկեց արել պայծառ,  
Նաջիբան եր՝ Զեյնալի պատկերը հոգում,  
Զեփյունն անուշ թովչությամբ ծաղկանոցով անց կացավ,  
Նաջիբան եր՝ սիրո վառ ծաղիկ եր ջոկում.

12

Յեկ թթինները յերգի անձրեկի պես հորդառատ  
Յերկու քուլա ամպերից թափվում եյին վար,  
Արդու լսանի հարեմի կանանց աչքերի առաջ  
Բացում սիրո, տանջանքի, վշտի մի աշխարհն  
Լսում եյին նրանք լուռ ու նրանց հետ միասին  
Վարդաստանն եր հառաջում բոյցերով բոլոր,  
Յեկ ծաղիկները ասես վառ թերթերը լիացին  
Թթիններով այդ յերգի՝ արցունքների ծորում  
Յեկ մինչ հսչում եյին մեղմ հնչյունները այդ յերգի,  
Համսում եր որը արգեն իրիկվա պահին,  
Կուչ եր բերում նրբահյում՝ առոների յեղերքին  
Շեփորները գույնդգույն գյուլը սաբահին

13

Լոեց յերգը, Փանջարից աղախինը հարեմի  
Դունաթափ ու ահարեկ կուացավ ներքեւ.  
— Խանը գալիս եր, — կանչեց, ու կարծես մի անդամից  
Մոռացվելին վայրկանում յերգիչ ու յերգերը  
Ու շփոթված վեր յելան սիրունները հարեմի,  
Վորը բարձը մոռացած, վորը թաշկինակ,  
Մեկն ել իր սիրտը թողած սանդուխքների քարերին՝  
Յերգի մորմոքով լեցուն թթինների տակ:  
Նաջիբան եր, մոտեցալ յերգիչներին այդ յերկու,  
Քաշեց ուրանողը գեմքից, վորակս մի լուսին,  
Աչքերի մեջ բորբոքված կրակները իր հոգու,  
Անխոս նայեց Զեյնալի տրտում յերեսին:

14

Անխոս նայեց, հեռացավ, վորակս չքնաղ մի յերազ,  
Վորպես հովը, անվրդով ջրերի վրա,  
Վորպես մշուշ նրբաթև կապույտ ջրերից յելած,  
Վոր քաշում է մետաքսի փեշերը իրաւ,  
Ու Զեյնալի ջինջ հոգում, համը պատկերի նման,  
Մնաց թախծոս աչքերի անմար մի հայացք,  
Մնաց ամպի պես տրտում չքնաղագեղ նաջիբան՝  
Մունջ հայացքը Զեյնալի աչքերին հառած,  
Յեկ մինչ մարած աչքերից հարեմի ծեր ներքինու՝  
Կարիճի պես թունավոր հայացքը իջներ,  
Թողին պարտեղ չքնաղ, ու շահներ ձեռքերում,  
Ու հեռացան գլխիկոր յերկու յերգիչներ:

— Ո՞վ ստեղծող արարիչ—մըմնջում ե Նաջիբան,  
Փառքիդ, կամքիդ մատաղ յես, ու քո զորության,  
Թոչունին թե ես տվել, ոձերին ճար ու ճամբա,  
Մարդուն հանձնել ես մարդու անգութ գերության,  
Ահա վոսներդ եմ ընկել, յես՝ փոշին քո վատքերի,  
Թե մեղք եմ գործում քո դեմ՝ տուր ինձ կրակի,  
Թե չե՛ փրկիր, ազատիր, մի թող իմ հոգին գերի,  
Մի թող ջանել իմ կյանքը խանը խորտակի...  
Մըմնջում ե Նաջիբան, լուսնի շողը յերեսին,  
Սիրտը ամպի մի քուլա ու աչքերը թաց,  
Մետաքսաթել վարսերը փոած մեջքին և ուսին...  
Դուռը բացվեց ու շեմքին խանը յերեաց,

Հազած յերկար մի կարա, ձեռքին թագրեն սե սաթի,  
Ու կրքերից բռնկած ժպիտ շուրջերին,  
Վորպես յերկու կեռ խանչալ՝ կախած բեկներն արծաթի,  
Կանգնեց խանը տարփանքի փայլը աչքերին,  
Հետո գանգաղ մոտեցալ. գողաց չքնաղ Նաջիբան,  
Վորպես հողմից սարսուն դարսըաճյուղ ուռ,  
Վոտքի յելավ ու կանգնեց ծեր խանի դեմ հանդիման,  
Աչքերը թաց ու հոգին քարերի պես լուս  
— Ցող ե իջել սիրունիս վարդե այսերին, ինչու,  
Ամպել ե իմ սիրելին, յերկինքն իմ հոգու.  
Նաջիբային արզուք ինչ խորունի մի վիշտ ե տանջում,  
Ասա, վա՛րդս, այս ժամին ինչու յես անքուն.

Ու կոացավ ծեր խանը Նաջիբայի շուրջերին՝  
Ինչպես կարմիր վարդերին ձյուն իջներ հանկարծ,  
Ու Նաջիբան կարծես իր հոգու մոայլ ամպերի  
Վորպումով՝ դառնորեն հանկարծ հեկեկաց,  
— Թույլ տուր, խան իմ, հետանա քո հարեմից Նաջիբան,

**Խ**որ քնի մեջ ընկղմած Արդուլ խանի հարեմում  
Լույսերն հանգել են վաղուց, չկա վոչ մի ձայն,  
Վարդաստանը հովի զեմ քնքուշ վարսերն ե սանըում,  
Հովի բույրերն ե նրա անում ցիր ու ցան  
Մուսամբարը սիսվաց, կարծես լալիս ե տրառում,  
Ու հառաջում հոգեթով բույրերով իրա,  
Լուսնի սինին վերնից հալած արծաթ ե թափում  
Շատրվանի շողշողուն ջրերի վրա  
Ավազանի ջրերում որորվում ե մի պարտեղ՝  
Չյունափրփուը ու չքնաղ շուշաններով լի,  
Այդ աստղերն են, յերկնքի արցունքները սիրակեղ,  
Վոր նախշել են ջրերի հստակ հայելին:

Վարսերն արձակ, ոթախում, լուսնի շողը յերեսին,  
Բաղամածե աչքերի թարթիչները կախ,  
Թիկնել ե լուռ Նաջիբան ասեղնակար իր բարձին  
Գլխում խոներ անհամար ու սրտի մեջ վախու  
Հեռուներից քաղաքի, հովի շուրջերին բեկ-բեկ,  
Հասնում ե մի անցորդի տիսուր բայաթին,  
Ու հեծկուում ե կարծես Նաջիբայի սրտի հետ  
Շատրվանը լուսաշող՝ խալար հայաթից,  
Ու հեծկուում ե կարծես վարդանոցում բույրով լի,  
Թթիներով թախծալի սրտակեղեք յերգ,  
Ու տեսնում ե կարծես նա ավազանի հայելին,  
Ու նրա մեջ որորուն սկաչյա մի դեմք:

Նրա հայրը չորան ե գառների պես հեղ,  
Նաջիբայի որբոցը յեղել ե հանդ ու չիման,  
Աճել ե նա դաշտերի վայրի ծաղկի պես  
Աղի արցունքն աչքերին, սրաի մեջ վիշտ ու մրմուռ,  
Քո վոտրի հող Նաջիբան ազաշում ե, խա՞ն,  
Նա կթոշնի, կհանգի վշտամորմոք ու տիտոր,  
Թույլ տուր, խան իմ, հեռանա դժբախտ Նաջիբան

## 6

Մոայլվում ե ծեր խանը, մուժով՝ լցվում ե հոգին,  
Ինչպես գիշերվա պահին սարը եյնալի,  
Ու զայրույթը՝ վանդակած վազրի նման մոլեգին՝  
Նրա կրծքի վանդակին դադար չի տալիս  
Մոնչում ե կրծքի տակ կուրծքը յելնում ե իջնում,  
Ցերակները ճակատի խոփում են արագ,  
Կարծես հոգու մեջ նրա վայրագ մի ճիչ ե հնչում,  
Վիրափոր մի զաղանի ցնցող աղաղակի  
Բայց զապում ե ծեր խանը իր զայրույթը կատաղի,  
Ու գողովչուն, հովմանքով ասում ե նրան,  
Մինչ թափում ե այտերին արցունք-աստղերը աղի,  
Վշտամորմոք ու տրտում դժբախտ Նաջիբան

## 7

— Լսիր, սիրուն, կմեռնի, չի դիմանա առանց քեզ,  
Առանց արե, առանց ող խանը կմարի,  
Խորշակահար իմ հոգում սարերի հով դու ինչպես,  
Վարդերի բույր գու ինչպես իրիկվա պահին  
Քեզ հանգերի, սարերի վայրի կարոտն ե քաշում,  
Աղրյուրների գլուխն ալմաստ հայելին,  
Իսկ իմ կյանքը գունաթափ ու ցրտահաք մի աշուն,  
Ուզում ե քո կենսատու բույրը վայելի  
Թարթիչները թուրի պես իմ սրտին ես խրել դու,  
Նրանցով եմ շնչում յես, ապրում աշխարհում,  
Քանի ցուրը պատկերիդ լույս ե տալիս իմ հոգան՝  
Պիտի մնաս, սիրելիս, գու իմ հարեմում,

## 8

Սսաց, մոայլ հեռացավ Արդուլ խանը գառնացած,  
Հոգին հուղված՝ ալեծուփ ջրերի նման,  
Յեվ խոհերին անձնատուր սանդուղքներով իջավ ցած,  
Աչքերի գեմ շարունակ տրտում Նաջիբան,  
Դրսում պարտեզն եր շնչում ծաղիկներով բազմաբույր,  
Ավազնը աստղերից գորգեր եր հյուսել,  
Վարդերի վառ շուրթերին զեփյուռներինուրը համբույր,  
Իսկ լուսինը իր ճամբան վաղուց եր կիսել,  
Շրջում եր նա մտախոն, իր մտքերով որորուն,  
Արդուլ խանը՝ սկ ամպի քուլայի նման,  
Նրա վրա լուսինն իր արծաթ հայտցքն եր ծորում,  
Աչքերի գեմ շարունակ տրտում Նաջիբան

## 9

Մթնեց կարծես Լուսնկան, տչրի պայծառ թիրի պես  
Մտավ ամպե կոպերի թարթիչների տակ,  
Լուսածազը խավարում վայլուն թրերն իր ճոճեց,  
Հեռվից լովեց զանգերի զվարթ աղաղակի  
Թաղաքի խուլ. հեռավոր փողոցներից զողանջով  
Կարավաններն ուղտերի յեկան ու անցան,  
Ու հեռացան, հեռացան, գարձան հեռվում շառաչող  
Աղմկանոյց ջրերի այլիքների ձայն  
Յեվ ծուխի պես յերկնաձիգ, կտուրներից գեպի վեր,  
Բարձրացավ մեղմ ու թախծու մրմունջն աղանի,  
Վորպես աղերս, աղաչանք ե յերկուղած ու կերկեր,  
Վոր ալահը նոր որվա չարը խափանի,

## 10

Յեվ լուսացավ, Արեք վոսկեսապատ ուզտի պես  
Կարծես ծնկի իջավ շուրթ իեռան պոռնգին,  
Թափանցեց մի բազմերսնգ, բարձր պատուհանից ներս  
Ծիածանի գույներով փովեց հատակին,  
Քնած եր դեռ Նաջիբան գունաթափ ու դալկանար,  
Գանգուրները տարածված գեմբին և ուսին,

Պատուհանից թափանցող ծխածանը գունավառ,  
Փովել եր լուռ, մարմարե, գունատ յերեսին,  
Յեվ թվում եր՝ ունկնդիր վշտամոքմոք մի կանչի,  
Նրա կուրծքը թախիծով պիտի հառաչեր,  
Յեվ թվում եր, վոր կամաց, Նաջիբայի ականջին,  
Եերգում եյին սրտահույյո յերկու յերգիչներ.

Ամսուն ով դժուռ ընդմրուս զմարտին  
Ծովապես սպաս պահմուտ ուղարկաց ուսի դժորդան  
Դժուռն ով ուրուի մայծուած ով դժուռոց ման  
Վայոց խորհրդան ով ուղարկուի ուս ով հանչն  
Ամսուն ով վայուած հայուս ով վայու յարու  
Այսուն ով վայուած համեյ ով մահուած ուսի այս  
Վայուած հայուած մահուած ով մահուէ

Ուսի հոյն սամերա հայու մահուած մահուած շամուն  
Հայու վայուած համեյ մահու հասու  
Վայուն ով մահու մայուած ուուրախոյ շրանսաւ  
Վայուած հայու համեյ մահու մահուած  
Խոհմարոց շամուածով ուղարկուած շամու մահմար  
Մասց ու ուսի մահմար մահմունչուած  
Կոյսուաչ և առուն մահմար մահմունչուած ով  
Ամսուն մահմար մահմունչուած մահմունչուած ով

### 01

Ամսուն մարտամբանի ովայ մասցուաչ իմ  
Ամսուն մասց մասց ամսուն մասց մասց ամսուն  
Ամսուն մասց մասց ամսուն մասց մասց ամսուն

### Զ Ո Ր Ր Ո Ր Դ Յ Ե Ր Գ

#### 1

**Թ**իկնած թավիշ բարձերին, զեմք զեյլանն արծաթի,  
Արգուլ խանը խոների ծովի մեջ անվերջ,  
Ինչպես մոայլ մինարեն թանձր մշուշը պատի,  
Ինչպես զեյլանը ծխի քուլաների մեջ,  
Ղեյլանի մոտ ծնկաչոր, հարեմի ծեր ներքինին  
Նստել եր լուռ, սիրու մութ կասկածներով լի,  
Խանը կանչել ե նրան, ու նա հայացքը գետնին,  
Սպասում եր սրտաղող նրա զեմ հիմի  
Սակայն ծխում եր նա զեռ, հոգին պղտոր ու հուզված  
Վորպես ծուխով հագեցած ջուրը զեյլանի,  
Ու ներքինին փշում եր մեկ-մեկ կրակը մարած,  
Վոր զեյլանը ծխի բիլ քուլաներ հանի.

#### 2

— Ասա ինձ, շուն, շուտ ասա, լավ ես հսկում իմ դոան  
Արդյոք ով ե սողացել իմ պատերից ներս.  
Ասա, ինչնու յե այդպես թախծու դարձել Նաջիբան,  
Ճիշտը ասա, թե չե, չնւն, կսպանեմ յես քեզ:  
Ու հայացքը շեշտակի ուղղեց նրա աչքերին,  
Վորպես արյունով ներկված մահառիթ մի սուր,  
Աչից զողաց, գունատվեց ու կարկամեց ներքինին.  
— Դե շուտ, ել մի մտմտա, ճիշտ պատասխան տուր:  
Բայց ներքինին լուռ եր զեռ, կարծես ահից քարացած  
Հետո բացեց իր սիրտը վորպես մութ զիշեր.  
— Ցերեկ, իրիկվա պահին, իմ տեր, իմ խան վողորմած,  
Պարտեզ մտան յերգելով յերկու ներգիներ.

— Նրանք յեկան, յերգեցին, լաց եր լինում Նաջիբան,  
Թարթիչները ամպի պես կախած ջրերին,  
Կանգնել եր նա՝ ջրավին թերքած ուռենու նման,  
Իր մտքերին, հույզերին, խոհերին գերիւ  
Ու յերը յերգը վերջացավ, յերը լուռ կախվեց յերեկոն  
Մոտեցավ նա Զեյնալին, կանգնեց դեմ գիմաց,  
Թավիշ բողոքի պատոած, վորպես վարդի մի կոկոն,  
Նա յերեսից ուռանդի իջեցըրեց ցած,  
Իջեցըրեց ու նայեց Զեյնալի մե աչքերին,  
Այդ աչքերը փայլեցին, վառվեցին կարծես,  
Բայց վնադեց Զեյնալին, խան, քո շունը, քո գերին.  
Վողորմած խան, բոլորը՝ ինչ տեսել եմ յես.

Եեվ կատաղած արձակեց խանը վայրագ աղաղակ,  
Վոտքի թավ ու սպատից մտքակը խլեց,  
Ու մտքակը ոձի պես Սրգու խանի ձեռքի տակ  
Ուազալար ֆշոցով ոդում պտովեց  
Իջավ սմբած ներքինու կողերին ու վոտներին.  
Ու վոռնում եր, աղերսում նա գետնատարած.  
— Խան, քո շունն եմ, գթա ինձ, քո ստրուկը, քո գերին,  
Բայց մտքակը բարանին իջավ կատաղած.  
— Շունը ազնիվ ե լինում, հավատարիմ, հոգատար,  
Շունը ազնիվ ե հսկում իր տիրոջ դռան,  
Շունը մագում, հաջում ե, յերը տեսնում ե մի ոտար,  
Ու չի թողնում իր տիրոջ գույքը գողանան.

Բայց հոգնեցին, թուլացան բազուկները ծեր խանի,  
Շպրաց նա մտքակը ներքինու վրա,  
Ինչպես թունավոր մի ոձ վերջին թոփչքն իր անի  
Սև մտքակը ոձի պես փաթաթվեց նրան.

սկ ներքինին նվուժ եր ու անքուժ եր նվազած,  
Խանը շրջում եր հուզված, փնչում, քրթմնջում.  
Ու զայրույթը, վորպես վազը՝ հաղիվ վանդակից փախած.  
Աչեղ ձայնով վանում եր, կանչում, մռնչում  
Հետո խաղաղից կարծես նրա հոգին այնկոծ,  
Նստեց, հանձնեց մտքերը ղեյլանի ծուխին,  
Բայց գեռ իր սիրտը լափող հոգու խորքերից մի բոց,  
Ժպիտ փոեց նրա ծեր ղեմքին ու բեխին.

— Մոտ յեկ, — ասաց ժպտալով. — իդուր ծեծեցի յես քեզ,  
Աշխարհի մեջ, ներքինի, ուժով սեր չկա,  
Չեշտ ե տիրել յերկրներ մեծն Խոբանդարի պես,  
Բայց վոչ մի զորք չի տիրել սիրտը աղջկա:  
Լավ ե ինքու իմ ձեռքով, իմ խոկ աղջկա նման  
Քյարին անեմ, թող լինի կինը Զեյնալի,  
Թող բախտավոր լինի նա, իմ սիրելի Նաջիբան,  
Դրբանով ել ծեր սիրտու ուրախ կլինի:  
Գտիր, կանչիր Զեյնալին յեղոր հետ այս իրիկուն,  
Ասա նրան բույրը՝ ինչպես ասացի,  
Կտամ նրան հող, այգի, կտամ նրան փող ու տուն,  
Թող արժանի լինի նա իրա սիրածին:

Հետո, կարծես թե հուզված, յերկարաձիգ մի շնչով  
Ծծեց ծու լիք ղեյլանի կարուտով անհագ  
Կարծես ուզում եր խեղդել իրա հուզմունքը ծուխով,  
Ու մորմոքները սրտի թաղել նրա տակ  
Խոկ ներքինին ընկճած, հուռ լսում եր խանին,  
Ու նայում եր ակնապիշ աչքերին նրա,  
Կարծես ուզում եր հոգու վողի խորհուրդները քամի,  
Կարծես ուզում եր նրա հոգին հասկանաւ,  
— Կկանչես և մի մոլլա, վոր գա քյարինը անի,  
Խոկ նաջիբան հենց հմատ թող գա ինձ այցի,  
Պատմիր նրան մեկ առ մեկ վորոշումը իր խանի,  
Ել ասելիք չունեմ քեզ, հիմա հեռացիր:

Յեվ ներքինն զլխիկոր, ծեծված, հուզված ու նկուն  
թողեց ոթախը խանի վորակս մի սովեր,  
Աչքերի մեջ տիսրւթյուն, հոգում դարձանքր անհուն,  
Նա իր խանից չեր լսել այզպիսի բան դեռ  
իսկ ոթախում զեռ ծխի քուլաները դեյլանի,  
Բարդ-բարդ յենում եյին վեր ու իշում նորեն,  
Ամբոխում եյին ոդում, վորակս խոները խանի,  
Վորոնց ծայրը ով զիտե վորաեղ եր կորել...  
Ամբոխում եյին ոդում, հետո ցրվում, տարածում  
Մթնշաղի կապտափուն շդարշի նման,  
Յերը զեփյուոփ նման մեղմ ոթախի զուոը բացում,  
Ներս և մանում վշտահար, թախօտ նաշիրան,

Նա մոայլ եր ու տրատում, վորակս աշնան առավոտ,  
Վորակս անձրեկի պատրաստ յերկինքը ամպած,  
Կանգնել/եր լուռ, անվստահ ոթախի վակ զռան մոտ,  
Հյուսերն արձակ, այտերը արցունքոտ ու թաց,  
—Իմ սիրունի աչքերը, թարթիչները թաց են զեռ—  
Ասաց խանը սիրաը լի թախիծ ու հուզում,  
Դիշերն ամբողջ յերգել են յերկու ջահել յերգիչներ,  
Ու մորմոքել են զուցե նրան յերազում  
Գիտեմ բոլորը արգեն, զիտեմ, սիրել ես նրան,  
Այս սեաչյա ու սիրուն յերգիչ Զեյնալին,  
Կարելի յե հնարքով թռչել աստղերի վրա,  
Բայց վոչ մի մարդ չի շինի սրտի բանալին

Իսկ նաշիրան մոմի պես լուս հալիում եր իր տեղում,  
Խանի քաղցր խոսքերից կարծես շանթահար,  
Նրա մարմուկ կարծես թե ու ոձեր եյին սողում,  
Մնացել եր խոճերի ծովի մեջ շվարի  
—Գնա, վարդս, նրա հետ քյարին կանեմ այս զիշեր.

Գնա, բախտավոր յեղիր, թող այզպիս լինի,  
Արգեն կյանքիս մահաշունչ ծանը ձմեռ ե իջել,  
Թո բախտով ել իմ սիրաը ուրախ կլինի  
Յեվ ոթախից զուրս յեկավ խանը թախծոտ ու հուզված,  
Մոայլ, վորակս անթափանց ու խավար զիշեր,  
Իսկ նաշիրան՝ արցունքոտ իր աչքերի զեմ կանգնած  
Տեսնում եր լուռ ու տիսուր յերկու յերգիչներ

Յեկան, բարձրացան նրանք սանդուզըներով գեղի վեր,  
Բացվեց գուսը նրանց գեմ խանի ոթալսի,  
Ու խանի գեմ Զեյնալի սիրաը կարծես թէ հալլեր,  
Այդ ամոթից եր արդյոք, թէ նրա վախից:  
Ու ներս կանչեց ծեր խանը յերգիչներին այդ յերկու՝  
Աչք ածելով Զեյնալին վտաքից մինչ զլուխ,  
Նրա հստակ աշքերում զգաց կրակը հոգու,  
Զգաց թախծու յերգերի շռնչը սրտարուխ:  
— Նստեք, — ասաց ծեր խանը. Ու լուս նստեցին նրանք  
Արգեն բարձերին թիկնած մոլի գեմ դիմաց:  
Զեյնալի մունջ կրծքի տակ բորբոքվել եր մի կրակ,  
Ու նա ամրող իր մարմնով հանկարծ սարսապաց:

— Տղամ, ուրախ զգա քեզ, հալալ քեզ իմ Նաջիրան, —  
Ասաց խանը նայելով գեմքին Զեյնալի, —  
Նրա հետ քեզ այս գիշեր կպսակեմ անպայման,  
Հիմա մի բան յերգեցիք քաղցր, սրտալի  
Իսկ Նաջիրան վարտեզում, ավտզանի յեգերքին  
Լաց եր լինում սիրտը խոր սարսափներով լի,  
Տարածվեցին յերք տխուր թրթիռները հին յերգի,  
Ու միացան պարտեզի թովիչ բույրերին:  
Ու մինչ արցունքն աշքերին մորմում եր Նաջիրան,  
Ականչն յերգի սահաշունչ տխուր կորկաչին,  
Աղախինը մոտեցավ սահող ստվերի նման,  
Ու ինչ վոր բան շնչաց նրա ականջին:

Ասաց, շտապ հեռացավ վորպես հովք, վոր կամաց  
Չոր սաղարթները շոյում, անցնում ե արագ,  
Ու Նաջիրան մնաց լուս, սարսափներով քարացած,  
Իր կոկորդի մեջ խեղզած ճիչ ու աղաղակի  
Իսկ յերգը գեռ զեղգեղում ու տարածվում եր ողում,

**ի**շալ իրանի վրա իրիկունը հերարձակ,  
Ու ծիսի պես թանձրացավ մութը կապտավուն,  
Յեզ իրիկվա կերկերուն, թախծու ազանների տակ  
Իր կրակները վառեց ամեն հյուղ ու տունն  
Յեզ իրիկվա կերկերուն թախծու ազանների հետ  
Արդու խանի պարտեզից բույրեր բարձրացան,  
Յևսամանը, շուշանը ու վարդենին բուրավետ  
Իրենց բույրեր սփռեցին ողում ցիր ու ցանու  
Ու փիրուզե լեռներից իջավ մեղմիկ ու թագուն  
Սիրահարը վարդերի զեփյուռը նըրին.  
Թպրտացին ծառերին մոայլ չղջիկներն ու բուն,  
Մտվերների նման սե, նրանց պես մթին:

Արգուլ խանի պալատում, ոթախներում, պարտեզում  
Տիրում եր մի անսովոր աշխատ յեռ ու գեռ,  
Խանը կարծես անհանգիստ, հոգում թախիծ և հուզում  
Իր հյուրերին՝ անհամբեր սպասում եր գեռ  
Իսկ Նաջիրան գեռ տրտում, մտածոլոր եր ահա,  
Թպրտում եր իր սիրտը վորպես ծտի թե,  
Յերք բակ մտավ իր եշով ծերունափառ մի մոլլա,  
Մեկն ել լապտերը ձեռին՝ կողքից հեինս  
Ու մինչ մոլլան յերերուն, շարժումներով անվստահ  
Ծեր ներքինու ոգնությամբ իր եշից իջներ,  
Սրտերը լի կասկածով, ու քայլերով անհաստատ  
Պարտեզ մտան սրտահոյց յերկու յերգիչների

Սըտակեղեք ու հուզիչ, վորպես մահվան՝ բռթ,  
 Ու թթիոները յերգի մի սիրտ եյին ծըլատում,  
 Ավազանի աստղալի ջինջ ջրերի մոտ,  
 Ու թթիոները կարծես յումնի արծաթ շողերում  
 Սառում, թափում եյին վար, վորպես արցունքներ,  
 Վոր թափում եր միսւլար շատրվանը ջրերում,  
 Վորպես պայծառ, շողշողուն բյուրեղյա ակներ:

6

Այնտեղ յերգում եյին դեռ Ու յերգի տակ որորուն  
 Վոլորում եր ծեր մոլան թազեն սև սաթի,  
 Յերը մի պառավ վառ չայի բաժակները գույնզգույն  
 Մեջտեղ զրեց սինխով փայլուն, արծաթի  
 Ու յերը յերգը ավարտվեց, խանը զարձակ Զեյնալին  
 —Ապրես, տղաս, —ասաց նա, —բախտավոր լինես,  
 Ու ծաղկազարդ մի բաժակ մեկնեց նրան՝ թեյով լի.  
 Վոր հալոցքի պես վոսկու ծփում եր կարծես  
 —Նաջիբային ներս բերեր, —կանչեց խանը սրտաբաց,  
 Թող զա, նստի, այս գիշեր պսակն է նրա.  
 Ու Զեյնալի սիրտը խոր թաշունի պես թպտաց,  
 Ու ջերմություն զգաց նա այտերի վրա:

7

Սակայն չկար նաջիբան, նրան փնտում եյին դեռ,  
 Աչից դեղնել եր արդեն ծերուկ ներքինին,  
 Սիրաը լի եր յերկյուղով, զողում եյին վրա ու ձեռ,  
 Աղերսում եր վոր նրան մի կերպ զանեյին,  
 Արդուլ խանի պայտառմ խառնվել եյին իբար,  
 Փնտում եյին ամեն տեղ, ամեն մի անկյուն,  
 Սակայն իզուր, նաջիբան չեր յերեսում ու չկար,  
 Վող պալատը հագել եր վիշտ ու տիսրություն  
 Իսկ շատրվանը զրառմ լուսնի արծաթ շողերում  
 Հեկեկում եր ու թափում աստղե արցունքներ,  
 Վորոնք թափում եյին լի ավազանի ջրերում,  
 Վորպես պայծառ, շողշողուն բյուրեղյա ակներ:

Եեվ մինչ փնտում եյին դեռ նաջիբային պալատում,  
 Զեյնալը լուռ դատարկեց բաժակը չայի  
 Նրա ծովի պես փրփրած հոգում սիրտն եր թպտում,  
 Խոչպես փոթորկի պահին թերեր ճային  
 —Յերգիր, —ասուց ծեր խանը, —մենակ յերգիր այս անգամ  
 Թող քո յերգի զողանջով զա քո քո նաջիբան—  
 Եեվ բեխերի տակ կարծես կախվեց ժպիտ մի տարտամ,  
 Ու սպրդնեց կարծես նա կտավի նման,  
 Բայց սարսափից չպեցին սև աչքերը Զեյնալի  
 Զայնը խզաց, յերգի տեղ լովեց թույլ նվոց,  
 Ու կոկորդից վարդագույն ու վառ արյուն եր գալիս,  
 Վորպես սրտում կուտակված սիրո այրող բոց:

9

Մինչ Սափարը հեկեկում համբուրում եր Զեյնալին,  
 Քարացել եր իր տեղում արգեն ծեր մոլան,  
 Յեվ քըքջում եր խանը չարախինդ ու սրտալի  
 —Ե՞ր, կանչեցեք, հարմնիր եր թող զա նաջիբան,  
 —Ե՞ր, կանչեցեք, —զեկի պես հոհում եր խանը ծեր,  
 Թող զա, թող զա, այս գիշեր պսակն է նրա.  
 Մինչ այդ յերկու յերգիչներ արգեն տեղից բարձրացել,  
 Գնում եյին զիլիկոր՝ փաթաթված իբար  
 Մինչ շատրվանը այնտեր լուսնի արծաթ շողերում  
 Հեկեկում եր ու թափում աստղե արցունքներ,  
 Թողին պարտեզը խանի խորունկ մի վերք սրտերում,  
 Ու հեռացան արցունքով յերկու յերգիչներ:

10

Առավոտյան Զեյնալը ել չտեսավ վառ արփին,  
 Սառել եյին վարդաբույր շուրթերը նրա,  
 Իսկ խանի վառ պարտեզի ջինջ ավազանի ափին  
 Գտան մետաքս մի ոռւրանդ ու մի չաղըրա  
 Ու ծառաները վշտով ու արցունքոտ աչքերով

Ավաղանից հանեցին նաջիրայի դին,  
Նրա ճակտուղ կարծես հովհարում եր մեղմ մի հով,  
Յեզ համբուրում եր կարծես վոսկելառ արգին  
Ու թվում եր՝ ունկնդիր վշտամորմոք մի կանչի,  
Նրա կուրծքը թալսիծով պիտի հառաչի,  
Ու թվում եր, վոր կամաց, նաջիրայի ականջին  
Յերգում եյին սրտահույց յերկու յերգիչներ:

Յել գերվիշը ավարտեց: Ու մորոքին ձյունափառ  
Թափեց, վշտի, թախիծի դաոր արցունքներ,  
Հառաչեցին նրա հետ՝ լսողները վշտահար,  
Բազմությունը քարացած սպասում եր դեռ  
—Գերվիշ, ինչնու յես լալիս, ինչն և տանջում քո հոգին,  
—Գերվիշ, ինչնու յես մոռայլ կախված ամպի պես,  
—Գերվիշ, ով ե, արզյոք, ով ծնունդ տվել այդ յերգին,  
Վոր մորմորավ ու վշտով պատեց մեզ ու քեզ  
Յել գլխարաց, զզզզված, մազերն հովից ցիր ու ցան,  
Սիրտը հանձնած խոհերի թանձր մշուշին,  
Աղցունքախեղդ կոկորդով շշնջաց նա մեզմաձայն.  
—Այդ Զեյնալը յեղրայրն եր դժբախտ դերվիշ:

1984—1985

## ԳՅՈՒՒԼՆԱՐԱ

Եյ, խանի յերկիր, թաջիրի յերկիր,  
Գյունարի ովես վարդ Շիրազում չկար,  
Գյունարի պես վարդ, հարեմի յերկիր,  
Իրանի վոչ մի հարեմում չկար:

Կեյլանի ծուխը թե յերկինք յելներ,  
Աստղերին համար՝ ենպես լույս չկար,  
Գյունարի սիրտը վոնց արև լիներ,  
Արեք վկա՝ իրանում չկար:

Մայիսին բացվող նշենին անգամ  
Գյունարի բույրն ու հմայքը չուներ,  
Անձրեից հետո յեսամանն անգամ  
Գյունարի քաղցր թովշանքը չուներ:

Եյ, խանի յերկիր, թաջիրի յերկիր,  
Գյունարի պես վարդ Շիրազում չկար,  
Գյունարի պես վարդ, հարեմի յերկիր,  
Իրանի վոչ մի հարեմում չկար:

1

Մի աղջիկ եր, ապրում եր իրանում,  
Գորգագործ մի աղջիկ եր նա,  
Նա մի ծեր հայր եր խնամում,  
Գյունարա եր անունը նրա:

Սիրուն եր Գյունարան, շատ սիրուն  
Թիթեռից թովուն եր նա,

191

Աչքերին սյուրմա չեթ քաշում,  
 Չեր դնում մազերին հինաւ,  
 Նա խանի խանումների համար  
 Հյուսում եր համամի խալիչա,  
 Շիբագի վարդանոցից ել վառ—  
 Բայց խանի խանումների համար,  
 Խփում եր դանակը հինվածքին,  
 Կտրում եր թելերը գունագեղ,  
 Գյուլնարի հինած դազզյահին  
 Շիբագը կարող եր նախանձեր,  
 Գյուլնարի հյուսած վարդերից  
 Կխարբեր բյուլը լը անգամ,  
 Նա կարող եր մետաքսի թելերից  
 Պարտեզներ հյուսել անթառամ,  
 Մի աղջիկ եր, ապրում եր իրանում,  
 Գորգագործ մի աղջիկ եր նա,  
 Նա մի ծեր հայր եր ինամում,  
 Գյուլնարա յեր անունը նըաւ

## 2

Գյուլնարա, սիրուն Գյուլնարա,  
 Ղալամքյար հոնքերիդ տակին  
 Թախիծ կա աչքերիդ վրա,  
 Գյուլնարա, սիրուն Գյուլնարա,  
 Մաղկաղարդ չթով սքողված  
 Սրտիդ մեջ ու հոգուդ վրա  
 Տբունջ կա, բողոք կա պահված,  
 Գյուլնարա, վշտու Գյուլնարա:  
 Գյուլնարա, գորգագործ աղջիկ,  
 Բո յերկի բորբ արևի տակ  
 Համնում եր բադամ ու նարինջ,  
 Բուրում են դաշտերը թովիչ

Սակայն դու արևի կարուտ,  
 Արկից ժայիտ չես քաղել,  
 Տբունջու քո հոգու համար՝  
 Նարինջը կարիճ եր դառել,

Լսվում եր մրմունջը թառի,  
 Նվում եր սեզահը վերից,  
 Ճմլվում եր սիրտը Գյուլնարի,  
 Ծիծաղներ են լսվում հարեմից:

«Շարյաթին գեմ գնալ չի լինի,  
 Ուրացում եր առանց չաղբայի, —  
 Կարծես թե լսվում եր խանի  
 Խոսքերը ականջին Գյուլնարի:

Կարծես թե տեմնում եր նըան,  
 Զգում եր սարսափն ահարկու,  
 Բայց հյուսում եր հինվածքի վրա՝  
 Կուտակված տբառնջը իր հոգու:

Խալիչա եր հյուսում Գյուլնարան,  
 Հույզերից եր հյուսում կարծես նա,  
 Ահա նա հինվածքի վրա  
 Նկարում եր պատկերը իրաւ:

Ահա նա կանգնած եր ենտեղ,  
 Մետաքսի թելերից հյուսած,  
 Աչքերը վատվում են կարծես,  
 Չարսավը նետել են ցած:

. . . Լսվում եր մրմունջը թառի,  
 Նվում եր սեզահը վերից,  
 Հուզված եր սիրտը Գյուլնարի  
 Հարեմի թառից ավելի:

Ու մի որ, յերբ արեն յելավ,  
Ու ժպտաց իրանի վրա,  
Դուրս յեկավ Գյուլսարան տնից՝  
Խալիչան ձախ ուսի վրա:

Հասավ նա պալատը խանի,  
Գորգազարդ ոթախը նրա,  
Կլկում եր ջուրը ղեյլանի՝  
Խանի դեմ, սանդալի վրա:

Ղեյլանի հուզված ջրի պես  
Թպրտում եր սիրտը Գյուլսարի,  
Ամոթով խոնարհեց նա կարծես,  
Ու դժկամ բարենեց խանին:

—Գյուլսարան նվեր ե բերել,  
Գյուլսարան տրտունջ ունի, խան,  
Թույլ տուր, վոր բոլորի հետ մեկ տեղ,  
Գյուլսարան դեն զցի չաղըրան:

Եեվ փոեց նրա դեմ ու դեմ  
Խալիչան՝ բողոքը իրա,  
Գյուլսարան կանգնած եր ենտեղ,  
Համարձակ, առանց չաղըրա:

—Զնդա՛, շնւն,—խանը վորոտաց,  
Դղբաց պալատը աղմուկից,  
Գյուլսարան ճշաց, ընկավ ցած՝  
Յերեսին լշած ապտակից:

Ներս բնկան ծառաները խանի  
Եեվ կանայք խանի հարեսից,  
Փռվել եր մարմինը Գյուլսարի,  
Գյուլսարան տնքում եր ցավից:

—Դուրս տարեք, թող մորթեն դրան,  
Թող փրթեն առաջը շների,  
Իմ հոգում առանց չաղըրա  
Վոյ մի կին չպետք ե ապրի:

Դյուլսարան, գորգագործ աղջիկ,  
Քո յերկրի բորբ արևի տակ  
Հասնում ե բաղամ ու նարինջ,  
Բուրում են գաշտերը թովիչ:

Սակայն դու արևի կարոտ,  
Արեից ժպիտ չես քաղել,  
Տրտունջու քո հոգու համար՝  
Նարինջը կարիճ ե գառել:

Այդ որը իրիկնային պահին  
Արյունը հոսեց Գյուլսարի,  
Մեռավ նա արևի կարոտ,  
Իրանի զյուլը սարահին:

Եյ, խանի յերկիր, թաջիրի յերկիր,  
Գյուլսարի պես վարդ Շիրազում չկար,  
Գյուլսարի պես վարդ, հարեմի յերկիր,  
Իրանի զոյ մի հարեմում չկար:

Ղեյլանի ծուխը թե յերկինք յելներ,  
Աստղերին հաներ՝ ենպես լուս չկար,  
Գյուլսարի սիրտը վոնց արև լիներ,  
Արեը վկա՝ իրանում չկար:

ԳՅՈՒԼԻ ԱՆԴԱ

1

— «Պարսկուհի, վարդի պես մի աղջիկ ես,  
թուփի պես գալաք ես դու,  
Կարծես թե Շիրազի մեծ բախչեց ես  
Ու բույր չես պվել մարդու»:

— «Պարսկուհի, աչքերը նշի ձեւ են,  
Սաթի պես բիրերը ուն,  
Ու թռչող ծիծեռի զույգ թևեր են  
Հոնքերը կամար ու կեռ:

— «Պարսկուհի, բեզ արեք սիրել եր,  
Թիթենս ել սիրել եքեղ.

— «Պարսկուհի, չարսավըդ սաթին եւ ան,  
Ամպի պես պատել եքեղ»:

2

Այդպես են յերգել քեզ, պարսկուհի,  
Իրանցի շահիները տրփոս,  
Շահիրները քո հարեմ յերկրի,  
Ուշ գիշերից մինչև առավոտ...

Այդպես են յերգում հիմա ել  
Աֆինով հարբած Իրանում,  
Ուզում են յերգել ու հմատել,  
Իրանցի հազար խաս խանում:

Բայց մուը ե իրանը քո հիմա,  
Դու ապրում ես ուրիշ մի յերկրում,  
Ուր չկա հաշիշ ու հինա  
Ու մեկը քեզ յերգել ե զըռւմ:

Գուցե զու ոտար ես այդ յերկրին,  
Չես յեղել զուցե իրանում,  
Չզիտես թե ինչպես քեզ բերին,  
Չեն պատմել, զու չես իմանում:

... Ցերեի իրանցի մի թաջիր,  
Բարձել ե ուզտերի մեծ շարան,  
Ու մի որ բերել ե նուշ ու չիր,  
Ես յերկրում ծախելու համար:

Ու վերջին ուզտերի վրա,  
Վոսկելար վարդեքով նախշած,  
Բարձել ե զույգ-զույգ քաշաֆա,  
Ու իր հետ բերել ե իր կանանց:

Ու իր հետ բերել ե—ուզտապան  
Մի թշվար Յուսուփ կամ Հասան,  
Վոր բորիկ ե քայլել վողջ ճամբան,  
Ու հասել ե եստեղ՝ Յերևան:

Ու իր հետ, իր կանանց համար,  
Բերել ե յեթիմ մի զարավաշ,  
Յնցոտի հագած մի Բահար,  
Ուրավարձը մի հատ չոր լավաշ:

Ցեղ հետո՞ ով իմանա ինչժու,  
Զի ուզել յետ զանսալ Իրան,  
Խանութ ե բացել թիրմաչու,  
Հաստատվել ե եստեղ՝ Յերևան:

Ցեղ ապա՞ որեր են անցել,  
Տաղիներ են անցել յերեի,

Ուղտապահն ու Բահարը թաջերի  
Դռանը դուլ են մնացել...

Ու մի որ սիրել են իրար,  
Կամ թաջերը «խղճացել ե» նրանց,  
Քյարին ե արել շարիաթով,  
Յերկուսին տվել ե միմյանց,

Հնորյա այդ արմատն իրանցի,  
Տվել ե շատ ճյուղեր, վոր հիմի  
Այդ ճյուղերը ծաղիկներ են բացել,  
Վոր քեզ պես մի աղջիկ լինի

3

Հիմա դու կիՄ ունես դոշիդ,  
Գյուլխանդա ջահել կոմսոմոլկա,  
Դու ցրել ես դարերի փոշին.  
Քեզ վրա ել չարսավ չկա

Բայց գիտես, սերունդներ մեռան  
Թաջիրի ու խանի հլու,  
Ու նրանց շիրիմների վրա  
Նորարաց մի լալա յես դու

Հիմա քո մեջ պայքարն ե յեռում,  
Հիմա դու վազքի հետ որերի,  
Գյուլխանդա, նոր կյանքն ես կոռած  
Վաղվա Յուսուֆի ու Բահարի

Հենց այդ ե, վոր հուզում ե հողիս,  
Հենց այդ ե, վոր դդում եմ, վոր կաս,  
Գյուլխանդա, սիրելի պարսկուհի,  
Արևի պես վառման կոմսոմոլկա

1928

## ԹԱՐՁԱՆԻ ՄՈՐՄՈՔԸ

Եշկիլանի բաղերի մեջ,  
Թաղերի մեջ կեր ու խում ե,  
Բյուլըյուների խաղերի մեջ  
Վարդի թուփը արնախում ե,  
Հարեմի մեջ հեքը թառի  
Սրտի նման բարախում ե,  
—Թառզան, սիրած, զյոզալ յարիդ  
Կամքը իր հոր փափախում եր:

Ցեսամանի ծառը ուներ  
Յարիս նման խաս շրթունքներ,  
Աև խաղողի թաղը ուներ  
Յարիս նման սև աչոնքներ,  
Բյուլըյուների բաղը ուներ  
Յարիս այտերն—վարդի թերթեր,  
—Թառզան, սիրած, զյոզալ յարիդ  
Հոր քար սիրտը՝ ամուր բերդ եր:

Թառի առաջ սիրտս բացի,  
Յարի ցալը թառն ինչ անի,  
Վարդը տեսա՝ դարդս լացի,  
Վարդը աչքի ցողն ինչ անի,  
Թաց աչքերըս տվի բարձին,  
Վահ, չոր բարձը ինձ ինչ անի,  
—Թառզան, սիրած զյոզալ յարիդ  
Հերը՝ հացով ծախեց խանին:

Մի թառլան ուզու չոքեց զըսան,  
Շեմբին ախը են իմ սիրան եր,  
Խանի ուզու կոխեց վրան,  
Սիրտըս ախը սիրով լիքն եր,  
Յարըս խանին խաղալիք ե,  
Ինձ համար նա կյանքս ինքն եր,  
—Թառզան, յարիդ համար բերած  
Խաս քյաջափան մահով լիքն եր:

Ե՞յ, բագամազյուլ չազըսան վըըսան  
Քյաջափի մեջ յարըս ինքն եր,  
Ումնզը յարիս դեղին զափոան՝  
Աչքիս առաջ մահըս ինքն եր,  
Ուզու կանզնեց՝ յարըս վրան,  
Վառքերի տակ, վաճա, իմ սիրոն եր,  
—Թառզան, սիրած, զյողալ յարիդ  
Ուզու վրա հարեմ տարան:

1938

## Կ Հ Զ — Կ Ա Լ Ա Ս Ի

(Լեզնի)

1

Կասպիական ծովի ափին,  
Մռայլ, վորպիս ծեր մի մոլլա,  
Կանզնել ե նաև՝ կըզ—կալասին  
Ամոթահար տեսքովն իրա:

Ծովն եր հիշում միախն վոր կա  
Մի պատմություն նրա մասին,  
Մեկ ել ինքն եր տիսուր վկա՝  
Ամոթահար կըզ—կալասին:

Բայց մի զիշեր ծովը լուսնին  
Պատմում եր յերը զրա մասին,  
Ափ շպրտեց զազանին այդ խոր  
Չարաճնի մի քնքուշ հով:

Յեկ պատմվեց հազար բերան,  
Հազար մարդիկ իրար ասին,  
Ու իրրհ հուշ այդ պատմության,  
Մնացել ե կըզ—կալասին:

1

Ասում են յեղել ե մի խան,  
Ապրել ե շքեղ պալատում,  
Յեղել ե և տեր և իշխան,  
Այժմյան բազու քաղաքում:

Փալատում նըա՝ մարմարե,  
Ու վարպետ մասների նախշած,  
Լույսերը յերբեք չեն մարել  
Յերսեմ մինչեվ լուսաբաց:

Ունեցել ե հարեմ՝ գլուխատան,  
Կանայք՝ ջաննաթի փերի,  
Հարեմում մինչև սուփ-ազան՝  
Զի լոել մըմունջը թառի

Եղել ե այնտեղ լսրախճանք,  
Եղել ե քեֆ ու խնդություն,  
Գիշերը՝ վայելք ու տրփանք,  
Եղեկը՝ թմրիք, քաղցր քուն:

2

Սիրուն ե յեղել թխաչյա  
Մի հատիկ աղջիկը խանի,  
Մարմինը մետաքսե խալիչա,  
Ժպիտք՝ ծաղկոցն իրանի

Բիրերը՝ շահանու գիլա,  
Հոնքերը՝ յուսնի մահիներ,  
Մարմարե այտերի վրա  
Վոնց վարդի շվաք ընկըներ:

. . . Սիրել ե խանը աղջիան,  
Սիրել գաղանի, իր հոգում,  
Այսպես կին՝ Դորանը վկա,  
Չեր յեղել նույնիսկ ջաննաթում:

Սպասել ե խանը տարիներ,  
Սպասել ե՝ կիրքը միշտ արթուն,  
Բայց մի որ՝ ել չի համբերել,  
Չիտացել տիրել իր հոգուն:

Ուզել ե, վոր գըկի աղջկա  
Իրանը հասուն, մարմարի,  
Ու կըծքի նոների վրա՝  
Իր կըքի հրդենը մարի:

Աղջիկը յեղել ե հասուատ,  
Անարգել ե արարքն իր հոր,  
Ու հետո՝ ծեր խանը վհատ,  
Տվել ե վճիռն իր հզոր:

—Մտածիր,—ասել ե նըան,—  
Մտածիր մինչև առավոտ,  
Թե չե կըաշեմ շան նման,  
Հարճի պես, լիբր ու անամոթ:

Ու նստել ե մինչև լուսաբաց  
Աղջիկը աչքերը լեցուն,  
Ընկերը ծովը փրփրած՝  
Լուսնյակի մահիկը ծոցում:

3

Եղել ե լուսաբաց ու աղի,  
Բացվել են վարդերը բուլոր,  
Աղջիկը անհույս, անարե,  
Խոնարհվել ե առաջը իր հոր:

Ասել ե՝ ծովի մեջ սիրուն  
Խնձ համար շինիր աշտարակ,  
Ասել ե՝ վոր շատ ե սիրում  
Յերազել ջրերի կանչի տակ:

—Եեկ հետո,—ասել ե նըան  
Աղջիկը կսկիծը սրտում,—  
Տիրակալ դարձիր և իշխան  
Աղջկադ կյանքին ու հոգուն:

Նղացել ե ճողին ծեր խանի,  
Կանչել ե բաննա ու փայտ,  
Մհմարներ ե կանչել իրանից,  
Վոր ծովում շինեն մի կալաւ,

Ծովի գեմ, յերես առ յերես,  
Ադիկը ականջի ջրերին,  
Վոր լինի չքնաղ, լուսաղես  
Աստղերի ու ծովի սիրելին.

4

Ասում են՝ հաջորդ առավոտ,  
Յեկել են մարդիկ հողագույն,  
Դեմքերը վառ ու արեստ,  
Ցահլաներ համառ, աննկուն.

Քրտինքը գարձել ե հեղեղ,  
Խառնվել ջրերին ծովի  
Մարդիկ են ընկել ու մեռել,  
Մասուներ մատնվել սովին

Ու մի որ ծովի մեջ սիրուն,  
Կանգնել՝ շենքը բարձրաբերձ,  
Գեղեցիկ աղջկա սիրուն,  
Աղջկա Աշտարակը մեծ:

Պատմում են, վոր հենց այդ գիշեր,  
Յերբ իջել ե մութը աղամա,  
Վառել են այնտեղ բյուր լույսեր,  
Նորակերտ կալայի վրա:

Աղջիկը յեղել ե արտում,  
Յեղել ե հուզված ու մոլոր,  
Կոկիծը ու լացը սրտում,  
Վոնց աշնան անպամած մի որ:

Յեղել ե կալայի վրա,  
Ու նայել աստղերին, աշխարհին  
Նետել ե մարմինը իրա  
Իր սիրած կապոյտ ջրերին.

Այդ որից անցել են գարեր,  
Գահեր են գլորվել չկան,  
Վառվել են լույսեր ու ջահեր,  
Շատ ջրեր են հոսել կչկան:

Պակել են ջրերը ծովի,  
Աշտարակը թողել ցամաքում,  
Ծնվել ե ուժեղ, կորովի  
Դասակարգը Բագու քաղաքում:

Ծնվել ե մի նոր թրքուհի,  
Վոսկեվարս արև նորածագ,  
Վոր շահ ու խանից ահ չունի՝  
Արեի վոսկի լույսի տակ:

1920

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ Ա Ց Ն Ե Ց Ի Ց

Կանգնած ե մենակ մի յեղևնի,  
Հյուսիսում մի մերկ բլրի վրա,  
Ննջում ե նա լուռ, սառցի, ձյունի՝  
Ճերմակ ծածկույթն ե պատել նրան.

Յերազում ե մի արմավենի,  
Վոր արևելքում այն հեռավոր  
Կիզիչ ժայռի մի կողին հիմ՝  
Թախծում ե լոիկ ու մենավոր...

Հ Ա Յ Ն Ե Յ Ի Ց

ի՞նչ ե ուզում շիթն արցունքի,  
զբ վոր նայվածքս ե պղտորում,  
իմ աչքի մեջ նա մնաց յետ,  
նա մնաց յետ հին որեցում.

նա ուներ շատ փայլուն քույրեր,  
վոր հոսել են բոլորն արգեն  
իմ տանջանքի. ինգության հետ,  
Գիշերվա մեջ ու հողմի դեմ

Յեվ աստղերն են հոսել կապույտ  
Յեվ հոսել են մշուշ ինչպես,  
Վորոնք խինդն ու տանջանքը այդ,  
Թափանցեցին սրտիցս ներս

Ա՛խ, իմ սերը հոսեց նույնիսկ,  
Հոսեց, ինչպես դատարկ մի շունչ,  
Արցունք իմ հին ու մենափոր,  
Հոսիր նույնպես դու անմռունչ:

Հ Ա Յ Ն Ե Յ Ի Ց

Ձեռքդ զիր սրտիս, քաղցր իմ սիրելի,  
Լսում ես ինչպես բախում ե ելի,  
Աղբում ե այստեղ փայտագործ մի չար,  
Շինում ե նա հար դագաղ ինձ համար:

Գիշեր ու ցերեկ բախում ե, թակում,  
Վաղուց ե անքուն աչքս չեմ փակում,  
Ա՛խ, շտապեցեք, փայտագործ վարպետ,  
Վորապեսզի շուտով քուն մտնեմ հալիս:

## Գ Ր Ե Ն Ա Դ Ա

(Մ+ Սվետլովից)

Պնում եյինք շարքով,  
Սյանում մարտերում,  
Յել օխնձորից յերգը  
Պահած ատամներում,  
Ա՛խ, յերգը, այդ յերգը  
Պահում են մինչ հիմի  
Կանաչները մատղան  
Քարերն տափաստանի

Բայց այլ մի, այլ յերգ ե  
Յերկրի մասին հեռու  
Իմ ընկերը իր հետ  
Թամրի վրա կրում  
Յերգում ե, զիտում նա  
Յերկիրն մտերիմ.  
— Գրենադա, Գրենադա,  
Գրենադա դու իմ:

Նա յերգը, այդ յերգը  
Անգիր, անգիր սերտեց...  
Տըղային վնրտեղից  
Այդ թախիծը պատեց,  
Ասա՛, Ալեքսանդրովսկ,  
Պատասխան տուր Խարկով,  
— Վաղմաց ե յերգում եք

## Հ Ա Ց Ն Ե Ց Ի Ց

Վարդը վառ, շուշանը, աղավնի ու արև  
ինձ յերբեմքն սիրո բերկամնքով են վառել.  
Ել չեմ սիրում նրանց, սիրում եմ մի եյակ.  
Յեվ փոքրիկ, և նրբին, և մաքուր ու միակ,  
Նա ինքն ե վողջ սիրո աղբյուրը վարարեղ,  
Յեվ վարդ ե, շուշան ե, աղավնի ու արև.

Սպանական հանգով.  
Ասա, Ուկրաինա',  
Հաճարի մեջ չի այս  
Տարաս Շեմչենկոյի  
Փափախը բնկած,  
Վրասեղից այդ յերգը,  
Ըսկեր մտերիմ.  
— Գրենադա, Գրենադա,  
Գրենադա դու իմ.

Ասել հապաղում ե  
Յերազող գյուղացին.  
Յեղայր իմ, Գրենադան  
Գրբուժ կարգացին  
Գեղեցիկ անուն ե,  
Մեծ պատիվ ե դա,  
Գրենադյան շրջան  
Սպանիայում կատ  
Թողի յես իմ հյուզը,  
Գնացի կռվի—  
Գրենադյում հողը  
Գյուղացուն տրվի  
Մնաք բարով, առւն իմ,  
Ծընող, մտերիմ  
— Գրենադա, Գրենադա  
Գրենադա դու իմ.

Թոչում, տենչում եյինք,  
Վոր սովորենք արագ—  
Գիտությունը կովի—  
Ռումբի յեզուն կրակ  
Բարձրացավ արեր  
Ու իջավ կրկն,  
Հոգնեց ստեղներում  
Մինչեւ անգամ ձին.

Բայց «խնձորի» յերգը  
Աղեղով տանջանքի,  
Խփուժ եր ջոկատը  
Ժամանակ—ջութակին  
Ապա մոր ե յերգը,  
Ըսկեր մտերիմ.  
— Գրենադա, Գրենադա,  
Գրենադա դու իմ.

Յեվ խփած մարմին մի  
Գետին ընկավ ահա,  
Ըսկերն առաջինը  
Թողեց թամբն իրաւ  
Տեսայես լուսինը  
Թերվել եր գեղ նա,  
Յեվ մեռած շուրթերը  
Հձեցին Գրենա...  
Գնաց իմ ըսկերը  
Հեռու մի յերկիր,  
Մթին մի ճամբա, ուր  
Տարավ յերգը իր.  
Զիմացանք այդ որից  
Յերկիրն մտերիմ.  
— Գրենադա, Գրենադա,  
Գրենադա դու իմ.

Զիմացավ ջոկատը  
Կորուսան զինվորի,  
Ու յերգեց մինչեւ վերջ  
Յերգը «խնձորի».  
Ըսկան միայն կամոց  
Վերջալույսի թալշին  
Անձրին արցունքի  
Շիթերն առաջին  
Յեվ հորինեց կյանքը

Նոր յերգելը իրա,  
Հարկավոր չե, տղերք,  
Թախծել յերգի վրա:  
Թողեք դա, թողեք դա,  
Տղերք մտերիմ,  
Գրենազա, Գրենազա,  
Գրենազա դու իմ:

1984

Վ Ե Ր Զ Ե Ր Գ

Յերգեր, յես եմ ձեր ստեղծողն աչա,  
Կյանք եմ տվել ձեզ հույզով իմ սրտի,  
Վորովեսպի լինեք դիմացկոն, անահ,  
Յեվ չերժ իմ սիրտը ձեր մեջ չըրտի:

Յեվ ինչպես փարթամ բնությունը վեհ  
Իր միլիոնավոր արարածներին  
Պաշտպանության բյուր գենքեր և տվել,  
Վոր վտանգների չլինեն գերի,

Յես ել տվել եմ ձեզ լավ կամ թե վատ  
Պաշտպանության գենք—պատկեր ու հանգեր,  
Տվել եմ ձեզ իմ հույզերը առատ,  
Քանի գեռ նըանք իմ մեջ չեն հսնգեր

Աղրեցեք կյանքում՝ կարող եք յեթե,  
Խնձնից ոգնություն չուզեք յերբեք,  
Իմ նեղ որերում ոգնում ե միթե  
Նա՝ վու ինձ կյանք ու արկ և տվել:

1984

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### 1. Այս ձերմակ թղթի վրա

#### Ի ՑԵՐԿՐԻ ՑԵՐԳԵՐ

|   |    |
|---|----|
| 2. Քարերիդ յերգը յերգեմ . . . . .             | 11 |
| 3 Բալլագ Խորհրդային Հայաստանի մասին . . . . . | 12 |
| 4. Ժամացույցը . . . . .                       | 16 |
| 5. Յերկաթալարի յերգը . . . . .                | 18 |
| 6. Պատմություն գրված ժայռի վրա . . . . .      | 21 |
| 7. Տարեգարձի յերգ . . . . .                   | 24 |
| 8. Աճում (Հողմերի գեմ չեն յերերա) . . . . .   | 28 |
| 9. Ճերմակում են մազերս . . . . .              | 29 |
| 10. Քարտաշները . . . . .                      | 30 |
| 11. Նորակառույցը . . . . .                    | 31 |
| 12. Քաղաքը (Այս քաղաքում) . . . . .           | 33 |
| 13. Ո՛, քաղաք իմ . . . . .                    | 34 |
| 14. Փոխվել ե քո պատկերը . . . . .             | 36 |
| 15. Կոմունարներ . . . . .                     | 37 |
| 16. Քաղաքի հետ . . . . .                      | 40 |
| 17. Ժամապահը . . . . .                        | 42 |
| 18. Խնդություն . . . . .                      | 44 |
| 19. Շենքը . . . . .                           | 46 |
| 20. Դամբանական . . . . .                      | 47 |
| 21. Լույսերը . . . . .                        | 49 |
| 22. Կատ նա . . . . .                          | 50 |
| 23. Անվերնագիր                                |    |

|                         |    |
|-------------------------|----|
| 24. Առավոտ              | 51 |
| 25. Կակաչը              | 52 |
| 26. Հացի յերգը          | 54 |
| 27. Առաջին որդանավին    | 57 |
| 28. Յերգ հաղթանակի      | 58 |
| 29. Ասավարս պատմություն | 62 |
| 30. Պատգամափոքը         | 66 |
| 31. Յերկու յերգ Լենինին | 68 |
| 32. Կտակ                | 69 |
| 33. Իմ յերգերը քեզ      | 71 |
| 34. Յես իշնում եմ ձորը  | 72 |

### II ՅԵՐԳԵՐ ՀԱՐՎԱԾԱՑԻՆ ՆԵՐԻՆ

|   |    |
|---|----|
| 35. Աշխարհում կը լինի շողշողուն մի գարուն | 75 |
| 36. Հարվածայինները                        | 76 |
| 37. Ազմկում են քո հոգում                  | 80 |
| 38. Ցես քեզ իմ մեջ եմ զգում               | 82 |
| 39. Հոգիս փովեր                           | 83 |
| 40. Ունկնդիր իմ յերգին                    | 84 |
| 41. Յերգ կառուցման                        | 85 |

### III ԽԱՌԵ ՅԵՐԳԵՐ

|                           |     |
|---------------------------|-----|
| 42. Որացույցը             | 89  |
| 43. Պոետը                 | 90  |
| 44. Դաշնականար յերեխա     | 92  |
| 45. Գիշերամուտ            | 93  |
| 46. Վայրկյանը             | 94  |
| 47. Աշնանային             | 95  |
| 48. Լուցկի                | 97  |
| 49. Մանուկները            | 98  |
| 50. Խոհ                   | 100 |
| 51. Խորհուրդ              | 102 |
| 52. Դու վորսմի նման չար   | 103 |
| 53. Վոչ վշտացիր           | 104 |
| 54. Ինչ չահել ե Ֆիրդուսին | 105 |

|                                     |     |
|-------------------------------------|-----|
| 55. Շիրիմը                          | 106 |
| 56. Յերկու յերգ Նազիկին             | 107 |
| 57. Զան տղա                         | 109 |
| 58. Ջունը                           | 110 |
| 59. Ծաղիկները քուն կմտնեն           | 111 |
| 60. Գրիչ                            | 112 |
| 61. Յերգիս հետ                      | 113 |
| 62. Յերբ չեմ լինի յես               | 115 |
| 63. Փլուզում                        | 116 |
| 64. Խաղալիքը                        | 117 |
| 65. Հենակները                       | 118 |
| 66. Վերջալույսը                     | 120 |
| 67. Վոսկին                          | 122 |
| 68. Կման վառ արեց                   | 123 |
| 69. Լեռներով                        | 124 |
| 70. Գեղջ. յերգեր (Կոմունով են տղեն) | 126 |
| 71. Իմ կյանքը քարոտ ճամփա           | 127 |
| 72. Լինեցի, հով լինեցի              | 128 |
| 73. Բատրակ լինի, լավ լինի           | 129 |
| 74. Են տարի                         | 130 |

### IV ՊՈԵՄՆԵՐ

|                         |     |
|-------------------------|-----|
| 75. Հերյաթ Շիրակի մասին | 135 |
| 76. Նախաժինը            | 144 |
| 77. Լավ որերի համար     | 150 |
| 78. Պահակը              | 156 |

### V ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊՈԵՄՆԵՐ

|                    |     |
|--------------------|-----|
| 79. Իրանի          | 167 |
| 80. Գյունարա       | 191 |
| 81. Գյուլիսանդա    | 196 |
| 82. Թառանի մորմոքը | 199 |
| 83. Կըզ-կալասի     | 201 |



VI ՊԱՐԳՈՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

84. Հայուելից . . . . . 209  
85. " . . . . . 210  
86. " . . . . . 211  
87. " . . . . . 212  
88. Գրենադա—Մ. Սվետլովից . . . . . 213

VII ՎԵՐՋԵՐ

89. Ցեղպեր յես եմ ձեր . . . . . 219

Դիրքը ենթարկվել է ախտահանման

20/Մ - 42 թ.

Հոչժայաց 33

ԳԻՆԵՑ Ո.  
ԿԱՐԱՎ 1 Բ.

53927